Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
1692

шкаф.
полка.
№ 21

№ 79.

24 Պատրաստված

ՀԱՅՈՑ ԱՕԳԻ

ՈՒՍՈՒՄՆԱՍՈՒՈՒԹԻՒՆԸ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԸ

ԵՒ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ

1999

1255

—

Աշխատասիրութեամբ Վիրջը-Կինտանոյ

ՊԵՏԱԿԱՆ ... ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿ- ...
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

Ի Պատկանեան Տպարանումը

1865.

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 30 Іюля 1864 года.

91692-ω

2 р. 1697

ՀԵՐԴ ՄԵԾԱՊԱՏԻՒ ՅՈՐԴՈՒԹԵՍՆ

ՏՈՀՄԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՅԻՈՅ

ԱՌԱՔԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԻ

եւ

ԱՍՊՆՏԻ

ՅԱԿՈԲԱՅ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Պ. ԽԼՃՃԵՆԵՑ

ի Նշան

շնորհակալութեան

ՆՈՒԻՐԷ

Հեղինակն

Աղեծապատիր Աղգաւէր

Արեն.ք մանկութեան օրերից ճանաչելով Ձեզ սխրագործ՝ գիտենք համանգամայն Ձեր բարեմիտ ուղղութիւնը դէպ ի հասարակաց օգուտը, Ձեր ճշմարտախրատութիւնը և առ ազգային բարին անխառտոր ձրգտմունքը, և առաւել քան զամենեսին ուրախ ենք Պատխարհամուութեան այդ օրինակ ընտրութեան, և վստահ ենք՝ Ձեր զանազան ազգօգուտ ձեռնարկեալ գործերի աջոգակ և առատ արդիւնաբերութեան վերայ։

Այս փոքրիկ գիրքի մէջ-ն, որն որ նուիրում ենք Ձեր՝ մինչև այսօր բարի և այսուհե-

տեւ-ին ազգի լրբութեան մէջ
արժանաւոր հռչակելի անուանի,
մեռեալ մերոյսանեն՝ ցոյց տուին
այն փորձերով ստուգած և ա-
պահոված շաւիղը, որով պիտի
կատարուի Հայկական մանկանց
մրցաւորական յառաջադիմու-
թիւնը, եթէ չենք կամենում
հորին դրրիլ հոյն անհամար
անձնատաք սխալանքների մէջ,
որոնց հոսանքներում մինչև
այսօր ընկղմած պտոյտ են գա-
լիս մեր ստուգալ ազգի ա-
մենաթշուառ մանկունքը, ա-
կանջ դնելով խմաստակ և թե-
րուս ճոռոմաբանների։

Այս թէ դրդեալ պատճառ-
ներէ այսուհետև և ընդարձա-
կուելու լինին այն բծախնդիր
բերանները, մեռեալ համոզուած
պիտի լինինք յառաջուանէ, որ
այն և հոյն խելապատակի անձ-

կուլթեան արդասիքն են, և ա-
հա այսպիսիներից մեզ չանա-
ցին այս գրքուկի մէջ զգու-
շացնել մերազնեայ մանկանց ծը-
նողներին, այսքանը բաւական
համարելով հասկացողաց։

Ուսումնասիրություն

Ուսումնարան

եւ

Ուսուցիչք

Հայոց Ազգի։

ՀԱՅՈՑ ԱԶԳԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ, ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՔ ԵՒ ՈՒՍՈՒՑԻՉՔ.

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ.

ԱՄԵՆ աշխարհի մէջ, ուր էլ-որ ցան ու ցիր վառուած է՝ թէ՛ բարեբաղդութեամբ և թէ վատաբաղդութեամբ, մեր Հայոց ազգի բաղմութիւնը, որոց մէջէն պիտի Հանուին Հարիւրէն մէկ, Հազարէն երկու ուսմանց և գիտութեանց աշակերտութիւն անողները, որոց թիւը՝ Կոնստանտինուպօլսի զանազան կրթարաններու, Վենետիկի և Իզմիրի Համալսարաններու, Թիֆլիզի Ներսիսեան դպրոցի, Մոսկուայի Լազարեանց Ճեմարանի, Փարիզի Մուրատեան վարժարանի և այլոց ապաստարութեամբ բաղմացաւ այս 1800 թուականէն յետոյ. Հայոց ազգի բաղմութիւնն եմ ասում, որոց մէջ մտքովս միայն այն խաժամուժ ամբոխն եմ իմանում, այն ռամիկ խուժանն եմ Հասկանում, որոնցմէն որ լինում են նախարապանք, ոչխարապանք, բեռնակիր մշակք,

վարուցանք անող հողագործք, պարտիզ-
պանք, այգէպանք, արհեստաւորք, ջրկիրք,
քարահատք, աղիւսագործք, դարբինք, պը-
ղընձագործք, կօշկակարք, մաշկակարք, հիւ-
սունք, առաղձագործք, որմնադիրք, և ու-
րիշ այսպիսի առորագաս զբաղմանց մէջ օր
անցուցանողք, օր դատող, օր ուտող մարդիկ. Հայոց ազգի այս մեծաքանակ բազմու-
թիւնը, ամենեքեան էլ լաւ գիտենք, որ ո՛չ թէ կարդացել են կամ սովորել են Ֆի-
զիոլոգիա կամ բարագիտութիւն առած ուսումն*, այլև այն գիրքը տեսած չեն,
որովհետև դեռ Հայերէնը չկայ (գոնէ ես դեռ ես տեսած չեմ), և անունը անգամ
լսած չեն. բայց մէկ քանի խօսք աւանդու-
թեամբ ունին մէջերը պահած, որ եթէ լաւ
մտադրութեամբ քննենք, կըտեսնենք որ
այժմեան ծաղկեալ Ֆիզիոլոգիայի անժըխ-
տելի վաստերէն մէկն են։

Ֆիզիոլոգ Հայը՝ երբ որ տեսնէ մէկ մարդ

---

*) Ֆիզիոլոգիա, բարագիտութիւն, կամ բարեգիտութիւն, ընագիտութիւն, կամ ընախօսութիւն, քննութիւն զգալի էակաց վրայ, հմտութիւն որպիսութեան կենդանեաց և բուսոց, և տպասաւորութեան մարդկային կենդանական կազմութեան զգայարանական գործարանաց։ Մենք այստեղ թէպէտ Ֆիզիոլոգիա բառի Հայերէնը դրինք, բայց այս յօդուածի մէջ պիտի Ֆիզիոլոգիա գործ ածենք, քան թէ բարագիտութիւն կամ ընագիտութիւն։

խելօք, ղգօն, արթուն, անպատճառ կ՚ասէ թէ գլուխը լիքն է, կամ գլխուն ղողջ է։ Ապա երթէ տեսնէ մէքիչ պակասամիտ, կ՚ասէ յուն ղողջ է, կամ ղողջը պակաս է։ Հաշտարարանցի Հայը նոյն խօսքը բանեցնում է այլ կերպով։ թերամտի համար ասում է՝ մէքիչ (ղողջը) ջրալի է. որն որ թուխլիզցին ասում է՝ նօսր է։ Նախիջևանցին պակասամտի համար ասում է՝ մինը ջրէնէ է, կամ գլուխը պոռոտէ է, կամ՝ խաքան պոշ է, կամ վէրնոպոնը պարոտ է։ Ղարաբաղցին էլ է ասում. ղէղը պոռոտէ է։ Հայաստանցիք առհասարակ ամենքն ասելու տեղ՝ շրջաբանութեամբ (մետաֆորոյով) ասում են՝ պոռոնը պոռոտէ է։ թուխլիզցիք էլ են ասում՝ գօգնէն պոռոտէ է։ Փիշխուլեան ծերունի տէր Յոհաննէսը ունն էլ որ հանդիպէր, հնարը գտնէր՝ մէկ գլուխը կըդնէր երկու ափի մէջ և կըշարժէր, և լեզուով ոչ քիմքով այնպէսի ձայն կըհանէր, ինչպէս որ լաղ. ձուի կամ դատարկ դդումի կամ ձմերուկի մէջէն կըլսվի։

Հաշտարարանցիք կամ Ղզլարցիք, որ ըստ մեծի մասին Հայաստանի կամ Պարսկաստանի կողմերէն եկած ժողովուրդներ են, անխելքին համ ղաչաղ են ասում, համ պըպոռ, որ էլի նոյն գօգնէն է։ Օսմանցոց Հայերը խելօքին ճանպազլուխ են ասում, իսկ

անխելքին կամ թերթևամտին՝ ԽԵԼԽԱՓԼՈՒԽ։ Սոքա էլ նոյն դուշն են ակնարկում, ինչով որ դլուխը կարող է կամ ծանր լինել կամ թերթև։ Իսկ հոգոփլուխ խօսքը ցոյց է տալիս այն նոյնպէս մէկ նոր երևանակաւ խօսքց, որն որ Նոր Նախիջևանցիք արտայայտում են ուրիշ ձևի տակ, ասելով՝ խոքոն հոգոփ է։

Շատ հին ժամանակներէ հետէ է մտած Հայոց ազգի մէջ այս կարծիքը, թէ դլխի ձևերէն, մեծութիւնէն, պստիկութիւնէն, երկայնութիւնէն, կարճութիւնէն, և այլ տեսակ կազմակերպութիւնէն կարելի է ճանչնալ մարդոյ ինչպէս լինելը։ Եթէ դորա հետ խառնված չլինէր մի քանի յայտնի խաբէական կարծիքներ, համարձակ կարելի էր ասել, թէ Հայերը քանդ ֆիզիոլոդիայի ծնունդը առաջէլ ունեցել են ֆիզիոլոդիական տեղեկութիւններ մարդու ներքին և արտաքին կենդանական գործարաններու ներգործութեանց համար։

Ուրեմն շատ հին ժամանակվան կարծիք է Հայոց մէջ, որն որ այժմեան ֆիզիոլոդիան համարձակ ասում է (ահա՛ քեզ վկայ Գաթերֆաժ, Ռիթթէր, Ֆոխթ, Գարվին), թէ մարդկային ազգի տեսլի կամ պակաս գիտութիւններու մէջ, կենցաղագիտութեան մէջ, կենցաղակրթութեան մէջ, առաջա-

նալու, յառաջադիմութեամբ և լուսաւորութեամբ զարգանալու թէութիւնները շատ անգամ և շատ կերպով նորա դլխի գագաթի պայմաններէն են կախուած։ Գագաթի ոսկորի կամ սկաւառակի ձևը, դլխի ուղեղի խելապատակի կազմութիւնը և փլթթումը կարող են յայտնի ցոյց տալ թէ մէկ անձն կամ մէկ ազգ որքան է կարող յառաջնալ իմացական և մտաւոր ունակութիւններու մէջ, որովհետև յայտնապէս տեսնում ենք, թէ այն ազգերը, որոց որ ուղեղի պարունակութիւնը շատ է՝ խելօք են, քաղաքակրթութեան յարմար են, և լուսաւորութեան մէջ յառաջադէմ են. իսկ այն ազգերը՝ որոնց որ ուղեղի պարունակութիւնը սակաւ է, քան զաւակինան ցած են մնացել թէ լուսաւորութեանց մէջ, և թէ ուրիշ ամեն յառաջադիմութիւններու մէջ։

Արդէն ստուգված է, որ հոգագունեի բնակիչներու մէկ զմէկու հետ փոխադարձ յարաբերութեանց և զարգացմանց մէջ՝ չափազանց մեծ նշանակութիւն ունի սերունդներու (սահմանք) զանազան անատոմիական կամ անդամաշնական և ֆիզիոլոգիական կազմութիւնը։ Մեր Հայոց ազգի առջևը շատ անգամ են գլորել՝ ոսկի խնձորի նման՝ մարդուս դլխի ուղղի և գագաթի ընկաւա-

ռակի խնդիրները այլ և այլ եղանակներով. բայց ոչ ոք և ոչ մէկ անդամ արած չէ այս առարկութիւնը, թէ արդեօք Հայոց ազգի ընդհանուր աշխարհի տարածութեան մէջ ցրուած վիճակումը՝ գլխի ուղեղը և գագաթի ոսկրը ի՞նչ դրութեան մէջ է, և ո՞վ է քննել այն, ո՞վ է համեմատել բաղդատել ուրիշ ազգերու կամ ուրիշ սերունդներու (ռասերու) գլուխներու հետ, և ի՞նչ է ճանաչել, և ի՞նչ է գտել, և ի՞նչքան է իւր հասկացածէն հաղորդել աշխարքին, ինչքա՞ն է կամեցել իւր յայտնագործութեամբ օգնել և օգուտ բերել իւր համազգեաց, կամ իւր իսկ անձին համար ո՞րքան է օգուտ քաղել, ճանաչելով թէ ահա՛ մեր ազգի մտաց կարողութիւնը այսքան է, ուրեմն նրանէն միայն այսքան պիտի պահանջել, և այսքան բերն դնել, և քան զայս աւելին անհնարին է։

Իրաւի ծանրակշիռ տեղեկութիւն է գանազան ազգաց սերունդներու գագաթի ձևը և գլխի ուղեղի կազմութիւնը և փիթիւնն այնքան ճիշդ գտնելը, մինչև որ մարդ կարողանայ նրանով սահմանել, թէ ահա՛ այս է գլխաւոր պատճառը, որ մէկ ազգ տիրապետած գոլով աւելի մեծ իմացական կամ մտաւորական ունակութիւններու, միւս ազ-

գերու վրայ ստացաւ գերազանցութիւն կենցաղակրթութեան կամ բարքի ու վարքի և արարողութիւններու մէջ, նրանց հպատակեցրուց և քիչ քիչ իրան համապգի շինեց։ Որովհետև զանազան ազգաց և սերունդներու գլխի սկաւառակի ձևի և պարունակութեան քննութիւնը (թէ և տակաւին շատ թերակատար են այս ամենահարկաւոր տեղեկութիւնները), աւելի քան զչափն դիւրութեամբ են առաջնորդում, որ մարդ կարողանում է ազգայնութեան կազմակերպութիւնը հասկանալ։ Եթէ մէկ առանձին ազգի մէկ հատ գաւառի բնակչաց դագաթները մէկ զմէկու մօտ դնելով երկայնատող շարակարգութիւն շինես, և մէկ զմէկու հետ համեմատես, այն գլուխների սկաւառակներու ձևերը թէ մէկ մէկէ շատ զանազան են, ցոյց պիտի տան՝ որ այն գաւառի բնակիչները շատ օտար ազգաց սերունդներու հետ խառնուած են. իսկ թէ զանազանութիւնները շատ չեն, կընշանակէ, որ սերունդը կամ՝ ցեղը մաքուր է, և օտար ցեղերու հետ աւելի խառնուած չէ։

Այսպէս Բրոչ քննիչի՝ հին ու նոր գերեզմանատուններէն փորած հանած դագաթներու սկաւառակների քննութեանց մէջ, երկայնագլուխ, միջակագլուխ, կարճագլուխ

սկաւառակներուն շարքերումը կարելի է յայտնի հետազօտել Փարիզի բնակչաց խառնակութեան տարածութիւնը ամեն մէկ ժողովրդեան դասակարգի, ո՛չ թէ միայն մշակ խաժամուժ խուժանի բաղմութեան, կամ բարձրատոհմ մեծամեծաց գերդաստաններու, այլև զանազան ցեղերու ազգաց ամբոխներու, որոնք որ մտել են Փարիզի բնակիչներուն կազմութեան մէջ, թէ Կելտեան և Հռոմէական, և թէ Գերմանական և Սլաւոնական ազգերու զանազանութիւնը, այն հին քաղաքի հիմնարկութեան օրէն սկսած մինչև մեր ժամանակը: Դեռ քանի՞ ժամանակ է, որ Փիզիոլոգիայն մէկ նոր յայտնագործութեամբ սկսել էր սկաւառակի ասկրի ծակոտեաց ձևերով դուշակել մարդու ընդարձակ բնաւորութիւնը և դէպ ի չարն կամ ի բարին հակամիտութիւնը. այսինքն այն ծակոտեաց դրութեամբ յանձն էր առնում ճանաչել, թէ արդեօք այն մարդը խաղաղասէր էր, թէ կռուասէր, առաքինի՞ էր թէ մոլի, արդեցո՞ղ էր թէ լուրջ, ունէ՞ր հակամիտութիւն առ այս ինչ կամ առ այն ինչ զառածմունք, դո՞ղ էր, արիւնռա՞ւշտ էր, ագա՞հ էր, հպարտ էր, բղջախո՞հ էր, որովայնամո՞լ էր, նախանձո՞տ էր, և այլն:

Արդ՝ երբ որ այս ճանաչմանովով քննվում

են զանազան ազգաց սերունդներու գլխի սկաւառակներու պարունակութեան մեծութիւնը կամ փոքրկութիւնը, յայտնի երևում է, թէ ինչո՞վ կամ ի՞նչ օրէնքի զօրութիւնով մէկ ազգ ստացաւ միւս ազգի վրայ տիրապետելու կարողութիւն, նրան հպատակեցրուց, նրան տուեց քաղաքակրթութիւն, և ցոյց տուեց լայնածաւալ ունակութիւններ, և արդասիք՝ թէ՛ իւր գաղթականութիւններից քաղաքներ, գեղեր առաջացնելու, և թէ՛ իւր այս գաղթականութիւններու մէջ լաւ լաւ կանոններ, կարգեր, ձեւեր հաստատելու ժամանակը, մինչ որ ուրիշ ազգերը չըկարողացան անգամ իրանց ցեղապետական անկախութիւնը պահպանել։

Այսպէս ահա՝ այս հետազօտութիւններու հիմանց վերայ հասկացվում է, թէ ի՞նչ կերպով Անգլիացիք, ունենալով իրանց գաղաթի սկաւառակի մէջ տարածութիւն կամ պարունակութիւն 1,572$^{98}/_{100}$ խորանարդ հարիւրաչափ (ֆէնինգեր) պիտի անշուշտ տիրապետող դառնային Աւստրալիացոց նման ազգերու, որոց սկաւառակի պարունակութիւնն է 1,228$^{27}/_{100}$ խորան՝. հարիւրա՝. կամ ո՛ր և իցէ Պոլինեզացոց և Հոթթէնթոթացոց վրայ, որոց սկաւառակի պարունակութիւնը է 1,230. խորան՝. հարիւր՝։

Նոյնպէս հասկացվում է՝ թէ ինչ պատ-
ճառով Անգլո-սաքս Ամերիկացիք, որովհետև
ունին 1,474$^{68}/_{100}$, խոր՝՝. հարի՝՝. սկաւառակի
պարունակութիւն, որքան և հպատակել են
Ամերիկայի բնական և տեղական հանգա-
մանքներու ազդեցութեան, սակայն այսու
ամենայնիւ տիրապետութիւն են անում վայ-
րի Հնդկաց և նոցա նման ազգերու վրայ,
որոց որ գագաթի սկաւառակի տարածու-
թիւնը է 1,376$^{71}/_{100}$. խոր՝՝. հար՝՝։

Հասկացվում է, թէ ինչ պատճառաւ
Անգլիացիք՝ որ ունին սկաւառակի պարու-
նակութիւն 1,572$^{98}/_{100}$, խորա՝՝. հար՝՝. Ֆրան-
սիզք՝ որ ունին 1,461$^{83}/_{100}$ էն սկսած մինչև
1,517 խոր՝՝. հար՝՝. Գերմանացիք՝ 1,534$^{127}/_{1000}$
խոր՝՝. հարիւր՝՝. սկաւառակի պարունակու-
թիւն, կանգնել են կենցաղակրթութեան և
մարդկային ամեն տեսակ առընչակցութեան
և գործունէութեան գլխին, դառել են մեծ
դատարակ, լուսաւորիչ և ձեռամբաձու
ամեն միւս ազգերու համար, զորօրինակ
Կաւկասեան սերունդի, որոյ գլխի սկաւա-
ռակի պարունակութիւնը է 1,427 խոր՝՝. հար-
իւրաչ՝՝. Յիշելով անգամ այնպիսի ազ-
գերը, ինչպէս են Աւստրալիացիք, Պոլինեզա-
ցիք, Հոթթէնթոթք, Փերուացիք, Մալայցիք,
Վայիեմի Հնդիկք, Էսքիմոսք, Զինումաչին-

ցիք, որոց գլխի սկաւառակի պարունակութիւնը ցոյց է տալիս միայն 1,228$^{27}/_{100}$ էն սկսած մինչև 1,410 խորանարդ հարիւր՝։

Հասկացվում է՝ թէ այս երեք Եւրոպացի ազգերը՝ Անգլիացիք, Ֆրանսիզք և Գերմանացիք՝ ի՞նչ իրաւունքներով են ստացել մարդկային ազգի զանազան ցեղերու և սերունդներու նոր կազմութեան և կենցաղակրթութեան մէջ տիրապետող գործունէութիւն։ Վերջապէս Բրոչ նոյն իսկ հետազօտութիւնները մեզ հասցնում են մէկ նշանաւոր մակարերութեան, կամ մէկ նոր տեղեկութիւն են ընձեռում մեզ, որ՝ կենցաղակրթութեան ազդեցութեամբ՝ սերունդի (—ոչ) սկաւառակի պարունակութիւնը քիչ քիչ ընդարձակվում է։

Այսպէս Փարիզի բնակչաց գլխի սկաւառակի պարունակութիւնը դարերու անցնելն յետո՝ ակնյայտնի լայնացել է. որ եթէ համեմատենք ԺԲ դարու երևելի և հրահանգուած դասակարգի մարդոց գլխի սկաւառակը, որ ունի 1,423,$^{98}/_{100}$ խոր՝. հար՝. պարունակութիւն, ԺԹ դարու նոյն դասակարգի մարդոց գլխի սկաւառակի պարունակութեան հետ, որ ունի 1,461,$^{83}/_{100}$ խոր՝. հարիւր՝. և մանաւանդ Փարիզեցոց Մոլֆէ ասած մեռելատունէն առած գլուխներու դա-

գաթի հետ, որ ունին անգամ 1,517 խոր". հար". այն ժամանակը ակներև յայտնվում է, որ ԺԹ դարու դաղաթները ունին աւելի պարունակութիւն՝ քան թէ ԺԲ դարու կըրթուած և հրահանգուած մարդոց դաղաթի սկաւառակները։

Այլ այս հանգամանքը այժմ մեզ համար մեծարելի է այն մասին, որ ցոյց է տալիս՝ թէ շատ կարելի կամ բնական բան է, որ մէկ սերունդի կամ մէկ ռասի ուղեղը կամ մտաւոր կարողութիւնը՝ յառաջադիմութեամբ զարգանալով, և սերտարար աճելով և ընդարձակվելով զօրանում է այնքան, որ տիրապետում է ուրիշ սերունդի վրայ. ուրեմն սորա հետ միասին պիտի յառաջադիմութեամբ զարգանայ դարերու ընթացքով և մէկ ազգի միւս ցեղին կերպարանափոխ անող բնական ու տեղական հանգամանքներու ներգործութիւնը։ Եւ այս ամենը յայտնի ցոյց է տալիս պատմութիւնը։

Վերջապէս Բիոչի հետազօտութեանց մէջէն նկատելի է և այս փաստը, որ ստորադաս մարդոց կամ աղքատ դասակարգի սերունդի դաղաթի սկաւառակը չէ փոխվում, չէ ընդարձակվում, այլ մնում է նոյնութեան կամ մի և նոյն չափի մէջ դարաւոր ժամանակներով, մինչև այս դասակարգի և սե-

բունդի կենցաղավարութեան և ապրուստի ճանփանները չեն բարդանում, և նրանց չեն ընձեռում կրթուելու, հրահանգուելու, և լուսաւորուելու հնարներ։ Այսպէս փարիզի Des Innocents գերեզմանատան, ուր որ թաղվում էին առաւելապէս աղքատ դասակարգի խաժամուժները, և զանազան սերընդոց մարդիկ, ԺԲ դարէն սկսած մինչև ԺԹ դարը, գաղաթի սկաւառակները ունէին պարունակութիւն միջոցի 1,409$^{81}/_{100}$ խոր''. Հար''. իսկ աղքատ քաղաքացոց ԺԲ դարու սկաւառակները ունէին պարունակութիւն միայն 1,403$^{14}/_{100}$ խոր''. Հար''. մինչ որ ԺԲ դարու հարուստ և ճոխ փարիզցոց գաղաթի սկաւառակները ունէին պարունակութիւն 1,425$^{98}/_{100}$ խոր''. Հար''. իսկ ԺԲ դարու հարուստ և փարթամ և հրահանգուած փարիզցիք, որ թաղուած էին առանձին տապաններու մէջ, ունէին սկաւառակի պարունակութիւն մինչև 1,484$^{23}/_{100}$ խոր''. Հար''. անգամ։

Այս փաստերով բացայայտվում է նոյնպէս և առհասարակ ամեն՝ խեղճութեան մէջ նուաճուած ազգերու բնախօսական և մտաւորական (ֆիզիոլոգիկոինթելլէքթուալ) կարողութեանց և ունակութեանց տկար վիճակն, մանաւանդ այն ազգերու, որ

պատմական օրհասի տնօրէնութեամբ ցրուեն ընկել աշխարքի զանազան կողմերը։

ԳԼՈՒԽ 1.

ԱՅՍ ամեն վերոգրեալ պայմանները եթէ որ բերելու լինինք մեր Հայ ազգի վերայ և սկսինք մեր հիներն ու նորերը հեռագօտութեան տակ դնել, արդարև մեծ դժուարութիւն պիտի քաշինք. բայց առանց այս հեռագօտութեան-էլ՝ համարեա՛ թէ անհնար է այս գործեան հանգոյցի լուծանելը— միշտ պիտի ասնդի մէջ ջուրը դրած ծեծած լինինք։

Մեր պատմարանք դեռ վճռաբար ասած չեն թէ՝ Հայոց ազգի ծագումը ուստի է. ասոյգ Մասիսէն է, ինչպէս որ Մովսէս Խորենացին է ասում՝ Մովսէս մարգարէի միկ խօսքի վերայ իւր ենթադրութեան հիմքը դնելով. թէ՞ Միջագետաց երկրէն է՝ ինչպէս որ Մար-Իբաս Կատինան է աւանդում Նինուէի գրադարաններից հանած ձեռագրի վերայ իւր անկեան վէմը յեցուցանելով, թէ՞ Արեաց կամ Զենդեանց ծագերէն

է սերուած՝ ինչպէս որ այժմեան բանասի-
րական հետազօտութիւններն են ակնար-
կում. կամ Հնդկաց հեռաւոր Հիմալայեան
սարերէն, ինչպէս որ Սանսկրիտացոց լեզուի
նշխարները մեր բարբառի մէջ տարրացած
լինելով մատնցոյց են լինում։

Փոյթ չէ։ Թող Հայկ, Արամ, Զարմայր,
Պարոյր լինին դիւցազնական պատմութեան
սեփականութիւն։ Չէ կարող ոչ ոք զբլանալ
Մեծին Երուանդեան Տիգրանին պատմու-
թեան մէջ այն տեղը, որն-որ արդէն ունի. և
այնուհետև Հայաստանը և Հայոց ազգը Հա
մաշխարհական շրջադարձ անցքերու մէջը՝
ձեռքերն են առնում իրանց դերը, և Հա-
յոց ազգը երևում է Կաւկասեան ազգերու
մէջ. բայց և ընդ նմին պատմութիւնը ու-
րանալ չէ՛ կարող, որ ինչպէս մինչև այն ժա-
մանակ, նոյնպէս և յետ այնորիկ, շատ ո-
տար տարր դաղթականութեամբ եկան ու
խառնուեցան Հայոց ազգի մէջ և ձուլու-
եցան դառան մէկ ազգ, որն-որ այժմ սովորա-
բար ասվում է Հայոց ազգ։ Խառն սերունդ։

Ահեռաց երկրէն՝ Սամիկոնեանք. Պաղես-
տինու կողմէն՝ Բագրատունիք. Ասորեստա-
նէն՝ Արծրունիք. Մարաց ազգէն՝ Մարա-
ցանք, Յունդայեան ցեղէն՝ Ռուէացիք. Ամ-
դանէն՝ Ամատունիք, և ուրիշ շատ տեղերից՝

անթիւ գաղթականք եկել խառնուել են Հայոց ազգի մէջ, առել են նոցա բարքն ու վարքը և բնաւորութիւնը, ծէսերը, սովորութիւնները, լեզուն, կրօնը, և թէ հնար կայ առնուլ՝ ազգութիւնը իսկ, և ասվում են այժմ Հայ։ Սերունդի միութիւն չըմնաց։

Այս Հայերը՝ սկսած Քրիստոսի թուականեն 500 տարի առաջ, (թողունք ինչ-որ քանզայն առաջ-էլ ունեցել էին յարակցութիւններ Նինուէացոց և Եկբատանցոց հետ.) Տիգրան Երուանդեանի և Կիւրոսի օրերումը՝ շատ սերտ կապակցութիւններ ունեցան Պարսից միապետութեան հետ՝ ինչպէս մեկ դաշնակից, որ տեւեց՝ համարեա թէ երկու հարիւր տարի. և ինչպէս պիտի զուշակվի այն ժամանակներումն են ընկել Պարսից բարոյական ազդեցութեան տակ, որ նոցա Սաբէականութիւնը կամ տարրապաշտութիւնը ընդունելով՝ Զենդեան կամ Զանդիկ լեզուի տարրն-էլ իրանց բարբառի մէջ զետեղել են. և այքան պինդ էին միաւորվել, որ ոչ թէ միայն Պարսից հետ միասին ընկան Մակեդոնացոց լուծի և ազդեցութեան տակ, որոց նեղութիւնը քաշեցին միօրինակ մօտ հարիւր տարի, այլ և Պարսից պատճառաւ և միջնորդութեամբ ընդունեցին Պարթևներու Պահլաւեան բռնակալական

իշխանութիւնը. և այս գերութիւնն-էլ տեւեց մօտ չորս հարիւր յիսուն տարի։ Նոր խառնակութիւն սերունդներու։

Այլ այս այն միջոցն էր, որ Հայաստան դարձեալ այն պատճառներու աղագաւ, այսինքն Պարսից հետ համախոհ լինելու մասին՝ առաջ ընկաւ Հռոմայեցոց ձեռի տակ, յետոյ ժառանգաբար՝ Յունաց, այն պէս որ՝ երբ Պարթևական հարստութիւնը վերջացաւ Հայաստանէն, Պարսիկք ինչպէս ընիկ տեարք, և Յոյնք՝ ինչպէս աշխարհակալք՝ մէկը միւսի ձեռքէն խլելով գիշատում և ծուատում էին Հայաստանը։ Այսքան ժամանակի միջոցներումը Հայերը շատ անգամ գերութեամբ կամ ուրիշ պատճառներով ժամանակ-ժամանակ գաղթվում էին իրանց ընիկ հայրենիքէն և ցրիւ էին ընկնում աշխարքի չորս ծայրը։

Այնուհետև այն օրէն սկսած չըգտնուեցաւ այնպիսի ժամանակ, որ Հայաստան յիսուն տարի շարունակ կարողանար վայելել ինքնագլխութիւն, ազատութիւն և խաղաղութիւն։ Մանաւանդ երբ-որ յայտնի տեսնում էին Պարսիկք՝ որ Հայերը կրօնական արտաքին կապով միաւորուած են Յունաց հետ, և դեռ չըհասկանալով որ Հայերը աւելի վիշտ ունին Յունաց կողմէն՝ քան թէ

իրանց Պարսից, վախենում էին՝ որ չըլինի թէ Հայերը կամենան իսպառ խզել նրանց հետ այնքան դարաւոր ժամանակներէ հետէ ունեցած և իրր համազգային դառած շաղկապները, և ընկնիլ Յունաց վատանդաւոր կենցաղագիտութեան տակ. այս իսկ պատճառաւ հանում էին Քրիստոնէական կրօնի դէմ ստէպ Հայատանումը և Հայերի վերայ անտանելի և անպատմելի կրօնական հալածանքներ, որոնք-որ Հայերուն ինամներ էին բերում թէ հաւատքի և թէ ազգութեան հանգամանքների մէջ. որոց մէկին անխոխարինելի զոհ դառաւ միշտ աղխորում արտասունքով աւաղելի Քաջ Վարդանը, և որոնք-որ միշտ և անդադար կրկնվում էին Յունաց կողմանէ-էլ, բայց ուրիշ ուրիշ եղանակներով և հանգամանքներով: Եւ այս այնքան տևեց, մինչև որ Պարսից վերջին ժամացուցակ զանգակի ձայնն-էլ լսուեցաւ, և Յունաց թունալի խայթոցն-էլ խամրացաւ, երբ-որ սկսաւ աշխարքի երեսին զօրանալ առաջ Գերմանացոց, յետոյ՝ Սառակինոսաց արշաւանը, յետոյ՝ Սկիւթացոց և Թաթարների և ուրիշ կիսավայրենի ազգերու հեղեղները. (միայն մէկ ժամանակ պատահեցաւ, որ Բագրատունեաց թագաւորութեան ժամանակը՝ հարիւր տարեշափ

միջոց՝ Հայաստանի այն մասը՝ որ Բագրատունեաց իշխանութեան ներքոյ էր, մնաց խաղաղութեան մէջ, էն-էլ ոչ առանց քանի անգամ միջակուր լինելոյ։)

Այն օրէն սկսած մինչև այսօր քանի անգամ Հայաստանը իրա բնակիչներէն դարտակուեցաւ, և տեղը ուրիշ ազգերով լըքցուեցաւ. և Հայերը օտար աշխարքներիցը՝ զկնի դարաւոր պանդխտութեան յետ դարձան, և թէպէտ Հայաստան միշտ նորոգվում էր և շինութիւն առանում, բայց այն Հեռու աշխարքէն յետ դարձող Հայերը՝ որ արդէն իրանց բնակուած գաւառներու կըլիմայական ազդեցութեամբ փոխուել էին՝ իրանց Հետ բերում էին նոր տարը, նոր գաղափարներ, որ շատ տեղ ընիկ տարրին ու գաղափարներուն լինում էին ընդդիմամարտ և մերժող։

Հայերը՝ որ իրանց Հայրենիքէն Հեռանում էին, ընկնում էին Ատրպատական, Խորին Պարսկաստան, Գամակոս, Եդեսիոս, Աղուանստան, Արաբիստան, Հնդստան, Խաթայ-Խութայի, Յունաստան, Լեհաստան, Մաճառստան, Իտալիա, Ֆրանսիա, Եւրոպայի, Ասիայի և Աֆրիկէի ամեն կողմերը, ուր-որ մէկ անգամ վիշում տանում էր նըրանց դժբաղդութեանց քամին. և ուր որ

մինչև այս օրս-էլ կենում են, ոմանք՝ հազար, ոմանք՝ ութ հարիւր, ոմանք՝ եօթը, վեց, չորս, երեք կամ երկու հարիւր տարիներէ հետէ. և այն տէրութիւններու ազդեցութեանց տակը՝ շատերը արդէն լեզուները, կրօնները, բարքերը, բնաւորութիւնները, ապրուստի տարազը փոխելով, ազգայնութիւնը մոռանալով, այն տեղերունը սեփականելով՝ ձուլվել են օտար ազգերու հետ. իսկ որոնք-որ պահել են իրանց լեզուն, կրօնը, ազգութիւնը, այն երկիրների երկնագաւառի ներգործութեամբ՝ մտաւորական կարողութեանց կողմանէ՝ մեծ մեծ փոփոխութիւնների տակ են մնացել, ոմանք դէպ ի լաւը, ոմանք-էլ դէպ ի վատը։

Խզմիրի այժմեան Հայերը ըստ մեծի մասին Սիւնեաց աշխարհէն դաղթական գալով, և այն կլիմայի ազդեցութեան ենթարկուելով, ուր-որ մէկ ժամանակ Հոմերոսներ էին ծաղկել, և ազգէ յազգ սերելով, այո՝ կարող էին ստանալ այն ամեն ունակութիւնները՝ ինչ-որ Փոքր Ասիայի ծովեզերքը հաղորդում էին իրանց երկրի բնակիչներուն, որոց մէջէն՝ պատմութիւնը պարզապէս ցոյց է տալիս՝ թէ բաց ի եօթն իմաստասիրաց՝ քանի՞ և ինչպէս մտացի մարդիկ են դուրս եկել։ Կոնստանտինուպոլսի

Հայերն եւ՝ կարելի է թէ՝ ստացած լինին մասամբ այն՝ ինչ-որ Թրակիան էր տալիս իւր ծոցումը սնուցրած բնիկ ժողովուրդին։ Կիլիկիան-էլ՝ իւր այժմեան ծնունդներուն՝ այն՝ ինչ-որ առաջ-էլ էր տուել իւր վաղեմի բնակիչներուն։ Եգիպտոս և Պաղեստին էլ այն՝ ինչ-որ պատմութեանց մէջ տեսանում՝ ենք՝ թէ ի՞նչ հանգամանքների մէջ և ի՞նչ են ընձեռել իրանց վաղընջուց զաւակաց։ Եւ սորա հակառակ՝ Հայաստանը մնալով իւր երկրագործաց սովորական մշակութիւնէն զուրկ, երկարատև ամայութիւններ քաշելով, սովէն, սուրէն, մահտարաժամէն՝ իւրա զաւակները կորցնելով և խոպանանալով, միթէ չէ՞ր կարող օրըստօրէ ընկնիլ փոփոխութեանց տակ. միթէ Հայաստանի օդը չէ՞ր կարող յոռեանալ վատ դոլորշիներից, երբ-որ հողը ամլանում էր ջրերի պակասելով, և ջրերը քաշվում նուազում էին անտառների սպառելով. երբ-որ շատ անգամ գազանները այնքան լրբանում էին՝ որ գետնին պառկեցրած դիշատաց դիակների թիրը աւելի շատ էին թողնում քան կկենդանի՝ ոտքի վրայ մարդ-եկողները. և այսպիսի պատճառներից միթէ չէ՞ր կարող տկարանալ բնութեան սննդարար ուժը, և անզօր մնալով՝ էլ չունենալ, չկրել, չպարփակել ի-

բայ մէջ այնքան զօրութիւն և բարի ազդեցութիւն, որ մարթանար իւր բնակչաց ընձեռել միջոց՝ իրանց մտաւորական կարողութիւնները փթթեցնելու։ Կամ նոյն իսկ Խզմիրը և Կոնստանտինուպօլիսը միթէ չէ՞ն կարող հպատակել այսպիսի իսկ փոփոխութիւնների և շրջադարձութեանց։

Երկարատև գերութեան մէջ Խուժաստանի, Սաղաստանի և Ասորեստանի անապատների և աւազների խորը տեղերումը, զարհուրելի չքաւորութեան և կարիքների ներքուութիւնը, անշուշտ սիրտ խեղճ Հայերի դաղթականաց երրորդ և չորրորդ պարտերի սերունդը քիչ-քիչ ճնշվելով շրջապատ պարագաների համադումարմամբ՝ դըլորէր դէպ ի անխախտաստ բթամտութիւն։ Ո՞վ կուտար նոցա այն ծառայական վիճակի մէջ այնպիսի կենցաղավարութեան պայմաններ, որ նոքա նրանցմով կարողանային իրանց մտաւորական գործունէութիւնը իրանց զաւակներուն, թոռներուն և յետնորդներուն հաղորդել, և Կովկասեան ռասի բնատուր ձիրքերը նոյնութեան մէջ պահել. ո՞վ կուտար նրանց այնպիսի հնար, որ նոքա ուժ և միջոց և սիրտ ունենային իրանց որդոց և դստերաց լաւ մտնդ տալու, ուսմամբ և կրթութեամբ լուսաւորելու, դաս-

սխարակութիւն տալով հրահանգելու համար, որ նոցա մտաւորական ուժը չբխամրանար, չբխանգարուէր, և էլի լինէին այնպէս, ինչպէս-որ իրանց նախնիքն էին Հայաստանի ծոցումը, երբ-որ ծծում էին նորա պարզ օդը, և երբ-որ ամեն առատութիւնը վայելում էին, և նոցա սրտաբացութիւնը պատճառ էր դառնում, որ նոքա զգում էին իրանց մէջ հակամիտութիւն և սէր և ձգտումն դէպ ի կրթութիւն, և ժամանակ-էլ էին գտնում մտաւորական արդասեաց համար ևս մտածել: Գերութիւն, չքաւորութիւն, աղքատութիւն, կարիք, մոաց բթութիւն և մտաւորական ընդունակութեանց խանգարումն, ահա՛ այս են միայն այն արդասիքը՝ ինչ որ կարող էին Հայաստանէն վարած տարած գաղթականները քաղել իրանց նոր ստացած ընակարաններէն, իրանց գերութեան խորթ Հայրենիքի մէջ:

Իրաւի՝ չէ՛ կարելի ասել, թէ Հայք այնքան կարող էին խանգարուիլ՝ որ հասնէին մինչև անասուններն, կամ վայրենիներն հաւասարուելու վիճակ. այդ՝ նրանց ունեցած կարիքներն-էլ չէին թոյլ տար: Բայց ապրուստի ճանապարհներ գիտենալը կամ գտնելը, հնարքներ և զանազան խորամանի-

կութիւններ իմանալը, դեռ ՀԻՇԴ մարդավայել լուսաւորութիւններ չեն. կապիկներ կան, որ առանց մահճի չեն պառկում դեռնի վրայ։ Ամեն կենդանի՝ թէ՛ գազան և թէ անասուն՝ գիտէ բնութեան բերմամբ ո՛չ թէ միայն անձնապահ լինել, կամ իւր ձագերուն պաշտպանել, կերակրել, սնուցանել, մեծացնել, այլև շատ մարդկային գործքեր էլ են տալորում, ո՛րը աւելի, ո՛րը պակաս, որքան-որ իրանց գլխի ուղեղի չափը է իւրաքանչիւրին հնար և կարողութիւն տարում։ Հայն-էլ՝ դեռ երկրագործութիւն անելով, հողը մշակելով, կամ պարտիզպանութեամբ, կամ այգեգործութեամբ, խընձորի ու տանձի քաղցրն ու հատունը ճանաչելով, խաշնարածութիւն անելով, կամ հովուութեամբ և նախրապանութեամբ շիշակի մնէն խորոլածներ անելով և գինուանուշահամը ընտրելով, արհեստներ, ձեռագործներ ունենալով, դերձիկ, պղնձագործ, դարբին լինելով, կամ առուտուրի մէկ երգանակ իմանալով, փող վաստակելու ճանփաներ գիտենալով՝ թէ թղթախաղի և թէ նարտի մէջ (որ յուղկահարութեան հաւասար է) դեռ այսպիսի բաներու մէջ քաջալարժ լինելով ինչպէս մեքենայ, որովհետև շատ գազաններ և անասուններ այս

ասածներից՝ մէկը կամ երկուսը կամ բը-
նութեան մատակարարութեամբ գիտենում
են կամ կարողանում սովորել. և ինչ-որ դեռ
սովորած չեն՝ այն-էլ մարդկան անուշադրու-
թեանէն է. և վայրենի ազգեր՝ ոտա մէջէն
շատը և քան զայն-էլ աւելիները՝ արդէն ու-
նին սեփականած իրանց, և չեն ասում և
կամ համարվում քաղաքակրթուած,- անկա-
րող է ասուիլ սրամիտ, լուսաւորուած, հը-
րահանգուած. դեռ պատառաքաղով կերա-
կուր ուտելը, եռաժանին ձախ ձեռով և դա-
նակը՝ աջով ի միասին գործ ածելը, ըսպի-
տակ անձեռոցիկով քինթն ու բերանը սրբ-
ելը, զանազան խորտիկներով, համադամ-
ներով և շիշերով ասուիրան զարդարելը, ե-
ռայարկ և քառայարկ ապարանների մէջ բը-
նակվելը, կառքերով և ամեհի ձիերով շըր-
ջագայելով մեռաքսեայ կերպասներու մէջ
փաթթված՝ այժմեան Հայը դեռ կարող չէ
ասուիլ կենցաղակրթ կամ հրահանգուած.
այն նորա արած բաներից ոչ մէկն-էլ նորա
Հայրը կամ պապը արած չեն. այլ՝ որով-
հետև նա այժմ հարստութեան տէր է, կա-
րող է անել՝ ինչ-էլ որ խել քին մտնի; տեսա-
նելով այլոց արածը՝ կապիկի նման՝ Անգ-
լիացոց, Ֆրանսիացոց, Գերմանացոց արտա-
քին արարմունքէն օրինակ է առնում և ա-

նում, բայց առանց դիտակցու թեան.(այս նիսկ պատճառաւ-էլ շատ անդամ թամք ու համեաը խառնվում են.) փոր-էլ է վատը-կում, իւր երեխանց՝ կաքաւել-էլ է սովո-րեցնել տալիս, որդոց ու դստերաց փեսա-յեացնում-էլ է, հարսնացնում-էլ. շատ ան-դամ ինքը իւր արածը, ասածը, խօսածը՝ հանում-էլ է, նրանց վերայ զարմանում-էլ է ինչպէս մի մեծագործութեան. սակայն նորա կեանքը դեռ սնկական կամ զգայա-կան .վիճակի բալուլներէն դուրս եկած չէ. մինչև ճշդիւտ մարդավայել բանական կեանք ստանալը՝ դեռ շատ դարերու դլրմանց ու-նի կարօտութիւն։

Որ .քաղաքի մէջ կըգտնուի այնպէս Հայ՝ որ գոնէ հինգ հարիւր տարի տևած լինի նորա նախնեաց ազգատոհմը, և այսքան ժամանակի մէջ այն գերդաստանը ունեցած լինի ճոխութիւն, կամ գէթ՝ կենցաղավա-րութեան դիւրութիւն (շէն օճախ, հին օ-ճախ, ասլ զատ) և համանգամայն՝ ունե-ցած լինի ձկտումն և հակամիտութիւն դէպ ի մտաց լուսաւորութիւն, որ այն կենցա-ղավարութեան տարրերը ներդործած լինի նորա սերունդի խելապատակի վերայ, և այն ամեն պարագաներու համախումբ ազ-դեցութիւնը յաջողած լինի նորա յեռանորդ-

ներու սկաւառակի տակաւ առ տակաւ ընդարձակուելոյն, և հասած լինի նոցա ուղղղի պարունակութիւնը դոնէ այն աստիճանի աճման, որքան-որ բնականապէս տրրուած է կոլկասեան սերնդոյն։։ Կա՞յ այնպիսի տուն՝ որ դոնէ երեք պորտ կարողանայ համրել և առանց կարմրելու ասել թէ՝ այս երեք պորտն-էլ դոնէ այնքան ապրուստ ունեցել են, որ կարողացել են իրանց զաւակաց մանկութիւնը այնպէս ապահովել որ ծառայութեամբ ապագայ հացի ճամբայ պատրաստելու համար ձրնշուելոյ պատսպարուած մնացած լինի, և լուսաւորելու սէր ունեցած լինի, և ունեցած հնարներն անխնամ թողած չըլլնի։ Մի՛ մոռանար՝ որ երեք պորտը դեռ յիսուն տարի է. հինգ հարիւր տարիին՝ հարկաւոր եմ կարծում քիչ պակաս երեսուն պորտ։

Հազար չորս հարիւր տարիէն ուելի է՝ որ Բ-Ի հիւ-պէ-ան-ց տունը կայ Թիֆլիզումը, և եօթն հարիւր տարիից պակաս պիտի չիմացուի Ա.ըղո-Ի-է-ան-ց տոհմը. բայց տեսնենք թէ՝ այն դերդաստանների մէջ-էլ միշտ միասի՞ն էին լինում ճոխութիւնը և դէպ-ի լուսաւորութիւն հակամիտութիւնը և աջող պարագաները, թէ շատ անգամ պակասում էին հարկաւոր հանգամանքներից կամ մէ-

կը կամ միւսը։ Մեր այժմեան մեծատունք, որոնք-որ շատ փող վաստակած լինելու պատճառաւ են ասվում մեծատուն, ո՞ր ձոխ և հարուստ մեծատուն նախնեաց շառաւիղներն են. միթէ յայտնի չէ՞ Հայաստանի Հայերու ապրուստը. Թիֆլիզու, Նոր-Նախիջևանի, Ղզլարի, Մոզդոկի. մէջերը քանի՞ մարդ կայ այժմ, որ իւր գերդաստանի ապրուստը՝ պապերէն ու նախնիքներէն սկսած՝ ապահոված լինի տեսել. քանի՞ տարի է որ՝ այն գերդաստանը անշարժ մէկ տեղումը լինի բնակուած. ե՞րբ է սկսել նա իւր և զաւակների մտաւորական կրթութեան ազատաւ մտածել. ե՞րբ է նա բլղուր փլաւը, թաթարի մածունը, գոմշի ատալէն, տուկու ապուրը յետ-դրել։ Ներսէս Կաթողիկոսի սեղանումը՝ մինչև իւր մահուան օրը՝ չէր պակսում նախնընդել չլբուրը։ Առաջվան աշբազի (խահոբոբի, աշչեի) և այժմեան ձարևուլի մէջ մեծ զանազանութիւններ կան։ Ասում են թէ՝ խոշոր ուտողի մազերն-էլ կոշտ են լինում. արդեօք գլխի հանդամանքը ի՞նչվիճակի մէջ են գտանվում։ Զբկարծեմ թէ արդի Եւրոպացիք միայն պորտերը պարարելու համար լինին բարուքաց ներբացրաց երանց կերն ու խումը։ Լակեդեմոնացոց արեան ապուրը՝ միւս կրթական պարագա-

ներից էր դառնում օգտաւէտ մարմնական ուժին և ոչ իւր բնական սննդարար զօրութենէն՝ օրէնսդրի ուղղութեան համեմատ։

ԳԼՈՒԽ 2

ԽՕՍՔ չըկայ. այժմ կան այնպիսի Հայեր՝ որ Հարուստ են, և ուզում են իրանց զաւակներուն կրթութիւն տալ, ոչ այն պատճառաւ՝ որ կրթութեան կարիքը և արժանաւորութիւնը Հասկացել են, այլ այն պատճառաւ՝ որ նոցա Հարևանը այնպէս է անում։ Բայց տեսանենք թէ այժմեան Հարուստ Հայի Հայրն-էլ մեծատուն և ճո՞խ էր, և նորա կրթութեան Համար-էլ գլուխ ցաւցրել էր, Հոգս քաշել էր. կամ քանի՞ պորտ է՝ որ այն Հարստութիւնը նոցա տան մէջն է. և շարունակ Հարստութեան Հետ՝ ուղեկցութիւն արե՞լ է մտաւորական կարողութեանց մէջ լուսաւորվելու սէրն ու ջանքը. թէ նա այն Հարստութեամբ, կամ իւր վաստակած ճոխութեամբ, կամ Հօրմէն մնացած և ստացած ժառանգութեամբ, դեռ նո՛ր է դուրս-եկած

այն մթնոլորտէն, որոյ մէջ-որ դարաւոր ժամանակներով անհշմարելի անյայտութեանց տղում, զեռում, խարխափում էին նորա նախնեաց անհշան աղգատոհմը. և չունենալով ոչինչ առհաւատչեայ ապագայ աչք բանալու համար՝ ընկել էր այն ամէն անյաջող պարագաների յորձանուտը, որոնք-որ արգելաւոր էին նորա, և նորա նման հազարաւորներին և բիւրաւորներին՝ իրանց մտաւորական կարողութիւնը փթթեցնելու համար։ Վերջապէս դուրս-եկաւ այս խեղճութեան ժահահոտ տիղմի մէջէն. այժմ հարուստ է. ունի որդի. ուզում է որդւոյն կրթել, որովհետև համ փող ունի, համ-էլ տեսնում է՝ որ այլազգի մեծատանց որդիքը կրթութիւն ստանալով՝ յառաջադիմութիւն են գտնում։ Վատորոյ որդուն տուեց ուսումն առնելու։ Ցեռնենք՝ թէ նրան այնպէս ուսումն տուին, որ նորա խելապատակի մէջ տեղաւորուեցաւ, թէ այնպէս կրթութիւն տուին՝ որ ուսման աւանդած առարկաները ականջի ծայրին դիպան և սուտեռի նման վայր գլորուեցան։ Հարուստ որդի է. վարժարաններին մէջ, վարժապետների խառնումը, ուսանողներու երախանի դասակարգներումը դեգերուելով, թարթափելով, իրա՛ւ է՝ դուրս-եկաւ իւր կանուխ-

վան նմանեաց՝ իսպառ ուսումն չառնողնե-
րի կարգէն, բայց չըհասաւ-էլ փոքր ի շատէ
ուսումն առնողների կարգին՝ գոնէ, դառաւ
գիժ ու խելօք. Ս. Պետերբուրգն-էլ տեսաւ,
Մոսկուան-էլ, Բերլինն-էլ ոտքի տակ առաւ,
Վենան-էլ, Փարէզ-էլ գնաց՝ Լոնդոն-էլ, Մը-
ոէօն-էլ տվրեցաւ՝ Մոպոհ-էլ. բայց Պե-
տերբուրգի դաւառագրութեան մէջ աւելի
լաւ գիտէ՝ թէ՝ ո՞ւր է Գիւտոյի պանդոկը,
քան՝ թէ ի՞նչ կայ Գեղարհեատից ճեմարա-
նումը, և պոնչ-հլաս աւելի ախորժանօք է
երթևեկում, քան թէ՝ Էրմիտաժի թանգա-
րանը, կամ Համալսարանի գամարձակաց
կաճառ. որովհետև այս տեղ գնում-գալիս
է՝ միայն ծանրաբեռնող ժամանակի ձանձի-
րը փարատելու և Ցանցկլասի կաքաւակից
պատրաստելու համար. իսկ այն-տեղ գը-
նում է՝ իւր չնաշխարհիկ կենցաղակրթու-
թեան դասինները քաղելու համար : Ա. յա-
քան փայտէ ձիու վրայ նստած յառաջադի-
մութիւն անելու մասին՝ ի՞նչ էր հարկաւոր
եօթը ութը տարի դպրոցների շեմերը մա-
շել, կամ ոտները կոտրտելով Եւրոպա կամ
Ամերիկա ճանապարհորդել. այդքան լարի
ուսումն, այդքան պայծառամիտ հրահանգ
և արդիւնաշատ լուսաւորութիւն՝ ամեն ա-
նառակ որդին էլ կարող էր ուանդել, հա-

ղորդել, պատուաստել մեկ ամսումը։

Ըզդի և Մանուկ Հայաստանի Նորընծայ Լուսաւորիչը, Լատին և Հելլէն դպրոցական հեղինակների հետ դդակի ծանօթութիւն արած ունենալով, և դպրոցայ մէջ աւանդած առարկաների մօտէն ցոլայ ոտոխ դէի նման սահելով անցած դտանուելով, հօրը կամ նախնեաց դառն աշխատանքով, սուսով ղորդով վաստակած փայլուն ոսկին ոսկիափայլ դերասանուհեաց և ոսկեհնչուն դուսանաց զոհելով՝ որպէս բոլորապտուղ ողջակէզ, հին դարմանի պէս քամուն տըւեց, որովհետև կարդով ու չափով սովորած չէր. բայց ինչպէս ինքը, նոյնպէս և իւր ոսկեկիր դրաստ թանձրամիտ հայրը՝ ուզում էին ցոյց տալ՝ թէ ուսեալ է, որովհետև ծոցումը ունի պարտքով ու պատուհասով և հազար միջնորդութեամբ ստացած իբրու ուսումնական քննութեան վկայական. և՝ որ քան զամենն աւելի է՝ ինքն խլըշալին-էլ էր հաւատացել և իրան տրդէն ուսեալ էր կարծում, որովհետև շատ ուսեալ անձանց շամփայն գինի էր խմեցրել, և հետերը ինքն-էլ անուշ արել, որպէս թէ՝ ինչպէս որ Երուսաղէմ ուխտ գնացողը մահտեսի է ասվում, նորա՝ հետը տարած բերած ջրի ամանն-էլ մահտեսի կ'ասուի։ Եւ

յիմար կեղծաւորներն-էլ, աներես աղուէսի խաղմնոանքով, բերնի պանրին սիրահար՝ նրան ուսեալ էին կանչում։ Ի՞նչ դուրս եկաւ այս ուսեալ, «աղդիս առաջնորդ ալիսի դառնամ» ասող խելքի աղքատից։ Նա կամ մնաց իւր տեղը, որ իւր գերիմաստ շնչով երկնքի կապուտակը թիւայնէ, կամ տեղափոխուեցաւ, որ այն անշէջ լոյսը մէջիչ ժամանակ ուրիշ քաղաքներու կարօտելոց եւս հաղորդէ։

Հայազգի մանկանց ուսումն տալ այնքան է հարկաւոր, որքան-որ նորածին երեխանց իւրեանց մօր ծիծը, կամ ընդհանրապէս՝ կաթը։ Այս կաթը ամեն կաթնկեր կենդանեաց առաջին սնունդն է։ Ուսումն-էլ ամեն բանական կենդանեաց բարքոք կենաց առաջին հարկաւոր պայմանն է. բայց ուսումն տալ հարկաւոր է մեծ խոհեմութեամբ, և այն ճանփով և այնքան, որքան-որ մանկան խելապատոակը բաւական է ընդունել, և այնպէս, որ նա երթէ Դեղալոսի և Իկարի նման՝ իւր ստորակարգ ասուիճանի բաւղէն վեր ելաւ, անշուշտ հասնի դէնէ Դեղալոսի նման՝ միջադաս ասուիճանին, և ո՛չ Իկարոսի նման այնքան բարձրից սկսի թռչել, որ մոմը հալի և թեւերը թուլանան։ Առաջին նուադին մեր Հայոց մանկանց

այնպիսի ուսումն չըտան, որ մանկունք կիտաւոր ճանաչումը մնան, իւրեանց բնիկ ռամիկ տեղերէն դուրս-գան, ու կամենալով ծայրագոյն վերադաս աստիճանին հասնիլ՝ չըկարողանան ընկնիլ միջադաս աստիճանի կարգն-էլ, և այսպէս հա՛մ ստորադասէն զրկուած լինին, հա՛մ միջադասին չըհասած: Վա՛յ այն մարդուն, որ անտի յոյսերից խաբուելով՝ մէկ անգամ կըկորցնէ իւր բընիկ վիճակը, ինչ որ տուել են նրան կամ բնութիւնը, կամ տեղական հանգամանքը և կամ մէկ յաջողակ դիպուած: Մանկանց անունդը և կրթութիւնը յանձնելու չէ բաղդին կամ դիպուածին, ասելու չէ՝ Պատայոյ փէրշաք օլմաղ, դէ շիտ ֆահիլէն խոնիէ-դէ. այլ փորձին, ստուգութեան և դըրական կարգերուն պիտի աւանդել:

Մէկ ազգ, կամ մէկ ժողովուրդ, կամ մէկ հասարակութիւն, կամ գոնէ մէկ դերդաստան լուսաւորելու, դաստիարակելու, հրահանգելու համար, գոնէ յիսուն տարի է հարկաւոր: Մինչև այսօր ո՞վ է տեսել, որ մէկ տան մէջ հայրն-էլ, մայրն-էլ, որդիքն-էլ, դուստրերն-էլ միօրինակ կըրթուած, դաստիրակուած և լուսաւորուած լինին: Հայրը ազքատի կամ հարուստի զաւակ, ուսումն ճանաչելով մէկ ապրուստի

ճանկայ՝ գնացել է ուսումն է առել. բայց թէ ո՞ւրեան, կամ ի՞նչ ուսումն՝ չէ՛ մեզ այն վոյթ։ Մայրն-էլ մէկ դիպուածով ընկել է, դիցո՛ւք թէ, մէկ վարժապետի ձեռք և կրթուել է. կարելի է թէ՝ բնաւ աշակերտի անուն կամ պաշտօն չէ-էլ ունեցել։ Պատահարար տգէտ ամուսնացան (մշտաշարժ պատահմունքը ինչե՞ր չէ կարողացած հրաշագործել. Հագարին նա չարա՞ւ Իսմայէլացոց նախամայր). մէկը Եգիպտոսէն սերուած և միւսը Միջագետքէն։ Այս ամուսնութիւնից առաջացան զաւակունք (ջորիք) թէ՛ որդիք թէ դստերք։ Հայրն ու մայրը, վորձիւ տեղեկացած ուսանց պիտանաւորութեանը, իրանց զաւակներին ուսումն և կրթութիւն են տալիս, որդւոց այն դիտաւորութեամբ, որ արքունական պաշտօնի մէջ հաց գտնեն, և դստերաց այն մտքով, որ այն ուսումն նոցա բաժինք դառնայ և օժիտ համարուի. տեսնենք թէ՝ զաւակները միօրինակ են առաջանում և միաչնի. կամ ամենու ընդունակութիւնը համաչնի է, թէ զանազան. և ամեն մէկ քաղաքի մէջ քանի՞ հատ տուն կըգտնուի, և կըգտնուի՞ արդեօք։

Լաւ է, որ հայրն ու մայրը այդպէս յարմար հանդիպեցան. ապա եթէ կինը լինէր բարեկիրթ և այրը լինէր անուսում և անկիրթ

վայրենի, մի միայն հարուստ, ի՞նչ կը լինէր արդեօք նոցա զաւակներու վիճակը. կամ այրը լինէր ուսեալ և կինը անուս, ի՞նչ պիտի դուրս գար այն տեղէն:

Այսպիսի մտածութեան ո՛չ ծայրը կայ, ո՛չ ծագը. լաւ է որ՝ թոյլ տանք. որովհետև այս մէկ գերդաստանի յիսուն տարիան այսպէս դատարակութեամբ առաջ տանելու համար՝ անշուշտ հարկաւոր է, որ զաւակաց ամուսնութիւնն-էլ այնպէս պատահի, ինչպէս որ ծնողացն էր պատահել և թոռանց ծնունդն-էլ լինէր այն հանգամանքների մէջ, ինչպէս որ զաւակներունն էր. բայց ո՞վ կուտայ այնպիսի երաշխաւորութիւն, որ մի և նոյն անց.քը նոյն հանգամանքներով երկու անգամ՝ հետ գ՝հետ, կրկնուի մի և նոյն գերդաստանի մէջ: Ուրեմն լռենք:

Սայլ «յիսուն տարի»: Այս յիսուն տարին երեք պորտին է համապատասխանող, ուրեմն սա ունի երեք ժամանակէտ, իւրաքանչիւրը իր տասնուհինգ տարիներից բաղկացած: Հայոց մանկութիւնը (մանկութիւնը) պիտի ինչպէս մի մանուկ համարուին և այս ժամանակէտերը անց-կենան, մինչև հանին հասանուն կերակուր ուտելու չափին: Առաջին տասն ու հինգ տա-

րին Հայ մանկանց համար է այն ժամանակը, երբ մանուկը միայն ծիծ է ուտում, որ պետք աստի մանչիկներ: Երկրորդ տասնուհինգ տարին այն միջոցն է, երբ մանուկը միայն փափուկ, կակուղ և դիւրամարս կերակուր կ'ուտէ, և պետք աստի պատանիներ. իսկ երրորդ տասնուհինգ տարին այն ժամանակն է, երբ մանուկը արդէն վաղ դուրս-եկած լինելով քնքուշ և անզօր հասակներէն, համարձակ հաց, միս, միրգ է ուտում, և սկսում է անելիկներ ամենայն ինչ ծամել և ուտել և մինչև ոսկոր էլ է կրծում, որ պետք աստի հասակներ:

Ոմանք չըկարծեն թէ՝ անշուշտ հարուստի որդին կըլինի արամիտ, և աղքատի որդին բթամիտ. թո՛ղ չըկարծեն թէ՝ հարուստի արամիտ որդիքը և աղքատի սրամիտ որդիքը զուգահեռաբար առաջ կ'երթան, կամ՝ բթամիտները մի և նոյն դծի վրայ կ'երթան. կամ՝ երբ-որ հարուստի որդին ցոյց տայ աշխոյժ, բոլորն-էլ խելքի առհասարակ են, կամ՝ աղքատի որդին թմրած երևի՝ մտաւորական պակասութեանց նշան է. դոքա միայն մանկութեան շրջադարձից կայծերն են, որ երբեմն կըշամանդաղուին և երբեմն կըցոլան. տասնու-

հինգ տարու մէջ հարուստի զաւակներուցը կը պատրաստուին այնքան, որքան-որ չեն կարող աղքատաց որդոցմէն պատրաստուիլ հանգամանքներուն խառնելով։ Հարուստներուն զաւակաց յառաջադիմութեան առհաւատչեայքը արդէն ապահոված են, իսկ աղքատաց զաւակներունը ապաստան են քանքարի և ուրիշ պարագայից ձեռնտուութեան։ Այս տասնհինգ տարուայ մէջ ամէն մանկունք չեն կարող միօրինակ առաջանալ. ոմանք անխափան առաջ կ՚երթան, ոմանք-էլ փոքր ինչ յետ կը մնան. շատն էլ կը սկսին մէկ կամ երկու տարի-էլ կաղալ համանգամայն. բայց մի՛ մոռնար որ՝ այս տասնհինգ տարի է. թէպէտ մանկական տասնհինգ տարի է, բայց ազգի, ժողովրդեան, հասարակութեան գերդաստանի մէջ շատ պատանիներ կը պատրաստէ, որ այնուհետև համարձակ պիտի մտնեն ազգային պատանեկութեան տասնհինգ տարին։

Սնունդը տասնհինգ տարի մնալ չի մնար. բայց մանկութիւնը՝ միշտ մանկութիւն է։ Այս մանկական տասնհինգ տարին՝ բովանդակ ազգի, ժողովրդեան, հասարակութեան մանկութիւնն է. և նորա մանկունքն են արդար և այնպիսի մանկունք, որ բաց ի կաթէն՝ ուրիշ ոչինչ չեն կարող ուտել. ապա

եթէ ուտեն՝ վնաս կը-քաշեն։ Մեր ազգը, իմ կարծիքով, այժմ՝ այն դրութեան մէջն է, որ նրա զաւակների հետ այս ճանփաներով պիտի վարուիլ. ճանաչել որ մեր ազգը, ինչպէս վայրենի կեանքէն նոր դուրս եկած ազգ, (թէ և չորսհազարամեայ է պատմութեամբ, բայց թշուառ արկածները նրան հասցրել են այն անմխիթար ատուճանին) դեռ ինքն-էլ, իւր մանկունքն-էլ այն զոզտրիկ հասակի մէջն են, որ չէ կարելի նրանց հաստատուն կերակուր առաջադրել, որ նոցա քնքոյշ ստամոքսը չըխռոզի. մեր ազգի մանկանց մտաց սրութեան, յիշողական զօրութեան և ընդունակութեանց արարչական կարողութեան չափը հասկանալով ճանաչել, քննելով որոշել և այնպէս տալ նրանց ուսման և կրթութեան սակը, որ նոցա ձգնշուած խելապատակը քան զիւր ուժն աւելի բեռնաւորութիւն չունենայ։

Մանկանց ուղեղի և մտաց փթթումն չի լինիլ կամ հապճեպ կամ յանկարծ։ Հազարից մէկ կըպատահի, կամ բիւրէն երկու՝ որ ինչպէս այս վիճակի մէջ քանքարաւոր մարդիկ դուրս-գան, նոյնպէս և բարեկիրթ տան զաւակը և աղքատ գերդաստանի որբը ունենան մի և նոյն առաւելութիւնը, մի և նոյն արամտութիւնը, մի և նոյն աշխոյժը,

կամ մտացիութիւնը։ Պիտի բնութիւնը ա-
ւելի երախտապարտ դտնուած լինի աղ-
քատի որդուն, որ տուած լինի ընդու-
նակութիւն հաւասար հարուստի որդուն,
որին արդէն լաւ ապրուստը, լաւ հրա-
հանգը, լաւ կրթութիւնը, լաւ շրջակայ
պայմանները խիլայել են լաւ ընդունակու-
թիւններով։ Բայց այստեղ ամենայնիւ զար-
մանալի չէ՝ բնաւ, եթէ հարուստի զաւակն
էլ լինում է յիմար, անխելք. կարելի է
թէ նորա հայրը, այն հարուստ մեծատու-
նը, այն փողատէր ասած մարդը՝ միայն դի-
տէր փող վատակելու հնարը և նորա վրայ
էր իւր խելքը մաշում և չէր հարկաւոր
ժամանակին շրջապատել իւր զաւակին այն
պարագաներով, որոնք լաւ ապրուստի
հետ միասին հարկաւոր էին, որ կարողա-
նային բարգաւաճեցնել նորա ընդունակու-
թիւնները. չեմ ասում թէ՝ նա կարող էր
ի բնուստ նա լինել պակասաւոր, ապուշ և
անմիտ, ինչպէս-որ աղքատի որդին-էլ կա-
րող է ի բնուստ ունենալ սրամտութեան
քանքար. սակայն, թէ այսպէս և թէ այն-
պէս, այս ամեն հանգամանքը որքան-որ
դիպուածներին են կախուած, նոյնքան-էլ
թէութիւններին։

Այստեղ ազգի մէջ մէկ նոր դաղափար չէ՝,

սաածներս. շատ դար է, որ Հայերը ունին իրանց մէջ այս աւանդութիւնները, աւելի հին ժամանակներէ մնացած և՝ հասարակուած, որ մարդու գլխի ձևերէն նորա մըտաւորական ունակութիւնները կըգուշակվին։ Թողունք ուրիշ գրքերը, որ կարելի է թէ՝ ամենեցուն յայտնի չեն. ահա՛ հասարակաց ձեռին գտնուած գրքի՝ Էֆիմերիսէ (ո՛չ ես եմ գրել և ոչ դու) մէջ կայ ու կայ խսկզբանէ. և Էֆիմերիսէի մէջ (որա անունը տալն էլ մէկ փորձանք է) գրողն-էլ իւր փորէն հանած չէ. նա-էլ մէկ հեղինակութենէ է օրինակել կամ թարգմանել. նորա հեղինակն-էլ իւր մտքէն յղացած չէ. այլ քանզինքն հնագոյն մարդոցմէն է հաւաքել. նոքա-էլ փորձերից են քաղել և յօրինել այս վարդապետութիւնը, ուր որ յայտնապէս ասվում է «Եթէ գլուխը լինի այսպէս, մարդը կըլինի այսպէս. կամ եթէ գլուխը ունենայ այս կամ այն ձևը, մարդու բնաւորութիւնն-էլ կունենայ այս կամ այն հակամիտութիւնը, և ընդունակութիւնն-էլ կըլինի «այսպէս կամ այնպէս», և այլն։ Սորա մէջէն երբ-որ հանես այն մասունքը, որոնք որ խաբէութեան (շարլատանութեան) արդասիք են, մնացորդը անժխտելի է, որ արդի ծայրաստեալ Փիզիոլոգիայի գեղեցիկ ուղեցոյց ալի-

տի դառնան, որ նրանցով այս գիտութիւնը, այս մարդկային մտաց չքնաղ ստուգը և այս բանականութեան անխոնջ վաստակոց և ընութեան դաշնակաց մէջ խորամուխ հետազօտութեանց արդասիքն և շքեղաշուք պտուղներն ազգի մէջ տարածեան։ Այնուհետև ով որ կըկամենայ վարժատուն շինել, կըկամենայ Հայոց մանկանց դաստիարակութիւն տանել, մէկ լաւ խորհուրդ կ՚անէ Փիլիսոփայի հետ, և հիմքը կըդնէ ի վերայ վիմի և ոչ ի վերայ աւազոյ, ինչպէս-որ մինչև այսօր արել են և դեռ կամենում են անել, և ազգին-էլ շըլինքին տալով՝ կամենում են անել տալ, որ առաջիններին նման համ անպտուղ մնան, համ էլ վնասներ առաջացնեն։

Այս մէկ գաղտնիք չէ, որ մեր ազգի մէջէն ուսումն շատ ու շատ պակաս է, ազգը մեծ կարօտութիւն ունի ուսման, կրթութեան և հրահանգութեան. այլ թէ ո՞ախի ուսման, ո՞րախի կրթութեան, ո՞րախի հրահանգութեան է կարօտ, դեռ չէ վճռուած և դեռ չէ մէկ մարդ պարզապէս ասել թէ մեր հայազգի մանկանց այս կամ այն ուսումն է հարկաւոր առաջ, կամ այսպէս և կամ այնպէս է հարկաւոր է կրթել։

Նթէ լաւ միտք անելու լինինք՝ յայտնի

ալիսի տեսանենք, որ ո՛չ մեր հին կրթութիւնն է իլել լաւ և ո՛չ այժմեան նորը. և ով-էլ որ կամեցել է ազգին լուսաւորութիւն ընձեռել՝ դժուար ճանապարհով է տարել և ապառաժ Արարիայի քարաժայռ առապարների մէջ գձել։ Դեռ այսօր տեսնում ենք որ՝ ո՛վ առաւօտը կանուխ է վեր կենում, ազգի լուսաւորութեան մէկ լաւ քարոզ է շարադրում, եւրոպական լեզուներէն մէկ լաւ եղած ձրթած դասախարակութեան խրատ, կամ վարժարանի Պրոգրամմա թարգմանելով—Հեղդ յուսանել և վոյթ ի վարդապետել—և ըստ քմաց մեր ազգի մանկանց կրթութեան իբր թէ յարմարելով և այն չէ միտք անում երանելին, թէ այն խրատը և այն Պրոգրամման արդեօք օգուտ բերո՞ւ է այն ազգին, որոյ Համար որ գրուած է, կամ ո՞րքան օգուտ է բերել. կամ այն ազգը, որ այժմ լուսաւորուած է, խնայելս այն խրատով և այն պրոգրամմայո՞վ է դասախարակուած, թէ՞ այլ պատճառներով, ուրիշ հնարներով և աջողակ դիպուածոց միջոցներով։

ԳԼՈՒԽ 3.

ՀԱՅՈՑ ազգի հին ու նոր կրթութեան վերայ կամենում էի մի հարևանցի ակնարկութիւն անել։ Շատ հին ժամանակները մեր աչքէն, նոյն ժամանակի հերաւորութեան թանձր վարագուրով ծածկուած են և նոցա համար չունինք ասելու և ոչինչ. և թէ ասենք, ինչպէս-որ շատերը ասել են, ամենն-էլ պիտի լինին կամ կարծիք, կամ բանաստեղծական առասպելք. ուրեմն թողնենք։

Այս այս ասելով՝ հնակարկառ դիւցազանի ձեռքը չեմ բռնում։ թող նա Ամենակայ Սուսաց մէջ համարձակ վառէ Զրադեշտական հուրը, և նորա խարոյկի շրջապատը, ուրքան-որ կամենայ, կաքաւեցնէ Հայերի Ազգաս Մասեաց Գաջերին Պարսից Պարիկների հետ, և բոլանդակ յունական Ոլիմպը բերէ Հայաստան, վահագնին-էլ հարկադրէ, Ամրոսիդէների հետ, Ամենանե-

ին և Անահիտներին կռուեցնել. մեզ չէ վոյթ։ Մեսրոբեան տառերը հասարակուելէն յետո՝ Հայոց ազգի մէջ մնաւ դրաբառ լեզուի ազդեցութիւնը, և մինչ բոլանդակ ազգի լրութիւնը մնաց իւր իրաւացի անընդդայակցութեան մէջ, նա մէկ քանի հոգևորական անձինք դուրս-բերեց, որ նոյնպէս միայն կրօնական, եկեղեցական և պատմական առարկաների մէջ հանդիսացան. իսկ միւս մտաւորական կարողութեանց վրիթիեցնող, զարգացնող և բարգաւաճեցնող առարկաները, որն-որ Աթէնքէն, Աղէքսանդրիայէն դառը, շատ դառը աշխատանքով ստացել և բերել էին, Հայաստանի հողի վրայ չկարողանալով արմատանալ՝ իրանց կոկոնի մէջ չորացան. և այսպէս՝ այն անօգնական դորձակների ձեռքով բոլորագիծ նշանակած նեղ ասպարէսի մէջ պատուեկաւ ազգի ընդունակութիւնը շատ դար, մինչև-որ այն ևս չդանելով ուրիշ անհրաժեշտ հարկաւոր պարագաների համախմբութիւնէն օգնութիւն, օրըստօրէ կերպարանափոխ լինելով խանդարուեցաւ։

Երբ-որ նորումն մէկ երկու դար առաջ սկսաւ նորոգուիլ՝ շատ տեղ նոյն դրաբառ լեզուն, դպրոցական խարազանը ձեռին, էլի սկսաւ նախկին տեղը բռնել, առաջին ձայնը

ստանալ, հրապարակի մէջ նախաթոռ նըստել և ընթերաց մէջ գահագլուխ. և էլի սկսաւ ազգային յառաջադիմութեան խոչընդոտն հանդիսանալ, որ տևեց մինչև 1850 թուականը:

Այոց ազգի գործածական կենդանի լեզուի կարօտութիւնը քան զայս թուականն էլ վաղ էր Կոնստանտինուպօլսի և Զմիռնիոյ մէջ բացել ազգային աշխարհիկ լեզուաւ ամենեցուն հասկանալի դիւրմաց, դիւրամատոյց գրուածներու, մատեաններու և մանաւանդ լրագրերու և օրագրերու ձեռնարկը, բայց ազգի, հնամոլից ազդեցութեան տակ ճնշված, հզօր մասը մոռիկ էր անում այս լուսաւորութեան անտարբեր և անայթաք շարժի վրայ՝ ինչպէս մէկ հերձուածողական նորաձևութեան, և ամեն մատեան, որնոր գրուած չէր Ցուրբերանի դ նախադրով, ի-ի յետևէն կախուած մակակէտով և Ինան, Ինան, Ինամբ պատուներով, կամ ձանապարհի տեղ ճանփայ էր գրած, շնորհի տեղ շնորչ, աշխարհի տեղ աշխարչ, և այլն, որպէս թէ Հայութեան ազգը շարժելն զարտուղութիւն էր համարում: Սակայն այսպիսի անհիմն դատաստանը երկար կեանք չունեցաւ, և դպրոցական արջնաթոյր քրդի տակէն դուրս գալ ուզեցող

ազատաւէր ազգը աչքը բացեց, գրաբառ լեզուն թողեց հանդարտ Ոտոյն ծալէալ է ի կողմն, սկսաւ աշխարհաբար գրել, սկսաւ հասկանալ. այս առաջին ռանվոխը արաւ «Մանուկ Հայաստանը»: Եւ Հայերը նոր սկսան կարդալ. առաջին օրագիրը դառաւ նոցա համար առաջին այբբենարան: Այս հանգամանքէն խրախուսված խմբագրիչները, լրագրագիրները սկսան ևս առաւել պարզ և դիւրիմաց գրել, անփոյթ անել ոմանց ունչ անելուն, որ այնպիսի պարզ ռամկական լեզուի մօտ գրութիւնը գոնէ էին կոչում: և կամեցան ամենեցուն հասկացնել, որ նոքա աւելի լաւ են համարում գռեհիկ լեզու, ռամկական լեզու բանեցնելով, աւելի դիւրահասկանալի լինել ռամկաց, քան թէ գիտնոց, գռեհկաց՝ քան թէ ուսելոց, և նրամով, իրանց անձնասիրութիւնը զոհելով, կարողանալ օգուտ բերել ազգի չքաւորներուն. որովհետև գիտնականք անկարօտ են. քան թէ իրանց խելքով կոկած, յզկած, տաշած, մաշած, քինթը ծռած, բերանը մռած նորաստեղծեալ լեզուով խօսել, խօսել, խօսել, և ոչ ինչ չըհասկացնել: Այնպէս և նիւթերու ընտրութիւնը ցանկացան հպատակեցնել հասարակաց ըմբռնման և հասկացողութեան, քան թէ մէկ

քանի սուիտաներու, մէկ քանի իմաստակներու քամիով լեռը խելապատակին արբանակել. որովհետև սոցա համար քաղցր էր լսել ռամկաց բերնէն թէ «Հասկանում ենք», և դիտնոց բերնէն թէ «Մանկական և տղայական բաներ են», քան եթէ ռամիկները ասէին թէ «Մեր կարդացածը աղուէսի սառոյց կերածին կ'նմանի» և ուսումնառածները ասէին՝ «Այս Նեւթոնի կամ Գալիլիի դրութեանց դաղափարներն են»:

Հայերը, կրկնում եմ, նո՛ր սկսան կարդալ: Հայերը առաջ էլ էին կարդում հին դրաբար լեզուաւ դրածները. և եթէ նոցա մէջէն մէկ երկու ուսեալք հասկանում էին, կամ ասում էին թէ՝ հասկանում ենք, խեղճ ուսումնչասածները ճշմարիտ խոստովանում էին, որ չենք հասկանում, և այս իսկ պատճառաւ մատամբ էլ չէին հպում գրքերուն, որ նոցա մէջի գրածներու դէմ սեղանակապութիւն արած չլինին: Եւ եթէ մէկ քանի հարուստներու գարեկումը տեսնէր մէկ քանի հատ բարեկաղմ գրքեր, նա ո՛չ եթէ կարդալու մտքով էր ասացել, այլ սովորած կապմերուն զմայլելով՝ գրաբարձ գրատ կոչման էր ցանկացել: (Գինին թէպէտ ձիերն են դէտուդէն կրում, բայց միայն մարդիկ են խմում, իսկ ձին էլի իւր պատուական ջուրն է տանչում):

Հայերը, Հայոց ազգի թանձր և խիտ բազմութիւնը, ռամկի խուժանը նոր սկսաւ կարդալ և այն աշխարհաբար։ Սոցա մէջէն նոր Նախիջևան քաղաքումը դրաբառ լեզուի հասկացողներ էլ կային այնպիսիք, որ համարձակ կարող եմ ասել թէ՝ մէկ հատ կարդաւոր չըկար, որ նոցա չափ հասկանար, կամ խելամուտ լինէր։ Տէմիրճի Պողոսը, խալիֆայի . . . . խկենտերը, կակալոն և սոցա նման անձինք՝ բնաւ ամօթ չէին կարող բերել ազգին, թէպէտ և այս վերջին երեքը այն առաջինին բնաւ հասնելու չէին կարող։ Այսպէս՝ մէկ հատ պարտիզպան-էլ Հաշտարխան էի տեսել, որ նորա դրաբառ լեզուաւ առանց սնապարծութեան խօսածը համարձակ կարելի էր տիպ մուծանել։ Հայերը նոր սկսան կարդալ. բայց դեռ չեն կարող ասվել ընթերցասէր, որովհետև դեռ ժողովրդական ընթերցանութեան դրքեր-էլ չկան, և որովհետև դեռ հարիւրէն մէկն է կարդում, կամ հազարէն երկուսը։ Այս մէկ խօսք է, որ ասում ենք. որովհետև եթէ Հայոց ազգը հաշուենք 4,500,000, և եթէ հարիւրէն մէկ կարդացող ունենանք, ուրեմն պիտի ազգի մէջ 45,000 ընթերցող լինին։ Այդ անհնար է։ Աստուած տայ՝ որ կէս միլիոն կարդացող ունենանք, կամ կարելի

է թէ միայն Պօլիս կըգտնվին 50,000 ընթերցասէրք. բայց չեմ կարծում և ստոյգը չը գիտեմ։ Կարծում եմ, որ այդքան պիտի չունենան։ Ապա եթէ հաղարին երկու ասենք՝ 10,000 կարդացող պիտի գտնուի ազգի մէջ. այս էլ շատ քիչ է, և անյարմար։ Իմ կարծիքք՝ Հայոց ազգի մէջ պիտի լինի գոնէ 25,000 գիր գիտցող։ Այս, մեր ազգի սակաւութեան համեմատելով, քիչ բան չէ։

Դա քան զայս մէկ քանի տարի առաջ կարդացել եմ լրագիրներու մէջ, որ Ռուսաց ազգի 955 մարդէն մէկն է գիր կարդացող։ Ֆրանսըզներու՝ 50 էն մէկը։ Անգլիացիներու՝ 30 էն մէկը։ Ընդհանուր գերմանացոց՝ 15 էն մէկը։ Պրուսաց՝ 8 էն մէկը։ Մեր ազգը եթէ իրաւ իւր մէջը ունենայ 20,000 գիր գիտցող, կընշանակէ որ Հայերու 250 էն մէկն է կարդացող. այս լաւ և աղնիւ թուանշան է, որ ազգի ապագայի համար տալիս է շատ սիրելի առհաւատչեայք, եթէ որ ազգի առաջնորդող մարքերը, ունքը շինելու ժամանակը, ազգի աչքը չը հանեն։

Ազգին՝ իրաւի ուսումն պէտք է. բայց ի՞նչպէս ուսումն։ Մէկ ժամանակ հանգուցեալ Ներսէս մեծագործ սրբազան կաթո-

զինքեանը, երբ որ դեռ նոր էր Թիֆլիզու առաջնորդութեան աթոռումը հանդարտել, կամենում էր մէկ մեծ ազգային դպրոց բանալ, որն որ յիրաւի բացուեցաւ ևս Նէրսէսեան Դպրոց անունով. և սկսաւ Հընդստան, Անգլիա, Ֆրանսիա գրութիւններ անել, վարժապետներ հրաւիրել և գիտնականներէն խորհուրդ հարցընել: Այն ժամանակի համբաւաւոր վարժապետաց մէջ քան զամենը բանիբուն, ազգասէր, ազօրուտ, հմուտ, կիրթ և գործունեայ Յանաչելով Յակոբ Տաճան Զրպէսեան վարժապետաց վարժապետին, նրամէն ուզել էր մէկ վարժատան պրոգրամմա, որն որ Զըրպետեանն-էլ գրել էր Փարէզ քաղաքումը և իրմէն առաջ ուղարկել էր Թիֆլիզ, և Ներսէս Սրբազան Արքեպիսկոպոսը աշխարքէ աշխարք այն պրոգրամմայի օրինակները ցըրուել էր, և իմաց էր արել, թէ իւրաքանչիւր վարժատան մէջ, որ տակաւին անուն էլ չունէր և յայտնի չէր թէ ի՞նչ պիտի լինի, ճեմարան թէ Համալսարան, պիտի այս առարկաները աւանդվին. քերականութիւն, Հարուածանութիւն, որամաբանութիւն, փիլիսոփայութիւն, բարոյական իմաստասիրութիւն, բնաբանութիւն, բարագիտութիւն, բնալուծութիւն, բնաքննութիւն, բժշկա-

կանութիւն, տընկարանութիւն, կենդանարանութիւն, անդամաղնութիւն, անդամատութիւն, արհեստարանութիւն, աշխարհագրութիւն, վիճակագրութիւն, դաւառագրութիւն, երկրաչափութիւն, հողագիտութիւն, ջրագիտութիւն, ջրաբաշխութիւն, հրարուեստութիւն, հանքարանութիւն, ճարտարապետութիւն, բերդաշինութիւն, ձիավարժութիւն, տեսարանութիւն, վիրաբուժութիւն, դեղագործութիւն, մեքենարանութիւն, անատնարուժութիւն, ատաղջաբաշխութիւն, դիտակարանութիւն, հոգերանութիւն, եռանկիւնաչափութիւն, թուաբանութիւն, ալգեբրա, մաթեմատիկա, համարնարանութիւն, աստուածաբանութիւն, այնքան ութիւն, այնքան բանութիւն, այնքան չափութիւն, որ քանի թերթ ծայրէ ի ծայր լիքն էին։* Ո՞վ կար քան զ Ներսէս Սրբազանն աւելի սիրահար մեծագործութեանց, ո՞ւր մնացին այնքան ութիւնները, այնքան բանութիւնները. նա առաջ Ղարաբաղցի Զորս վարդապետի ձերքը տուեց այն կոզմնացոյցը,

---

* Այս համալսարանական անթիւ և անհուն գիտութեանց և արհեստից ցուցակը բերել էր Նոր-Նախիջուան Զրթաներս տէր Յովհաննիսեան Սմբատիկեանցը, որ կարելի է թէ այժմ ևս Նորս թղթերու մէջ լինի պահած։

Պողոս վարդապետը սկսաւ գերականութիւն դաս տալ Նարեկացոյ ոճերով. յետոյ Տէր Յարութիւն Ալամդարեանի ձեռքը տուեց. նա էլ սկսաւ Դիոնէսիոս Արիսպագացոյ երկնային քահանայապետութեան գիրքէն դաս տալ հրեշտակաց կարգերը: Վերջապէս՝ երբ որ եկաւ այն սոկեբարձ թարգմանեան նաւը—ինքն Յակոբ Չրպետեան վարժապետաց վարժապետը, այն ութիւններէն, և այն բանութիւններէն ոչինչ չկարողացաւ մնկել նորաշէն դպրոցի մէջ, որ արդէն հնձել էր անհամար ոսկեմականք, և 1824 թուէն կարգադրուելու բանը՝ հաղիւ թէ 1864 թուի վերջումը կարելի է որ կարգադրեալ լինիլ, որ հնար լինի 1870 կամ 80 թուէն նրանէն պտուղը ապառել:

Ինքէ շատ առարկաներ, շատ լեզուներ, շատ ութիւններ և շատ բանութիւններ միանէն խռկելով՝ վարժառուն կրպայծառանայ և ուսումն կրուարրանայ, ազգը կրկատարելագործվի. ոչ երբէք: Հարցուցէք խաչատուր Արովեանի աշակերտներուն, քանի ութիւն և քանի բանութիւն կար նորա վարժարանումը, և ո՞ր վարժարանէն քան զնորա աշակերտները լաւ ուսեալ, ազգասէր և ազգասիրատան մարդիկ առա-

ջացան և ով կար նորա նման աշակերտի լաւ ճանաչում առաջ տանող, ինչ էր նորա հնարը. նա աշակերտին այն էր ասում, ինչ որ նորա մանկական միտքը կարողանում էր ըմբռնել. նա իւր ուսումնասիրութիւնն էր յարմարեցնում աշակերտներուն և ոչ թէ աշակերտներուն էր հպատակեցնում վարժարանական կարգին և ծրագրամնային. նա աշակերտէն այն չէ՛ր պահանջում, ինչ որ դեռ նորա մտքի մէջ սերմանած, տնկած և արմատացած չէ։ Եւ լաւն ու նախընտրելն էլ այս էր։

Բնական կարգին պիտի հետևիլ. անդուղքի վրայ պիտի առաջին տարին ատուխանէն տաք դնել. ծառը առաջ պիտի հողի մէջ հաստատուն արմատ ունենայ. շինուածքի հիմքը պիտի լաւ դրուի։ Աշակերտաց մտաց կարողութիւնը պիտի լաւ ճանաչուի, և նորա համեմատ ուսումն աւանդվի։ Ո՞րքան ցանկալի բան է ոսկին, նա էլ այնքան կըմանի քսակի մէջ, որ քան որ նորա պարունակութիւնը կընդունէ, քան զայն աւելի չէ՛ կարող տանիլ. դինու անօթը իւր չափով դինի կ՚առնու և ոչ աւելի։

ԳԼՈՒԽ 4.

Հայոց ազգի մէջ ո՛րքան վարժատուններ կան, որ մէջը առաջ ասել էին թէ՝ «մանկունք պիտի կրթուին» բայց այժմ տեսնում ենք՝ որ միւնք են բուն դրել։ Պատճառը ի՞նչ է։ Նախ որ՝ այն վարժարանի յառաջադիմութեան Հարկաւոր գումարը քարի ու փայտի են տուել, անշունչ պատեր են կանգնել, մեծածախ անխոհեմ մխողութեամբ՝ դեռ փոքրի անշուշտ կարևոր պայմաններէն զուրկ գոլով՝ մեծ մեծ բաներու են ձեռնամուխ եղել, միայն այս առածին վստահանալով թէ՝ ինչ օրն, ինչ էմ-նէ էմ-նէն ինչ է։ Երկրորդ որ՝ մէջի աւանդելի առարկաները չափուած չեն ուսանողներու կարողութեան հետ, աւելի վարժատան համբաւ են ուզեցել մեծացնել, քան աշակերտաց օգուտը ապահովել։ Երրորդ՝ քահանայացու մանկանց, վաճառականացուներուն, արհեստաւոր դառնալու երեխանց,

հոգագործ լինելություններուն՝ միօրինակ են ըսկսել ուսմանց մէջ դժար ճանապարհներով մանացնել։ Զորրորդ՝ ոչ վարժարանի շենողն է կամեցել իւր վարժարանի պրոգրամմանն յարմարել աշակերտաց կարողութեան և ոչ վարժապետն է կամեցել աշակերտներուն այնպէս սովորեցնել, ինչպէս որ նա է կարող հասկանալ. առաջին օրվանէն սկսել է նորա սկանջի մէջ բարբարոսական խօսքեր լսցնել, քոյ, մոյքոյ, շոշքոյ, ֆիլոսոֆիան, նա նա, որոց ինչ նշանակութիւն ունենալը վեց տարէն յետոյ էլ սովորած չէ, անգիր դիտէ և ոչինչ չէ հասկանում։ Հինգերորդ՝ աշակերտներէն պահանջել են, որ նոքա աւանդած առարկաները կարողանան անգիր պատասխանել, և որքան առարկայ կան՝ ամենն էլ անթերի և անպակաս, և մէկը հարցնող պատահած չէ, թէ այս առարկան որ հարկաւոր է վաճառականին, հարկաւոր կրլինի արդեօք և քահանային, կամ արհեստաւորին, թէ միայն մարի ծանրաբեռնութիւն է։ Եւ որքան մանկունք, որ կարող էին չափաւոր և ընտրանօք աւանդած առարկաներու քաջ ու հմտաւոր հմտութեամբ՝ փոքր ի շատէ օգնել իրանց մտաւոր ընդունակութիւններուն, չկարողանալով բոլոր առարկաներու

համախումբ խմբակը, որոնց որ չունի ոչ սէր, ոչ հակամիտութիւն իւր խելամտաւակի մէջ պարունակել, մնացել է վարժարանի հոլանաւորութիւնէն դուրս, ինչպէս անպիտան և անյարմար. մինչդ՝ եթէ խոհեմութեամբ մատակարարէին նրան այնքան ուսումն, որքան որ նա ընդունակութիւն ունէր առնուլ՝ նա պիտի ժամանակաւ դառնար անօթի ընտիր։ Միւսները՝ առանց քանքարի, զուրկ ամեն ձրից, միայն անդիր սերտելով, որպէս թէ յարդով գլուխը լցնելով, առանց դիտակցութեան մտաց, տացել են վկայական, անուն, արտօնութիւն և աղգի մէջ դիտնականութեան համբաւ, մինչ որ ամենմէկի իւր ամեն թէութիւնքը՝ նորա անձին մէջ խայտառակ են անում նորա կեղակարծ ուսմանց՝ մտաց անդիտակցութիւնը։ Վնասորդ՝ որ քան զամենն աւելի զօրեղ պատճառն է մեր աղգի մէջ ուսմանց չարմատանալուն և աշակերտաց ուսումնառութեան ասպարէզի մէջ թշուառ յետամնացութեան՝ վարժապետաց կամակորութիւնը, և վարժարանի կառավարչաց ապշութիւնը։ Կառավարչաց պակասամտութեան պատճառաւ վարժարանի և աշակերտաց վիճակը յանձնվում է մէկ այնպէս վարժապետի, որ Օսմանցոց

տէրութեան մէջ բաց ի դահճի, էլ ուրիշ պաշտօն չէր կարող առանալ։ Մառաշ մանուկը ընկնում է այն անագորոյն բարբարոսի ձեռքը, ինչպէս մէկ ժամանակ Լուդովիկոս 16-դի դահաժառանգ զաւակը՝ կօշկակար Սիմոնի ձեռքը. նա տեսնելով այն մանկան մէջ ուսումնասիրութիւն, առոյգութիւն, սրամտութիւն՝ դիւական նախանձով սկսում է ջանք անել, որ այն ժիր և աշխոյժ մանուկին շինէ ապուշ խելքի, ոչ թէ միայն ինքն է ծեծում անգութ անօրէնի նման, այլև մշտապէս չարախօսութիւն է անում պակասամիտ կառավարիչներու առջև, որոց սանձը կարողացել է առնուլ իւր ձեռքը. այն քանքարներու անունը, որով որ մանուկը պիտի առաքինութեան վարձատրութիւն ստանայ, անզգամ վարժապետը դրել է լրութիւն, յանդգնութիւն, անհնազանդութիւն, ապարատանութիւն, այնքան ութիւն, որ Ջրպետեանի պրոգրամմայի մէջ էլ չկայ։ Դիտաւորութիւնը ինչ է. որ այն քաջառու աշակերտներուն վարժարանէն զրկէ։ Ինչ պատճառաւ. կարելի է թէ՝ նորա հօր, կամ հօրեղբօր հետ ժամանակաւ վէճ (հոմ) խաղալու միջոցը կռիւ են արել. կամ կարելի է թէ՝ մէկ սատանայական կասկած մտել է

սիրտը, թէ այն մանուկը մէկ օր կարող է նորա տեղը վարժապետութիւն անել։ Այս լոկ կարելի ենթադրութիւններ չեն, իրական դիպուածներով ստուգված անցքեր են։ Վա՜յ այն վարժատան դլխին, որոյ մէջ այդ օձերէն մէկը բուն դրած լինի։ Ապա եթէ երկու և երեք լինին, ի՞նչ պիտի լինի այն աշակերտաց կեանքը։ Քանի՞ դար պիտի տևէ դոցա արած վնասուց տոյժը։ Այս հանդամանքներու մէջ ի՞նչ անէ ազգը, և ի՞նչ օգուտ պիտի բերեն քարապատուստ վիմարդեան եռայարկ յառաջադիմութեան դէմ կանգնեցուցած թումբերը։

Ա՛հ. ինչէ՞ն է, որ մեր ազգի մէջ ուսումն առնելու ցանկացողք շատ կան, իսկ ուսումն չէ յառաջանում։ Այս մասին մէկ կարծիք է ծագում մտքիս մէջ։ Մէկ մարդ քառասուն տարի պատրիարքի նշան ապատարդ լինելով՝ դպրոցներու մէջ քաշ գալով, ոչ թէ ուսումն առնելու մտքով, այլ ժամանակ անցուցանելու և Հայ գտնելու դիտաւորութեամբ, երբեմն աշակերտ, երբեմն վարժապետ, երբեմն դռնապան և երբեմն էլ՝ այլն լինելով, և զանազան պատուական և անպատեհ պաշտօններու մէջ թարթափելով՝ և իւր բոլոր կեանքը դրքերու մէջ անցուցանելով, ստացել է իւր ժամանակի ոգ-

ւոյն յարմար այնքան գիտութիւն, որ կարելի է թէ՝ մէկ կատուի բերը դառնայ, և հանդիսացել է ազգի առաջնորդ և ուղեցոյց լինելու մտքով, և Զրպետեանի նման մէկ քանի ութիւն և բանութիւն հետ ըստ հետէ շարելով՝ կամենում է ազգին նոր ճանփաներ ցոյց տալ. բայց այն չէ մոռանում խեղճը, որ մանկանց առջևը այն է կամենում դնել, ինչ որ ինքը քառասուն տարվան մէջն է իւրացուցել, այն-էլ կէսէն շատը մեղքով ու պատուհասով: Նորա նման խելօքներն-էլ իսկոյն համոզվել են և շատ հաւանութիւն են տալիս նորա քարոզած գաղափարներուն, և այս այնքան դէպի դուրս է ցցվում, մինչև որ կամայ ակամայ մարդու միտքն են բերում Աղայ Մարգար Զաքարեան Խոջենցի ուսանաւորի խօսքը, որ ասել է «Սին գիտութեամբ ոգէտք վայլին, և անուամունք նոցա զմայլին, նայլն. «Զինգլանք շալոյ, Քնարք օնոյ:» Այս ո՞ր տեսակ թերամիտներն են, որ այդպէս զմայլելով հաճութիւն են ցոյց տալիս այն խելօք Դաւիթի, մեր ժամանակի նոր Պիւթիայի գարիբայական պատգամախօսութեան: Այն տեսակներն են, որոնք որ բնաւ իրանց սեփական համոզմունք ո՛չ ունեցել են, ո՛չ էլ պիտի ունենան. այլ «Զինգլանք շալոյ՝

պատանոյս կըզմայլին, հանանոյ ֆիոէր՝ խոտանոյս. թէ Վոլիէրի գիրքը կարդան՝ նրա համախոհ կըդառնան, թէ Ռուսոյի մատեաններըը կարդան՝ նրա կըհպատակին, և չեն կարող հասկանալ թէ՝ այն երկուսը մէկ մէկու հակառակ են խօսում. նոցա համար այն էլ լաւ է, այն էլ (и то лучше, и то лучше), նրանց թուում է պերճախօսութիւնը և ոչ թէ իմաստից արժանաւորութիւնը և նպատակի անշեղութիւնը: Նոքա Լէրմոնտովի մէջ կըհաւնին Բանապիոնի տաղանդաւորութիւնը, և այն չեն միտք բերիլ, թէ քառասուն թուականներու բարքերի և ժամանակի ոգուց համեմատ գրած բաներըը, վաթսուն ու չորս թուականին արդէն այնքան անյարմար են, ինչպէս քաղցրաւենեաց յետուէն մանանեխը (հուրտալը): Նոքա Գոգոլին կարդան՝ նորա կարծեաց կըհակամիտեն, Բօյլը կարդան՝ նրան կըհպատակին. Բէնթէրին կարդալով՝ նէութապաշտ են, Ռէնանին կարդալով՝ անհաւատ կամ հրէայ: Ամենարանի դէմ օձի պէս ականջները տուտով խցկելով՝ խուլ են, և լեզուներով ապապանձուած, և կրօնական ճշմարտութիւնները ոչի տակ դնելէն չեն պատկառիր՝ միայն նորաձեւութեան հպատակելով: Ամէնի ազատաժողով ընկերշակութեան ցնորքին և ցնդաբանութեան՝

ոմ է յիմար, որ իւր Համոզմունքը ենթադրէ։ Ազգը կըկարդայ այդպիսի առաջարկութիւնը, կըլսէ և միւսների ծափահարութիւնը, բայց քինթը պռունգը ծռմռելով յետ կըդնէ։ «Այս իսկ են վարձք նոցա»։

Սպա եթէ մեր ազգի մէջ այժմ գտնուած ազգասէր դիտակներ կամենում են ազգին երախտաւոր լինել՝ թող այսպէս անեն։ Այժմ ազգի մէջ շատ բժիշկներ կան, որ արդէն այժմեան Ֆիզիոլոգիայի և նորա օժանդակ դիտութիւններու մէջ այնքան վարժ են, ինչպէս որ քառասուն տարվան աւագ երեցը՝ «Համբարձիւ» մէջ. վարժ են և անդամալնութեան մէջ. թող սկսին Հայերու դլխի գագաթի սկաւառակներու վրայ դարձուցանել իրանց ուշքն ու միտքը, և իրանց դիտութեան պտուղը իրանց ազգին տան վայելել. քննեն նոցա ուղղի և խելապատակի Հանգամանքը, և վճռարար ասեն, թէ Ռուսաստանի Հայոց ազգի գլուխը այսքան է կարող պարունակել. Պարսկաստանինը՝ այսքան. Օսմանեան տէրութեան Հայերունը՝ այսքան, և ամեն մէկ դասակարգին իրանց ուժոյ Համեմատ բան դնեն։ Եթէ ազգը այս ձանփով դուրս չըգայ այժմեան մոտոց թմրութենէն՝ այն ժամանակ թող իմանան, որ «ամենայն ինչ վճարեալ է»։

բնաւ թոյլ չըկարծեն, թէ մի և նոյն դեղը մի օրինակ պիտի ներդործէ Հնդստանի Հայերու վրայ, և Վրաստանի Հայերու։ Հայ կայ, որ իւր բնակեալ տեղը արդէն Հարիւրաւոր տարիներով՝ պապերու և ապապապերու ժամանակներէ հետէ է կեցել, աղդէ ազգէ սերել, և այն տեղ է ծնել, և այն դաւառի բնական ազդեցութեան տակն է ընկել. Հայ կայ, որ դեռ նոր է մէկ տեղ եկել, և այն հողը, որոյ վերայ որ նա արդէն նստած է՝ դեռ չէ խմացել նորա ոգի ծաներութիւնը. ի՞նչպէս է կարելի երկուսին մէկ կարծել, մէկ դեղ տալ, մէկ կրթութիւն առաջարկել և մէկ պտուղ պահանջել։

Հայ կայ՝ որ Անգլիացոց չափ է շինել իւր սկաւառակի տարածութիւնը, ծայրագոյն թուանշանին է հասցրել իւր խելապատակի պարունակութիւնը և փիթիացուցել է իւր ուղեղի կաղմութիւնը. Հայ կայ՝ որ Գոթէնթոգի տղայական հասակի մէջ է դեռ թողել իւր մտաւորական կարողութեան զարգացումն։ Հայ կայ, որ կրթութեան ամեն աջողակ առհաւաստեայքը ունի, բայց ամենահարկաւոր պարագայից պայմաններէն զուրկ է. Հայ կայ՝ որ արտաքին հանգամանքը, բարեբաստիկ դիպուածներու

համախմբութեամբ, արդէն հաւաքել է իւր շրջապատը, բայց ուղեղը մնայել է ծմակային նեղ ու աղօտալոյս վրանի տակը՝ խակ ու տոխալ։

Խօսինք միայն մէկ քաղաքի վրայ, որովհետև աղգը շատ է և ցրուած. նրան չէ կարելի մէկ կատեդրիայի տակ դնել։ Արդէօք Շուշի՞ քաղաքը ընտրենք մեզ համար յարացոյց, թէ Ակնը. Երևանը՝ թէ Թոխաթը. Թիֆլի՞զը՝ թէ Եղեսիան. Սմրնամը՝ թէ Ադուլիսը։ Լաւ թող իմանան մեր ժողովրդապետք, որ մի և նոյն կարգը, որն որ կարող է լինել արդիւնաբեր Տիգրանակերտումը՝ նա խաղաղ անպտուղ կլինայ Մոսկուայումը, որովհետև այլ է նորա բնակիչ Հայերու ուղղութիւնը, հաւնութիւնը, պատրաստութիւնը, և այլ է սորա մէջ պանդխտացած Հայերու հանգամանքը և կենցաղավարութեան խնդիրները։ Ուրեմն աւելի դիւրաւ հասկացնելու համար, թողնենք հեռաւոր քաղաքները, որոնք որ մեր աչքերէն տեղական և պատմական պարագաներով վարագուրված են Հայաստանի խորին լեռնամէջներումը, և խօսինք միմիայն Ներ-Նախիջևան քաղաքի վրայ, ուր որ Հայերը ահա՛ ութսուն և հինգ տարի է, որ բնակվում են։

Այս մէկ նոր և փոքրիկ քաղաք է. սորա բնակիչքը բոլոր բաղմութեամբ, ըստ մեծի մասին, միասին են եկել գաղթականութեամբ Ղրիմու երկրէն, ուր որ Հարիւրաւոր տարիներով կեցել էին Թաթարի, Օսմանցոց, ճինիվլիզի, Վենետիկի և ուրիշ ազգութեանց տակ։ Բայց Ղրիմու մէջ ամենքը մէկ տեղ չէին բնակված, և ամենքը մէկ ժամանակ և մէկ տէղէ չէին եկած. ինչպէս զանազան տեղերէ և զանազան ժամանակ Հայաստանէն գաղթել էին, այնպէս էլ զանազան ժամանակ և զանազան տեղերէ եկել Հասել էին Ղրիմ և բնակութիւն էին Հիմնել Ղրիմու զանազան քաղաքներումը և գեղերումը, Հպատակել էին զանազան տիրութեանց և զանազան ծէսերու, իւրեանց սովորականէն-էլ պահելով ինչ ինչ՝ որը աւելի, որը պակաս։ Ղրիմու թերակղզին թէ և փոքրիկ տեղ է, բայց նորա իւրաքանչիւր քաղաքը այլև այլ տեղական Հանգամանք ունի։ Պահէնարայ Հիւանդութիւն չկայ, իսկ այլ տեղերումը կայ. ուրեմն զանազան գաւառներու աղդեցութիւնը կարող էր ունենալ իւր բնակչաց վրայ զանազան ներգործութիւն։ Սոքա միայն կրօնով էին մէկ, որովհետև ամենեքեան Լուսաւորչեան Հայ Քրիստոնեայ են. իսկ սովորութիւն-

ներով, ծէսերով, լեզուի արտասանութիւնով, արտաքին հագուստներով, առանձին ապրուստի տարազներով, ուտելիքներով, խմելիքներով այնքան միմեանցմէն զանազան էին, որ դեռ նոր են սկսել անխտիր մէկ ազգէն հետ խնամութիւն անել։ Նոր եկած ժամանակը Գէֆէցին Կէօղլեվցուն յօժարութեամբ ոչ աղջիկ կուտար և ոչ աղջիկ կ՚առնուր. և մէկ մէկու Գէֆէցի, Պահճէսարայցի, Կէօղլեվցի կ՚ասէին։ Սոքա երբ որ համախմբուեցան Նոր-Նախիջևան քաղաքումը, 1779 թուին, երկար ժամանակ պահեցին իրանց վաղնջուց սովորութիւնները և ծէսերը, ամէն մէկ քաղաքի ժողովուրդք առացան իրանց համար առանձին եկեղեցիք և առանձին գերեզմանատուն։ Նոցա հետ եկած հոգևորականք ևս շատ ձեռնտու գտնելով այս վերջին հանգամանքներուն, իւրեանց անձնական շահը այն տեղ տեսնելով, որ Գէֆէցիք ունենան առանձին եկեղեցի և առանձին գերեզմանատուն, Խարտուցիք առանձին, Պահճէսէրայցիք առանձին, Ամիջևթցիք առանձին, Կէօղէվէցիք առանձին, Էսկի-Ղրիմցիք առանձին և Օրբաղարցիք առանձին։ Ինչպէս որ քաղաքացիք նստան առանձին, նոյնպէս և գերեզմանցիք նստան առանձին առանձին հինգ գերեզման մէջ։

Ղրիմն դուրս գալու ժամանակը ունէին իրանց հետ շատ գիտնական ընթերցասէր մարդիկ, որոնք որ Ղրիմու մէջ երկարաւոր կեցութեամբ առաջացել էին։ Երբ որ բնակվեցան Նոր-Նախիջևանի մէջ, Ռուսաց տէրութեան կենցաղակրթութեան հպատակելով շատերը թողին իրանց ընիկ սովորական անսեթևեթ պարզութիւնը և սկսան Ռուսաց մեծամեծաց նման շռայլ ապրուստ մէջերը տարրացնել. ոմանք աստիճանաւոր և դարձան. բայց նոցանէ, որոնք որ սկսան Ռուսաց ազնուականաց կենցաղավարութեան յարմարեցնել իրանց կենցաղավարութիւնը, մնացին միայն մէկ քանի տուն պայծառութեան մէջ. մնացածները օր ըստ օրէ սնանկացան, աղքատացան և չքաւորութեան մէջ անհետ կորան. և թէ ոմանց թոռները կամ ծոռները կան՝ աղքատութեան մէջ են։ Նոր-Նախիջևանցոց մէջ Հայոց աղգը կամ երկրագործ էին, կամ խաշնադարման, կամ արհեստաւոր կամ խանութպան։ Նոր-Նախիջևանայ գեռատիպնեայ գրութիւնը աւելցրուց նոցա այս չորս տեսակ բանուգործի վրայ՝ ձկնորսութիւն էլ։ Ծովային առուտուրը և իրանց հողի բերքը շուտ տարրացուցին տոցա մէջ ցորենի վաճառաշահութիւնը։ Բայց այս

միջոց Նոր-Նախիջևանայ բնակիչք ընկան մեծ փոփոխութիւններու տակ. թէպէտ նոցա ցամաքային առուտուրի մէկ ծայրը էր Ռուսաստանի մայրաքաղաքներումը, մէկ ծայրը Վրաստան և Կովկասի սարերումը, իսկ ծովայինը հասնում էր մինչև Պօլիս և Միջերկրականի ծովափնեայ Եւրոպայի քաղաքները, և սոքա համարեա՛ թէ միջնորդ էին Հաշտարխանի և Կասպից ծովի առուտուրի Սև Ծովի հետ միաւորութեան, սակայն ով որ Ղրիմէն հարուստ էր դուրս եկած, տասէն մէկը չկարողացան պահել իրանց հարստութիւնը իրանց դերդաստանի մէջ, և ըստ մեծի մասին աղքատացան. իսկ աղքատները և աննշան մարդիկ հարստացան, ինչպէս որ աշխարքի բերմանց ընդհանուր հոսումն է:

Նկեղեցեաց հետ միասին վարժարան էլ հիմնեցին, վարժապետներ էլ ունեցան. բայց մէջերէն գրե՛թէ բնաւ չառաջացան ուսեալ մարդիկ, կամ դո՛նէ այնքան ցանցառ երևեցան, որ բնաւ նշմարելի չեղան: Պատճառն ի՞նչ էր:

Գլխաւոր պատճառը այն էր, որ դեռ քաղաքի մէջ ճոխութիւն չկար. ճոխ նա էր, ով որ ուտելու հաց ունէր և այլոց ձեռին չէր մոռիկ տալիս. և այսպիսի մար-

դիկ էլ թուռուլ շատ սակաւ էին։ Հասարակութեան բազմութիւնը դեռ չունէր զօրութիւն, չունէր կարողութիւն։ Այն քաղաքը դեռ հարուստ չէ կարող սալել, եթէ իւր մէջ ունի միայն քան-երեսուն հոգի հարիւր հազարի տէր, իսկ միւսները աղքատ են. ամեն աղքատ գիւղի մէջ կը գտնվին մէկ քանի հարուստ, որոց միմեանց հետ յարաբերութիւնը ի՞նչպէս է. կա՛մ աղքատներու աղքատութիւնն է պատճառ հարուստներու հարստանալուն, կա՛մ հարուստներու հարստութիւնն է պատճառ աղքատներու աղքատ մնալուն։ Քաղաքը հարուստ կ՚սալի այն ժամանակ, երբ որ մէջը հարիւր հազար ունեցող թէ և տասն հատ լինի, բայց յիսուն հազար ունեցող յիսուն հատ գտնվի, քսան ու հինգ հազար ունեցող՝ հարիւր հատ գտնվի, տասն հազար ունեցող՝ երկու հարիւր հատ։ Հարիւր հազար ունեցողները միայն բանի սկզբնաւորութիւն կ՚անէին, միւսները՝ օգնութիւն, և գործը առաջ կ՚երթար։ Բայց դեռ Նոր Նախիջևանայ մէջ չէին ճոխացել միջադաս մարդիկը. հազիւ էին կարողանում իրանց քաղաքը, իրանց դերդաստանը կառավարել. ղուսակաց վայելուչ կրթութիւն տալու հոգը երրորդ կամ չորրորդ դասակարգի խըն-

դիր էր։ Շատ ճշմարիտ և արդար է Բոյլի խորհրդածութիւնը և քաջայարմար Նորնախիջևանայ վիճակին. „Մէկ քաղաքի, կամ „մէկ հասարակութեան, կամ մէկ ազգի ա„ռաջին հարկաւորը այն է, որ ապրուստի „ճանփան ապահովէ. երբ որ մարդ էլ հոգ „չէ ունենում թէ՝ ի՞նչ ուտեմ, այն ժամա„նակն է միտքը գալիս, թէ ի՞նչ հագնիմ։ „Երբոր ուտելու և հագնելու կողմանէ ապա„հովւում է իւր անձը՝ այն ժամանակ է ը„կնում զարդարանքի հոգս քաշել. և որովհետև ուտումն էլ զարդարանք է հոգւոյ, „երբ որ զարդարում է իւր անձը, ընտանիքը, „տունը, յետոյ է կարողանում մտաւոր հրա„հանգութեան վրայ ուշքը դարձնել. քաղ„ցածի կամ տկլորի միտքը չի դար ուսման „և կրթութեան ջանք“։ Հնդստանի մերկիմատակք կամ ինքն Գիոգինէս ոչ թէ աղքատութեան մէջ էին իմաստասիրելով կրթուել, այլ կրթութենէն ետքն էին իմաստասիրել և աղքատութիւնը ընտրել։ Ինչ որ այժմ տեսնում ենք Եւրոպացոց մէջ, նոյնը պիտի չպահանջենք Հայերիցը, և Հայք Ասիացիք են։ Գերմանացի աղքատ հոգաւորի համար էլ Շիլլէր, Գեօթէ նոյն են, ինչպէս որ Հայց կամ Ջուր. բայց դեռ մեր ազգը այն աստիճանին հասած չէ. չէ

կարելի սրամէն նոյնը պահանջել. թողէք առաջ, որ սա էլ նոյնպէս առաջ երթայ, և ապա պահանջեցէք: Թողէք որ առաջ երթայ. դժար և անմերժելի խոչընդոտներով ճանփան մի՛ փակէք, և կըտեսնէք որ՝ նա էլ դուրս կուգայ այս հոգեկան թմրութենէն, բայց շատ ժամանակ է հարկաւոր, շատ ջանք և շատ համբերութիւն:

ԳԼՈՒԽ 5.

Նոր-Նախիջևանցոց առաջ հարկաւոր էր զօրանալ ճոխութեամբ:

Սոցա մէջէն շատը, որ Ղրիմ ճոխ և հարուստ էին, կալուածատէր և ապրուստը ապահոված մարդիկ էին, իրանց այգիքը, ջրաղացները, անդաստանները, ստղաբեր պարտէզները, արդիւնաբեր հիւրանոցները, պանդոկները թողնելով Ղրիմումը, արդէն տնանկացել էին: Նոր Նախիջևանի անընտել օդը նրանց մէջէն շատին կոտորեց. Ղրիմու առատաբեր երկրի տեղ ամայի երկիր ստանալով, մինչև որ ընտելացան այս կողմերու առուտուրին, ընդլայնեցան ազգերուն, գեղերուն, քաղաքներուն՝ շատը աղքատացան. Ղրիմէն դուրս եկած

հարուստները, գիտնականները՝ որը աղքատացան, որն էլ մեռան. այնուհետև Ղրիմէն հետերը բերած ուսմանց շարունակաբար ծաղկելու և նոր գաղթականաց մէջ հանապազորդելու բոլոր առհաւատչեանները և հնարները բնաջնջ կորան. և այս պատճառաւ հարկաւորապէս պիտի այս՝ երկրէ երկիր տարագրուած խեղճ Հայերը այնքան ապաստին, մինչև որ Նոր-Նախիջևանայ նոր բնակիչք իրանց նոր հայրենիքի մէջ բնականային, և այն տեղ աճեցնէին այն ամեն բնական և բարոյական կարողութիւնները, որոնք որ ապահովում են ուսմանց և կրթութեան առաջին սերմանց տարրը։ Այդ հանգամանքին հարկաւոր էին գոնէ հարիւր տարի, որ այն գաղթականներու դէթ վերջերորդ պորտը հասնէր այն վիճակին, որ նորա վրայ կարողանային լաւ աղդեցութիւն ունենալ բնական և բարոյական պատճառները՝ տեղական և ֆիզիոլոգիական յաջողակ հանգամանքներու համաձայնութեամբ։

Պատմական վաւերագրութիւնքը վկայում են որ՝ Ղրիմու էջիմն պուրս էնդ Հայէրը Լուսալ էին էջեր հոլոս վէց հոնիս Գէնուպոսոն։ Սոքա թէ՛ ճանապարհորդութեան ժամանակները և թէ՛ Նոր-Նա-

խիջևանայ մէջ բնակվելու առաջին քսան ու նուհինգ տարիները օր ըստ օրէ այնքան նուազեցան, որ համարեա՛ թէ կիսոյ չափ մնացին։ Սոցա նուազելու ժամանակը չէր կարելի պահանջել, որ նոքա մտաւորական կրթութեան պարապէին, լուսաւորութեան և յառաջադիմութեան արգասիք ցոյց տարին այն պանդխտութեան երկրումը. և այս կարկամ կանգ առնուլը այնքան պիտի տևէր, մինչև որ այն երկրի օդին և կլիմային ընտելանալով սկսէին քիչ քիչ աւելանալով հասնիլ այն թուոյն, որքան որ էին իրանց գաղթականութեան առաջին օրերումը։ Քանի՞ տարի էր պէտք սրան, քանի՞ պորտ պիտի փոխուէին,—ըստ ինքեան յայտնի է։ Ցիսուն, վաթսուն տարին բաւական չէր, որ Նոր-Նախիջևանցոց բերէր հասցնէր այն աստիճանին, այն վիճակին, որ նոքա արդէն կարողանային աչք բանալ իրանց չքաւորութենէն ու սկսէին իրանց մէջ զգալ այն կարիքը և հասկանալ թէ՝ արդէն հարկաւոր է անշուշտ իրանց մէջէն մտաւոր կարողութեան արգասիք դուրս բերել։ Մինթէ այսքան ժամանակի մէջ չըկայի՞ն, չէի՞ն պատահում Նոր-Նախիջևանումը հարուստ, ճոխ, ընթերցասէր, ուսումնասէր, մտացի, խելօք, զգօն մար-

դիկ։ Պատահում էին. բայց ամեն հանգամանք, ամեն պարագայք չէին յաջողակ համախմբվում, որ մտացին կարողանար իւր մտաւոր զօրութեան պտուղը հասկացնել. մէկը փլա՜ էր ունենում, խշտակ ո՛չ. մէկը խշտակ էր ունենում, փլա՜ ո՛չ. միւսը հա՛մ փլա՜ էր ունենում, հա՛մ խշտակ, պիտոյ չէր ունենում. այսպէս շատ փլաւ և շատ խշտակ զուր կորչում էին. վաթսուն տարին բաւական չէր, որ այնպէս շարայարէր հանգամանքները, որ փլաւը, խշտակը և դգալը միասին համախմբվէին։

Շատ մարդիկ առաջացան ճոխութեամբ. բայց նոցա ճոխութիւնը ընկերակից չըգտաւ իրա համար ուսումնասիրութիւն-է, և այն ճոխը մինչև իւր կեանքի վերջը մէկ ոտքի վրայ կաղաց։ Շատ մարդիկ դուրս եկան մտաւոր քանքարներով զարդարված, նոցա-է ճնշեց ապքաստութիւնը և չտուեց նրանց մէկ այնպիսի դիւրութիւն, որ նոքա իրանց ձիրքը կարողանային փիթիեցնել և առաջ տանել։ Կային այնպիսի մարդիկ-է, որ հա՛մ ճոխ էին, հա՛մ մտացի, հա՛մ-է ումանց ճաշակը արդէն առել էին. բայց տոցա մէջէն ոմանք, որ պիտի ուսումնասէր լինէին, ասելի ուսումնատեաց էին երևում, և ոմանք-է ասելոց դէմ ասելութիւն ու-

ենեալով, ուսման վրայ այնպէս էին մտիկ անում, ինչպէս մէկ Հայելոյ վրայ, որ միշտ շինի շլութիւնը իրա առջևը դնելով՝ դատախազի նման գրգռում էր նոցա կիրքերը. վանորոյ նոքա-էլ ուսումնասէրներուն յետ էին ձգում, իսկ տղէտներուն առաջ քաշում, իրանց ախտաւոր կրից Հպատակելով։ Ոմանք-էլ ուսման առջև խոչընդակութիւններ էին շարում, ուսելոց դէմ որոգայթներ լարելով, ինչպէս որ սովորութիւն է այն Հասարակապետութիւններու մէջ, ուր որ Արիստոկրատեան և Դեմոկրատեան կուսակցութիւնները անդադար մէկ մէկու դէմ դարանակալութիւններ են անում։ Այս և սոցա նման պարագայից խուլումն պատճառ էր դառնում, որ Նոր-Նախիջևանի հողի վրայ չէր արմատանում մտաւոր Հանդիսից յառաջադիմութիւնը. և ով որ փոքր ի շատէ Հեռամուտ էր լինում ուսման, նա տակաւ առ տակաւ Հեռանում էր իրա Հայրենակցաց մէջէն, ընկնում էր մէկ կենամաշ միայնութեան մէջ և իւր Հայրենիքումը դառնում էր պանդուխտ. որովհետև նա մէկ անգամ իւր ուսումնասիրութեամբ, իւր ուսումնառութեամբ, մանաւանդ այն քաղաքէն դուրս տեղերումը, ձեմարաններումը, համալսարաններումը կրթուելով՝ օտա-

բանում էր իւր ընկերակիցներից, մոռանում էր իւր Հայրենեաց սովորութիւններէն այն-էլ, ինչ որ պէտք չէր մոռանալ, և դառնում էր խապառ այլ մարդ, օտարազգի, պանդուխտ. նա նրանց էր վայրենի կարծում, նրանք՝ նրան էին վայրենացած համարում. ոչ խօսքը՝ խօսքերուն էր յարմարում, ոչ դաղափարը՝ դաղափարներուն, և նա իւր այն նորօրինակ օտարոտի առանձնութեան մէջ իրան կարծում էր ապաբաղդ։

Այն ժամանակի ռազմական դաստիարակութիւնն-էլ չունէր այն ուղղութիւնը, ինչ որ այժմ տեսնում ենք լուսաւորեալ Եւրոպայի մէջ. ուսեալք, Եգիպտոսի քրիստոնութեան կամ Բրահմաններու և Պանդարիններու նման, իրանց հեռացնում էին իրանց ծնող և եղբայր ժողովրդեան մէջէն, ժողովրդականութիւնը մի՛կ սարսափելի թիւն էր համարված, ուսեալքը որպէս թէ այն ժողովրդեան մէջէն չէին, այլ երկնաքաղաքացի էակներ էին։ Այն-էլ պիտի ասել որ՝ այս օտար տեղերումը կրթուած թերուս ուսեալքը, իրանց եռանդուն պատանեկութեան ժամանակը թողած լինելով առանձնական ձիրս նման իրանց կամքին և իրանց հակամիտութեան ապատան, փոխանակ պիտանեցու ուսմանց՝ անպիտան և վնասա-

բեր խղէաներու մէջ տոգորվելով, բերում էին իրանց Հայրենիքի մէջ օտարոտի Հայեցուածներ, կրօնի, տիրապետական վարչութեան, աղգութեան դիմամարտ գաղափարները ազատամտութեան դիմայլակներով այլագուներով. և շատ անգամ իրանց լարած թակարդի մէջ ընկնելով և թերամտութեան որսիկ դառնալով, որով այլոց ևս պատճառ էին դառնում՝ ուտումն վնասակար ճանաչել և դատանել. և այսպէս՝ Նոր Նախիջևան քաղաքի բնակիչքը օր ըստ օրէ ուսման վերայ այլ և այլ ճախողակ կարծիքներ ստանալով՝ իրանց մէջէն առաջացուցին երեք տեսակ կուսակցութիւններ, որոց առաջինը, այն է՝ քաղաքացեաց մեծագոյն մասը, ուսումն Համարում էր (ումանց ուսեալ կարծած ամէհի անձանց վնասակարտութեան պատճառաւ) խոպառ վնասակար: Երկրորդը կամ միջին մասը ուսումն առնուլը լա՛ւ էր Համարում, քան զանուսումն մնալը (թէ և ուսումն մէկ վնասաբեր բան էլ որ լինի), վասնորոյ և անխտիր կամենում էր որ՝ ուսումն, ինչպէս մէկ անհրաժեշտ չարիք, մոնի ժողովրդեան մէջ: Խակ երրորդ կամ նուազ մասը Համարում էր թէ՝ կարելի է այնպիսի ուսումն տալ, որ խոպառ ազատ մնայ այն ո՛չ թէ ուսման, այլ

ուսերից թիւր ուղղութեամբ և թիւր ըմբռնութեամբ վնասաբեր կարծած ազդեցութիւնէն, և ժողովուրդին հանէ մոռց կուրութենէն: Երկու առաջինքը 1830—1850 աւելի զօրացան, բայց երրորդն էլ խապառ բնաջինջ չեղաւ: Մինչև 1860 թուականը երկու առաջին կուսակցութիւններու թագաւորութեան ժամանակն էր, որ Նոր-Նախիջևանաբնակ Հայոց ազգի յառաջադիմութեան այնպէս խոչընդակութիւն արին, որ նորա վիթխարումն դանէ հարիւր յիսուն տարի յետնահանջեցին: Ինչ էր սորա պատճառն էլ: Այն որ՝ դեռ բաղմութեան մէջ կարիքը չէր զօրացել: Հատաւ վախճաներորդ թուականը. երրորդ նուազ մասը գլուխը վեր բարձրացրեց, և այնուհետև սկսաւ Նոր Նայիջևանի համար նոր դարագլուխ....:

Այժմ Նոր-Նայիջևանցիք ունին այն ամենն առհասարակը, որոնք որ կարող են ապահովել նոցա ապագայ լուսաւորութիւնը. շատերը արդէն առել են ուսման քաղցրութեան համը. շատերը արդէն իրանց զաւակներուն պատրաստում են ուսման ասպարէսի մէջ ներս տանել. համարեա՛ թէ ամենքեան արդէն հասկացել են ուսման պիտանաւորութիւնը, և այն մարդիկ, որ մէկ ժամանակ ուսումնականաց հալածիչ

էին, այժմ իրանց որդւոց և դստերաց դաստիարակութեան հոգսերով քան զամենն աւելի են մաշվում։ Սորա գլխաւոր պատճառն էլ ի՞նչ է։ Ա.Հա՛ այս է։

Նոր-Նախիջևանի մէջէն ո՛չ թէ միայն հասարակաց չքաւորութիւնն է հեռացել, այլև հասարակաց մտքերու նախապաշարմունքն է իսպառ մերժվել։ Չեմ ասում թէ Նոր-Նախիջևանի մէջ ամենեքեան հարուստ են և մէջերը աղքատ չկայ. չեմ ասում թէ Նոր-Նախիջևանի մէջ առհասարակ ամենեքեան ուսումնասէր են. չեմ ասում թէ ամենեքեան պրոգրեսախոհ են։ Ո՛ւր որ կայ ճոխութիւն՝ այն տեղ աղքատութիւնն էլ անպակաս է. ուր որ կայ ուսումնասիրութիւն՝ այն տեղ անշուշտ պիտի լինի ուսումնասիրութիւն-էլ, անտարբերութիւն էլ. ուր որ կան պրոգրեսախոհք՝ այն տեղ անպակաս են բեռրոդրաքք և կոնսերվատորք։ Այլ Նոր-Նախիջևանցոց ամեն դատակարգի մէջ մուած է քաղաքավարութիւն, կենցաղակրթութիւն, լաւ կենցաղավարութեան սէր և ընտրութիւն, ախորժակ և ճաշակ. նոցա ապրուստը թէ՛ հագուստի կողմանէ, թէ՛ պարէնի, թէ՛ իրանց ներքին և արտաքին հանդամանաց, առաջվաններուն համեմատելով, չափազանց աղնուա-

ցել է, առուտուրը ծաղկել, երկրագործութիւնը, խաշնարածութիւնը, լաւ է և արդիւնաւոր. արհեստագիտութիւնը նոյնպէս չափաւոր, որ ուրքան կամենան, այնքան կարող են աճեցնել և զօրացնել: Այս ամեն յաջողութիւնները իրանց ձեռին պատրաստ ունենալով՝ սկսել են զգալ այն ուսման կարիքը. այս կարիքն է, որ Նախիջևանցոց հրաւիրում է ուսումն առնուլ: Մնում է որ ձեռնամուխ լինին ուսումն իրանց քաղաքի մէջ տարածելու: Այլ թէ ի՞նչ ճանփայ պիտի բռնեն, ահա՛ այս է հարկաւոր խնդիրը:

Ներումն Արշալոյս Արարատեան Լրագրի համար 723, մարտի 7 1864 թուի, կարդացինք, որ Օսմանեանց Հայոց Սահմանադրական կրօնական ժողովը ունի մէկ բարի դիտաւորութիւն՝ եկեղեցականաց կրթութեան համար մէկ բարձրագոյն դպրոց բանալ, որոյ մէջ, բաց ի ուրիշ պիտանացու առարկաներէն, պիտի աւանդվին Լատինացոց, Յունաց և Հրէից լեզուները: Լրագիրը, չգիտեմ ի՞նչ պատճառաւ, Լատին և Յոյն լեզուաց համար լռութեամբ է անցել, և միայն Հրէական լեզուի համար է ասել, թէ լաւ կըլինէր որ Հրէից լեզուի տեղ Ֆրանսիական համաշխարհական լեզուն աւանդվէր: Երևի որ դեռ ո՛չ Պօլիսումը և ո՛չ Խրիմ-

ռումը՝ մեր Հայրենակցաց միտքերը նախապաշարմունքէն ազատված չեն։ Եթէ Ռուսաց Տէրութիւնը դիմնազիաներու և պրոդիմնազիաներու կարգանորոգութեան մէջ լատինացոց և յունաց լեզուն կրկին հաստատեց, ակնարկ է իմանանք, որ նա իւր զաւակներուն պատրաստում է այս աշխարհահառաջադիմ ինքնակալութեան մեծ մեքենայի շրջադարձութեան համար, և այդ իսկ պատճառաւ բարւոք է համարել այդպէս կարգադրել, թէպէտ և շատ ուսեալք դեռ համոզուած չեն նորա ուղղութեան անշեղ լինելումը։ Մեր խղճալի ազգը լատին և յոյն լեզուով ի՞նչ պիտի անէ, երբ որ լատիներէն և յունարէն դիտցող քահանաներ, վարդապետներ և եպիսկոպոսներ ունենայ, ի՞նչ մեծ գործ պիտի կատարէ։ Այս տեղէն երևում է, որ Հայերէն քաջ դիտցող կարգաւորներ շատ ունի, և նոցա լատիներէն և յունարէն չիմանալը ազգին ամօթ և վնաս է բերել. այժմ կամենում է այն ամօթը ծածկել, այն վնասը հատուցանել և այն պատճառաւ շտապում է իւր թերին լցուցանել։ Բայց, ինչպէս որ երևում է, մենք դեռ շատ սխալ կարծեաց մէջ ենք թափառում, Հայերէն դիտցող կարգաւորք դեռ շատ չեն երևում, և լատին և յոյն լեզուի

կարիքը և կարօտութիւնը դեռ ազգին չէ ներղել։ Կարելի է թէ՝ աշխարքի մէջ մէկ մեծ փոփոխութիւն պատահի, և Հայոց ազգը հարկաւորութիւն ունենայ լատին և յոյն բարբառոյ. չեմ իմանում. այլ այն ի՞նչ փոփոխութիւն պիտի լինի, որ այդպիսի կարիք դուրս հրաւիրէ։ Կրօնական վիճաբանութիւններու դարը անցել է. և այժմ ոչ որ կամենայ այդպիսի մէկ վիճաբանութիւն յարուցանել, կարծեմ որ Ինքնիշխանությունն էլ տեղ չի դանիր։ Ի՞նչ նոր դիտութիւն կայ այդ մեռած լեզուներու մէջ, որն որ չկայ Ֆրանսիական կամ գերմանական լեզուներումը։ Լաւ չէ՞ որ մեր ազգը խօսի Ֆրանսերէն և գերմաներէն, որով որ ամէն լաւ ակումբներումը հարիւրաւոր խօսակից կըգտնվին, քան թէ խօսի լատիներէն և յունարէն, և իւր համար խօսակից ապրտրտէ վանքերու անկիւններումը. և գրաւենեակներու խորշերումը։ Թո՛յլ տուէք, թէ Աստուած կըսիրէք. բաւական է որքան ազգին սարէ սար ու ձորէ ձոր մանացրէք, թողէք որ ազգը խելքը գլխին հաւաքէ. նորից մի՛ շուարեցնէք։

Ո՛ր-Նախիջևանցիք թող իրանց մտքերէն հանեն այն Հանապարհը, որով որ մինչև այսօր իրանց զաւակներուն ուսումն էին

տալիս, իրանց քաղաքէն դուրս ուղարկելով։ Թէկուզ տարին հարիւր տղայ ուղարկեն և տարին հարիւր ուսեալ պատանիք յետ դառնան, թող լաւ հասկանան, որ այն օտարութեան մէջ վարժված ուսեալք՝ էլ նախիջևանցիք չեն, և եթէ նոցա մէջէն կան լաւերը, այդ նոցա բնատուր քանքարն է. ամենքեան այնպէս չեն դուրս դար. ընդհանրապէս՝ այդ վնասակար է դոնէ առ ժամանակ։ Նոր-Նախիջևանցիք պիտի իրանց քաղաքի մէջ ունենան իրանց զաւակներու կրթութեան տեղը, ինչպէս որ այժմ ևս ունին մեծ վարժատուն, որ բաւական է բոլոր քաղաքի մանկանց լուսաւորութեան։ Նոր-Նախիջևանցոց մանկունք անշուշտ պիտի այն տեղ ուսանին, և երբ այն քաղաքի մէջ աւարտեն իրանց ուսումը և նրամով իրանց Հայութեան մէջ լաւ ամրանան, այնուհետև կարող են երթալ մեծ մեծ քաղաքներու այցելութիւն, և այն ժամանակ այն ճանապարհորդութենէն կրբերեն իրանց Հայրենիք լուսաւորութիւն, օգուտ, և ոչ վնասակար գաղափարներ և աղդակործան սովորութիւններ, որոնց վնասը շատ են քաշել Նոր-Նախիջևանցիք, և շատ-էլ դեռ պիտի քաշեն։ Նոր-Նախիջևանցիք թո՛ղ մտքերէն հանեն՝ թէ իրանց զաւակներու

մի միայն լուսաւորվելու ճանապարհը լատինացոց և յունաց լեզուներու տեղեկութիւնն է. և եթէ ինձ չեն հաւատար, թող հարցնեն նրանց, որոնք որ այդ լեզուները արդէն գիտեն, և Նախիջևանցոց մէջ են բնակված, և նոցանէն թող տեղեկանան և իմանան, թէ այն լեզուները տուած են նոցա կեանքին մէկ փրոֆիչանի դիւրութիւն, թէ միայն նոցա ուսման ժամանակը՝ խլել են նոցանէն ամենապատուական միջոցը, և ծանրաբեռնել են նոցա միտքը և խոչընդակ են դառել, որ նոքա՝ այն ժամանակը կարող էին գործ ածել աւելի հարկաւոր առարկաների վրայ, աւելի հարկաւոր բաներ սովորելու համար, որոնք որ նոցա կենաց գործնական մասին աւելի օգտակար կարող էին լինել: Թող Նոր-Նախիջևանցիք ընային Ֆրանսիացոց, Գերմանացոց, Իտալացոց և այլ Եվրոպացի ազգաց, որ նոքա իրանց համալսարաններու հիմք՝ այդ լեզուներն են դրել: Նոցա ազգութեան հիմքն էլ այդ է, նոցա լեզուներու հիմքն էլ այդ է, օրէնքներու հիմքն էլ այդ է. նոցա կրօնի հիմքն էլ այդ է, նոքա իրանքէլ այն երկիրներու վրայ են նստած, որն որ առաջ Յունաց և Լատինացոց ազգերունն էին: Պատմութիւնէն յայտնի է՝ որ Իտալիայի ծովե-

զերքը Յունաց գաղթականութիւններն էին ծաղկեցրել, և Իտալիա՝ Մեծ Յունաստան էր ասվում։ Հռոմ՝ Լատինացոց երկրումը շինուեցաւ, և Հռոմայեցիք՝ Իտալիայէն իրանց ձեռքը երկարացնելով՝ Լատինացոց տարրը սերմանեցին այն ազգերու մէջ, որոնք որ այժմ էլ Հռոմայեցոց բողքոջ են համարուած։ Ինքա չեն կարող չսովորիլ, նոցա անշուշտ հարկաւոր է. թէպէտ նոքա էլ այժմ ձանձրացել են այն Լատիներէն և Յունարէն դպրութիւնէն, և կամենում են նոցա դպրոցական հոգաբարձութեան տալէն դուրս գալ։ Իսկ մեզ՝ խեղճ Հայերուս, մանաւանդ մեր խղճալի հոգևորականներուն, ինչերո՞ւս է հարկաւոր. ո՛չ մեր կրօնը Լատինացոց կրօնի հետ ունի կապակցութիւն, ինչպէս որ Ռուսաց կրօնը՝ Յունաց կրօնի հետ, ո՛չ մեր ազգութիւնը, ո՛չ մեր լեզուն, ո՛չ մեր դպրութիւնը, ո՛չ մեր երկիրը, ո՛չ մեր քաղաքական օրէնքները, ո՛չ մեր բարքերը, ո՛չ մեր սովորութիւնները։ Դեռ չեմ ասում այն, որ մեր նախանիք ամենայն հնարքը գործ են ածել մեր ու նոցա մէջ դնել միջնորմն, որ մեր ազգութիւնը և կրօնը վառանդի մէջ չըլինի. և ո՛վ որ աչք ունի և միտք՝ յայտնի կարող է տեսնել, որ մեր ազգութեան և կրօնի պահպանողը այն է,

որ մեր ազգը Լատինացոց հետ ուսումնական յարակցութիւնը խզել է։

ԳԼՈՒԽ 6.

Որովհետև մենք վաճառական ազգ ենք, թէ մեզ հարկաւոր է օտար լեզու սովորիլ, աւելի հարկաւոր է, առաջ տանուտէրական լեզուն (զորօրինակ Ռուսաստանի Հայուն՝ ռուսերէնը, Տաճկաստանի Հայուն՝ տաճկերէնը), և ապա Ֆրանսերէն, յետոյ գերմաներէն, կամ իտալերէն (լինգուայ Ֆրանքա) և յետոյ, թէ կամիս, անգլիարէն։ Այս լեզուները կենդանի լեզուներ են, գործածական լեզու, աշխարքի որ կողմն էլ որ երթաս՝ այս լեզուները կլսես, մանաւանդ Ֆրանսիացոց և տաճկաց, որ այս երկու լեզուով կարող ես բոլոր աշխարքը պտըտիլ։ Մենք ասում ենք թէ՝ Հայերէն գրաբառ լեզուն հարկաւոր չէ, որովհետև մեռած լեզու է. այդ ի՞նչ զարմանալի միտք է, որ օտար ազգաց (գրաբառ) մեռած լեզուն, որն որ ազգի մէջէն

կարող էն միայն մէկ քանի մարդու ազգ գալ, և այն էլ միայն իրայ գրասենեակի մէջ, բոլանդակ ազգի համար նուէն վէմ գայթակղութեան շինուի, և ընդհանուր ազգի օգուտը մէկ քանի մարդոց կեղակարծ օգտի և կարծիքական պիտանաւորութեան զոհվի։ Նոր-Նախիջևանցոց այդպիսի առապարները ճանապարհ չեն դառնար. Լատինացոց և Հելլէնացոց լեզուքը նոցա խիլքի ու մտքի բանալիք բնաւ չեն դառնար։ Եթէ մէջերէն քանքարաւոր մարդիկ դուրս գան, որ իրանց համար հարկաւոր համարեն, միմիայն մէկ քանի հին գրուածներ հասկանալու համար, Հոմերոս, Վիրգիլիոս, Կիկերոն, Դիմոսթէնէս, Տակիտոս, Տիտոս Լիվիոս, Ովրատիոս, Ովիդիոս, և այլն և այլն, կարող են յետոյ ինքնադլուխ սովորիլ, և ոչ թէ մէկ քանի մարդոց համար ճանփայ բանալու մտքով՝ հասարակաց յառաջադիմութեան ճանփու վրայ այն հրէշները դնել, որ մինչև այսօր էլ զարգացման ճանփայէն մեր խեղճ Հայերուն, ճիւաղներու նման արհաւիրքներով զարհուրեցուցած, յետ են փախցրել, և այսուհետև էլ նոյն յետամնացութեան և յետադիմութեան արգասիքը պիտի քաղել տան։

Ես ինձ համար ամօթ եմ համարում,

որ Նոր-Նախիջևանցոց ասում կամ խորհուրդ տամ, թէ այսպէս կամ այնպէս արէք, կամ վարժատուններ շինեցէք կամ ուսումնարաններ բացէք։ Եթէ մէկ հատ փոքրիկ Նոր Նախիջևանին այսպէս, ուր մնաց բոլոր ազգին։ Ես ինձ ուրբան հանճարեղ (геніальный) մարդ պիտի կարծած լինիմ, որ ինձ ներում այդքան յիմար յանդգնութիւն, միթէ այդ մէկ փոքր խօսքի տակ չէ պարունակվում այս ուղտի չափ մեծ խմաստը, թէ դուք ամենեքեան յիմար էք, ես եմ միայն ձեր մէջ խելօք, եկէք ես ձեզ սովորեցնեմ։ Այլ իմ կարծիքովս այսպէս է։ Եթէ մէկ ոչ և իցէ տէրութիւն էլ կամեցել է իւր ենթադրելոց մէջ տարածել բռնութիւամբ թէ լուսաւորութիւն և թէ այլ ինչ, անպտուղ է մնացել և հակադարձ արդասիք է տացել։ Եթէ կռապաշտ ազգերը հալածանք չըհանէին քրիստոնէութեան դէմ՝ Աւետարանի յաղթանակը ոչ այսքան մեծ կըլինէր, ոչ այսքան փառաւոր։ Հայերուն՝ իրանց հետ կրօնական բաներու մէջ միաբանեցնելու ջանք անողներու օգուտը միշտ այն է եղել, որ Հայերը ի սրտէ նոցամէն օտարացել են։ Այժմ էլ Հայերուն ուսումն առէք, վարժատուններ շինեցէք ասոնցմէ քաղած պտուղը այն պիտի լինի, որ Հայերուն ունե-

ցած վարժատուններէն էլ զզուեցնեն, և սրտակուռ հեռացնեն։ Խաբեբայի մէկը մէկ լեզու է սովորել, աղգին համոզում է այն լեզուին աշակերտել, որ ինքը վարժապետութեան պարապ տեղ գտնէ իւր առջևը բացված, և նրան էլ ասեն ու հրաւիրեն. «Բա՛րեկամ, ի վեր առիս մատիր։» Ա.Հա՛ քեզ Հանդէս նոր ապիտանիութեան։ Իմ կարծիքս ինձ այսպէ՛ս է թելադրում, որ ո՛չ իմ ասելով և ո՛չ այլոց քարոզելով վարժատուն կբացվի, մինչև որ նեղբուատ Հասարակութեան մէջ վարժատուն ունենալու կարիքը չզգացուի. երբ այն կարիքը ըսկսի իւր աղդեցութիւնը, ո՛չ ոք չէ կարող Նոր Նախիջևանցոց ձեռքը բռնել, որ նոքա վարժատան վրայ վարժատուն շինեն և վարժատուններու վրայ՝ ձեմարաններ և համալսարաններ բանան։ Ի՞նչ է՛ք կարծում, Նոր-Նախիջևանցիք աղքատ են, չքաւո՛ր են, չունի՞ն այնքան կարողութիւն, որ մէկ ձեմարան ունենան իրանց մէջ։ Մի թէ նոցա այժմ ունեցած վարժատունը՝ քան զձեմարանը փոքրի՞կ է։ Մի թէ նոքա, որ իրանց քաղաքը կառավարում են, իրանց հարկերը տալիս են, չի՞ն կարող տարին 20, 25, 30, 50 հազար մանէթ փող տալ և ձեմարան պահել։ Ապա ինչի՞ չեն անում։ Այն պատ-

ձառաւ, որ դեռ կարիք չեն զգում։ Ունին վարժաւուն, ուր որ մանկունքը ուսում են առնում նահանգական վարժարաններու առակներուն վրայ պարապելով, երբ որ այն քիչ է համարվում, գնում են Թադանրոգի գիմնազիան. երբ որ այն էլ չէ բաւական, գնում են Լազարեանց ճեմարան, և այն տեղաց էլ մայրաքաղաքաց համալսարաններ։ Երբ որ Հասարակութիւնը լաւ զգայ իւր ունեցած վարժարանի թերութիւնը, զգայ օտար տեղերումը ուսումն և կրթութիւն առնելու վնասը, զգայ բարձրագոյն առարկաներու կարօտութիւնը, ոչ ալիտի նրանց խոչընդակ կանգնի, որ նոքա իրանց քաղաքի մէջ ամեն ուսումնական դոնները չբանան իրանց զաւակներու, իրանց մանկութեան առջև։

Նոր-Նախիջևանցոց ոչ հարկադրեց շինել այն մեծ և ընդարձակ Վարժաւունը, որն որ այժմ ունին. քաջայայտ է որ Հասարակութիւնը ինքը տեսաւ, որ իւր մանկանց համար մէկ ուսումն առնելու տեղ պէտք է, և այն պատուական Վարժաւունը շինեցին։ Երբ որ շինել սկսան, Հասարակութեան ձեռքը ոչ բռնեց, թէ մի՛ շինիր։ Հարկաւոր էր, ամենեքեան ճանաչել էին, ամենեքեան համոզվել էին, և շինուեցաւ,

և քաղաքի համար մեկ զարդ դառաւ և հասարակութեան զաւակաց համար ուսումն առնելու տեղ։

Այն հասարակութեան մէջէն գտնուեցան ոմանք էլ, որ այն հասարակաց վարժարանի մէջ թիւրութիւն կամ թերութիւն նշմարեցին, կամ գէթ նորա մէջ աւանդելի առարկաները իրանց զաւակներուն անյարմար կամ անբաւական, և մասնաւոր վարժապետներ ստացան և մասնաւոր վարժարաններ ունեցան, և իրանց զաւակներուն նոցա մէջ կրթել տուին. որով երևեցաւ որ՝ հասարակութեան մեկ մասնին ախորժ էր հասարակաց վարժարանը, միւս մասնին՝ մասնաւոր վարժարանը, երկուսին էլ կարիքն էր դրդել. երկուսն էլ իրանց համար նպատակ ունէին իրանց զաւակաց կրթութիւնը. երկուսն էլ հասարակութեան ապագայի համար գործակներ էին պատրաստում. և ինչ վատ էր. սենեակի մէջ ուչ ապաքէն քանի որ շատ լինի ճրագը, այնքան աւելի լուսաւորութիւն կըլինի։

Ո՞վ հարկադրեց Նոր-Նախիջևանցոց իրանց զաւակներուն հեռու քաղաքներ ուղարկել, և այն տեղերումը կրթութիւն տալ. դարձեալ իրանց մէջ զգացած կրթութեան կարիքը։ Ո՞վ ստիպեց նոցա

իրանց դատերաց համար պանծանէր սարքել. նոյն կարիքը։ Վերջապէս ոչ բռնադատուց, որ հասարակաց օրէնքներու վարժատուն ունենան. նոյն պէտքը, նոյն կարիքը։

Նոր-Նախիջևանումը երթէ՝ հաշուենք՝ վեց տարեկան տղայէն սկսած մինչև տասներկու տարեկան մանուկը կարելի է թէ՝ հազար հոգի դտնըլլին։ Այս հազար հատ երեխանց մէջէն, կարելի է թէ, հինգ հատը լինին այնպէս, որ որբ մնացած լինին և չունենան ո՛չ հայր, ո՛չ-էլ մայր։ Կարելի է քսան ու հինգ հատ էլ լինին այնպէսները, որ հայր ունենան՝ մայր չունենան, մայր ունենան՝ հայր չունենան. մնացած լինն հարիւրը ունին հայր էլ, մայր էլ։ Այս լինն հարիւր երեխանց մէջէն կըգտնըլլին այնպիսի էքաւորաց որդիք, որ այն պատճառաւ ուսումն չեն կարող առնուլ, որ մերկ են, կամ տունները շատ հեռու է։ Նոր-Նախիջևանց մէջ-էլ այնպէս մարդիկ կան, որ դանէ դուռ մանեկող աղքատին երկու լումայէն աւելի չի տար, բայց մերկութեան պատճառաւ վարժարանէն զրկուած երեխին տաքէն մինչև գլուխը կըզարդարէ և վարժատունէն չի թողնիր որ յետ մնայ։ Թողունք այն զեղահաս խանութպաններու Այ-ջիլանկան շրջանէն ստացուած մա-

բանութիւնը, որ ոչ թէ աղքատ երեխանց, այլև նոցա ծնողաց հոլանաւորութիւն է անում։ Եթէ այսպէս չ.քաւորաց զաւակունք էլ լինին թուռուլ երեք հարիւր, այսու ամենայնիւ կան վեց հարիւր տղայք, մանկունք և պատանիք, որ իրանց ծնողաց խնամոց տակը անկարօտ են և ունին միջոց ուսումն առնելու։

Հաստ զարմանք պիտի լինի, որ վեց հարիւր հայր ու մայրը միտք չանեն իրանց զաւակներու ապագայի համար, և ինձ յանձնած լինին նոցա հոգը քաշելու, և ես մայրաքաղաքումը նստած մնօրինեմ նոցա ապառնին, և կարծեմ թէ՝ իմ լեզուն ունի այն դիւթական գաւազանի զօրութիւնը, կամ կռնկաձկան ամենակարող ներգործութեան նման, ամեն խշխանութիւնը, որ երբ ասեմ եղիցի այսպէս՝ լինի այսպէս։

Այսպիսի մտքերը ցնորք չէ՞ն, ոչ՝ չէ՞ն. այս անձնախաբութիւն չէ՞, որ ես ներում ինձ կարծել, թէ իմ ասած խօսքերը աղգը պարտական է ընդունել, լսել, կամ իսկապէս կըլսէ մովսէսական պատգամի նըման, կամ Գերլիեան Վալոլանի պատգամախօսութեան նման. ոչ ապաքէն պէտք է մէքիչ-էլ միտք անեմ, թէ որոնք խշխանութեամբ առնեմ զայս, կամ ով ես ինձ զկշ-

խանութիւնս գայս։ Ուրեմն եկէ՛ք, եղբարք, սիրելիք, մենք ամենքս միասին հրաժարվենք այս անձնահրաւէր պաշտօնէն, որն որ ամեն մէկս իրան կամենում է սերիականել և իւրացուցանել, և աղգին ճանապարհ ցոյց տալով չըմոլորեցնենք իրա գնացած ճանապարհէն. այլ թոյլ տանք որ՝ ինչպէս մինչև այսօր առանց մեր առաջնորդութեան գնացել է, նոյնպէս երթայ։ Այսա՛ երթէ հարկաւոր է մեզ նոցա մէկ կերպով օգնել, նոցա ճանփու վրայ Լատին ու Հելլէն ուրուականներ չշարենք, այլ որքան որ կարող ենք, նոցա ոտքի տակէն մանր մունր քարերը, խիճերը, փուշերը մէկ կողմը քաշենք, միայն ճանփան խտակենք, և թոյլ տանք որ՝ իրանք կամաց կամաց իրանց ճանփան երթան, և ո՛չ թէ շլինքներուն տալով առաջ վարենք՝ «Դուք յիմար է՛ք, դուք էշ է՛ք, դուք ջորի է՛ք ասելով։

Ահա՛ իմ, լուսաւորութեան ճանապարհէն, մէկ խոչընդոտն դարձող քարի մերժելը այս է։ Նոր-Նախիջևանայ մէջ այժմ կան քանի հատ Հայազգի բժիշկք, որոց հիմնաւոր կրթութեան և իւրեանց պաշտօնի առարկայի հմտութեան վկայ են ամենեցուն գիտակցաբար խոստովանութիւնը. թո՛ղ քաղաքացիք նոցա յանձնեն, նոցա ապտակեն,

որ այն մեր բաներ բժիշկները սկսեն իրանց ֆիզիոլոգիական տեղեկութիւնները և գերօգտաբեր փորձերը իրանց համազգիներու օգտի համար գործ դնել։ Թո՛ղ այն Նոր Նախիջևանցի բժիշկները, որոնք որ ի հարկէ անդամալնտութեան և ֆիզիոլոգիայի պիտի լաւ հմտացած լինին (ապա թէ ո՛չ բժիշկ անուն տանալ չէին կարող՝ ո՛չ վիկայական կունենային, և ո՛չ պաշտօն, և այս ուսմանց առարկաները անշուշտ պիտի նոցա վկայականի մէջ գրուած լինին) սկսին իրանց հետազօտութիւնները։

Նոր-Նախիջևանայ մէջ տասը գերեզմանատուն կայ։ Գերեզմանները ըստ մեծի մասին մահարձաններ ունին, և գրուած են նոցա վրայ հանգուցելոյ անունը, տարիքը և թաղման օրը։ Նոր գերեզման փորելու ժամանակը շատ հին դագաթներ են դուրս գալիս։ Հայ ազգի բժիշկները կարող են այն դագաթները կամ նոցա սկաւառակները հետազօտել, և այն հանգուցեալ Հայերու, այսինքն՝ արդի Հասարակութեան նախնեաց խելացաւոր ապրումակութիւնները քաքել, և յետոյ նոր վախճանած ընկնջեցելոց սկաւառակները, որոնց որ վիճակած է անդամատուութեան դաշտին տակը հպատակիլ, (այս վերջինը խօ շատ ստէպ

է պատահում) և պաշտօնական գործակատարութեան մէջ կարող են այս ազգային կարիքին և այս ամենածանր խնդրոյն ըստ պատուորելով՝ մեծ օգուտ բերել։ Դեռահաս, ժիր երիտասարդներ են, ամօթ է և մեղք է նոցա, թէ ծուլանան, թէ զանցառութեան տան. թո՛ղ իրանց համար ծանրութիւն չը համարին. թող քննեն, համեմատեն, չափեն, չափչփեն, բաղդատեն, իմանան և իմացուում տան, հասկանան և հասկացնեն, թէ Նոր-Նախիջևանայ այն բնակիչ Հայերը, որք որ իրանց կենդանութեան ժամանակը անծանօթ չէին այժմ կենդանի մնացած մարդոց և յայտնի էր տոցա՝ նրանց կենաց տարածը, նոցա ըստ երևութին մոքերու կարողութիւնը, նոցա ապրուստի եղանակը և նոցա գաղափարներու ուղղութիւնը, քան զայս յիսուն տարի առաջ, ի՞նչ աստիճանի մէջ էին, այժմ ի՞նչ աստիճանի մէջ են. կամ առաջնոց մտաւորական կարողութիւնները որքան են եղել, և այժմեանների՞ունը որքան են, աճե՞լ են, նուազե՞լ են, թէ՞ նոյնութեան մէջ մնացել, կամ ո՞ր դասակարգի մարդոցն է աճել, և որոցն է մնացել մի՛կ աստիճանի մէջ։

ԳԼՈՒԽ 7.

ԱՅՍՊԻՍԻ մեռելոյզ հետազօտութիւններով մեր աղգասէր և աղգապարծանք բժիշկները՝ մեր Համազգեաց խելապատակի պարունակութիւնը քննելով, եթէ գտնեն այն հրէշաւոր թիւերը, որոնք հասարակեալ են Անգլիացիներուն, այսինքն՝ 1, 572, 95 խոր". հար". այն ժամանակը 'թո՛ղ ծանուցանեն իրանց և մեր Համազգեաց, և այնուհետև ամենքս միաբերան աղաղակենք, պահանջենք, խընդրելով թախանձենք, որ մեր Նոր-Նախիջևանայ հարուստները, թէկուզ իրանց կաշին ու մորթին քերթեն, բայց աղգի մանկանց համար այնպիսի ճեմարաններ և այնպիսի Համալսարաններ շինեն, ինչպէս որ Անգլիայումը կան. և թէ կամենան, կամ ի զուր փող մխելու ցանկութիւն ունին և տեղը չեն գտնում, թո՛ղ քան զՕքսֆորդի և քան զՍորբոնի Համալսարաններն-էլ աւելի մեծ ու երկայն ու բարձր ու լայն կանդնեցնեն և մէջը այնքան ութիւն, բանութիւն, չափութիւն, գիտութիւն լցնեն՝ որքան կամենան, կամ որքան տեղաւորել կարողանան, և Նոր-Նախիջևանայ Հայերին բընադատեն՝ որ սովորին, և սովորողներից

էլ այնքան յառաջադիմութիւն պահանջեն, որքան այժմ ունին Անգլիացիք, որովհետև այն ժամանակը Նոր-Նախիջևանցի Հայն-էլ, ունենալով անխափան յառաջադիմութեան գրաւականները՝ Անգլիացոց հաւասար դառած կըլինի։

Ապա եթէ Նոր-Նախիջևանայ հին ու նոր բնակիչ Հայերի խելապատակը դառնեն հաւասար Ֆրանսիացոց կամ Գերմանացոց խելապատակին, այսինքն՝ եթէ իրաւի Հայերի սկաւառակի պարունակութիւնը չը լինի համաչափ Անգլիացոց, այլ միայն Ֆըրանսիացոց կամ Գերմանացոց զուգահաւասար 1,461,53 ից մինչև 1,517, խոր՝.հար՝. համանգամայն նոցա տեղական, սերական և կենցաղավարական պարագայից ուշ դընելով, թո՛ղ նոցա չափով-էլ նոցա վերայ բերը դնեն և նոցա չափով-էլ արդասիք պահանջեն։

Այլ եթէ դառնեն միայն այնչափ, որչափ հասարակօրէն Կովկասեան սերնդոց (ասիրոն) է յատուկ, այսինքն՝ 1,427, խոր՝.հա՝. կամ քան զայն-էլ պակաս, այն ժամանակը թո՛ղ իրանց ներողամտութիւնը մարդասիրասէս տարածեն նոցա բնական և տեղական անհերքելի պատճառներից առաջացած և անհրաժեշտ անխնամութենէ դուրս ե-

կած տկարութիւնների և խոպանացած վիճակի թշուառութիւնների վերայ, և նոցա համար այնպիսի վարժարաններ շինել համոզեն, և այն վարժարանների մէջ այնպիսի և այնքան առարկաների պրոգրամմաներ շարադրել ապացուցեն, որ նախ՝ հայրապետի մանկանց խելացաւոցակը կարողանայ ընդունել, տեղաւորել և պարփակել իւր մէջ. և երկրորդ՝ ջանան որ այն ուսումն, կամ՝ այն ուսման առարկաները չը-դառնան այնպիսի բան, ինչպէս մրջիւնների համար դառնում են իրանց նորաբոյս թեւերը, որ թռչում են և իրանց բոյները կորցնում և օտարութեան մէջ քաղցած ու ծարաւ մեռնում. այլ հոգս քաշեն, որ այն ուսման առարկաները կարողանան նը-րանց միայն այն շրջանի մէջ երևելի հանդիսացնել, որոյ մէջ պիտի նոքա իրանց կեանքը անցուցանեն, այսինքն՝ վաճառականութեան, և ընդհանրապէս՝ քաղաքացի հասարակութեան:

Ընդհանուր թէպէտ հարկաւոր չէ վարժապետներին, բժիշկներին կամ փաստաբաններին ոչ լատիներէնը, ոչ յունարէնը և ոչ էլ այն անվերջ, անվախճան ութիւնները. բայց կարելի է որ՝ նոցամէն ոմանց օգուտ ունենան և կարելի-էլ է որ՝ համ-

ազգային բազմութեան մէջէն դուրս երե-
ւին մէկ քանի քանքարաւոր պատանիք և
կամ հանճար ասելու արժանաւոր գլուխ-
ներ, որ կարողանան լաւին կամ հելլէնա-
կան բարբառների վրայ թարգմանել և մե-
ծամեծ գիտութեանց և մակացութեանց
մէջ նախանձելի յառաջադիմութիւն ցոյց
տալ. բայց մի կամ երկու բացառութիւնը
պիտի մարդու ոչ լաւ ակնկալութեամբ
խաբէ և ոչ մէկ քանի վատթար ձախոր-
դութեանց հետևորդներով յուսահատեցնէ.
այն բացառութիւնները միշտ են պատա-
հում և բազմահոյլ թանձրութեան հա-
մար օրինակ չեն. մեր խօսքը շատոր թի-
ւի վրայ է։ Ամենեքեան վարժապետ դառ-
նալու չեն, ամենեքեան բժիշկ լինելու չեն,
ամենեքեան փաստաբան կանգնելու և ա-
տենախօսութիւն անելու չեն կարող։ Նոր
Նախիջևանը մէկ փոքրիկ քաղաք է. եթէ
նորա մէջը գտնվին երեք կամ չորս վար-
ժապետք՝ հաղիւ են կարող ապրիլ. իսկ
հինգերորդը, վեցերորդը պիտի թողուն
կամայ ակամայ իրանց հայրենիքը, իրանց
քաղաքը, և օտար երկրումը պտրտեն ի-
րանց ապրուստը։

Այժմ նոցա ուսումն ի՞նչ օգուտ բերից
կամ իրանց կամ քաղաքին։ Իրենց վնաս է

այն, որ պիտի զրկուին իւրեանց Հայրենի-քէն և օտարութեան մէջ անցուցանեն իրանց կարօտակէզ կեանքը։ Քաղաքին այն է վնաս, որ իրա ուսեալ զաւակներից պիտի զրկուած մնայ և շատ անգամ-էլ զրկանք քաշէ, որովհետև Հայի կարօտութիւնն է այնպէս տնօրինում, որ «ում սայլը նատի՝ նորա սիրական երգը պիտի նուագէ». Հարազատ որդին շատ անգամ ոխերիմ թշնամու ձեռին գործիք պիտի դառնայ իւր Հայրենեաց կորստեան համար. «աչքից հեռու՝ սրտից հեռու։»

Ազգ-Ազգանումը եթէ դատանուին հինգ կամ վեց Հայազգի բժիշկք, միշտ պիտի մէկ մէկի ձեռի Հայի վրայ աչք ունենան. այն տեղ ինչ սէր կլինայ, ինչ միաբանութիւն. ոչ ապաքէն այն իսկ ուսեալքը պիտի դառնան պատճառ երկպառակութիւն սերմանելու և կուսակցութիւնք գոյացնելու, և ո՞վ է կարող երաշխաւոր լինել, որ նոցա բարոյականութիւնն-էլ քիչ քիչ չըխանգարուի հանգամանքների բերմամբ. և որոնք որ պիտի լինէին ազգի մշակ՝ չը դառնան ազգի հիմքը վնասող. և այնուհետև եօթներորդ և ութերորդ բըժիշկը պիտի իւրեան քաղաքակցայ ծոցէն դուրս գալով պանդխտանայ։

Մի՞թէ ամենեցուն կը յաջողի մէկ քանի տարուայ մէջ համ պաշտօն գտնել, համ աստիճաններ ստանալ, համ վարձ տէր դառնալ, համ միւսանգամ դալ իւր հայրենիքը. այսպիսի յաջողութիւն ցանցառ կը պատահի. և եթէ պատահի, այն-էլ որոց տուեալ է. հարցրէ՛ք թէ ո՞ւքան զոհերով և քանի՞ դիականց վրայից անց կենալով։ Եւ շատ անգամ այն իւր հայրենիք յետ դարձողը, իւր հետ բերելով այն բարքն ու վարքը, ինչ որ օտարութեան մէջ է վաստակել, նոր ի նորոյ պանդխտանում է այն քաղաքումը, ուր որ իւր մանկութեան օրերուցն է մնացել։

Ահա՛ նոր կարգաւորութեամբ ժամանակաւ նոր-նախիջևանի մէջ-էլ հարկաւոր կը լինի փաստաբանութիւնը. անշուշտ պիտի կրթուին լաւ առենախօսներ։ Մի՞թէ ամենքեան Փալմերսթըն կը լինին կամ թէ Ժուլ-Ֆաւր. մի՞թէ ամենքեան Դեմոսթենէս կը լինին կամ Կիկերոն. ի հարկէ, մէկ քանի աստիճան ցածէն պիտի սկսին, մինչև հասնին այն ծայրը, որ կարողանան ասուել թէ՝ իրանց ընկերակցաց վրայ աւելի են, այսինքն մրջնաբնի մէջ հզօր մրջիւն։ Բայց նոր-նախիջևան, ինչպէս ասուեցաւ, փոքրիկ քաղաք է, և նորա Մոսքիսպանի

անձուկ կրկէսը քանի՞ առենարան կարող է տանիլ. եթէ քան զչափն աւելի բազմանան, դիցուք թէ մէկ քանիսը կըժառանգեն բեմը. աւելորդներըը ո՞ր տեղ պիտի իրանց քանքարը դործ ածեն։ Լա՛ւ մըտածելու է։ Շունը՝ քանի որ կուշտ է, տիրոջ համար է հաչում, բայց երբ քաղցած է լինում՝ տիրոջ վրայ-էլ է սկսում հաչել։ Տա՛ր երեխի ձեռը դանակ, վայելչութիւնը կըտեսնես։ Կովկասու սարերը հերուից պըմատէ և բոխլանթէ շինած են երևում, և ամեն դաշտորայք ու հովիտք՝ եղեմական դրախտ։ Ո՛չ սխալիլ է հարկաւոր և ոչ սխալեցնել։ Ցիրաւի է, ներքինին ոչ դիտէ՝ թէ ի՞նչ է կին, կամ վասն կուրաց ոչ ծագէ և ոչ մտանէ արև. բայց այս առածն-էլ շատ խոտելի չէ, որ ասում է թէ՝ կոյրն-էլ դիտէ, որ հինգ են մատունքը։

Այն մարդոց, որոնք մեր ազգին, մեր խեղճ և անտէր ազգին ճանփաներ են տվորեցնում, ի հարկէ, բարի մտքով, դէպ ի լաւը, դէպ ի հ.քնաղը, դէպ ի գերապանծը (փլա՜նց փ.ախչողնի գ գալը հոտվի.) սակայն տեսնում ենք՝ որ .քաջայարմար է այն խօսքը թէ՝ ձէնը տաք տեղէն է դուրս գալիս։ Հարսի բաժինքով խնամիներուն լաւամարդ դառնալ ամեն մարդ է կարող. բայց խըղճ-

մոանաց դատաստանի առջևը նոյնը պիտի դուրս չըգայ։ Գրաբառ լեզուի ախոյեանը, ուզում էի ասել՝ դիմամարտը, լատինացոց և հելլէնացոց մեռած և հոտած բարբառների ջատագով պիտի չըկանգնի, այլ պիտի թոյլ տայ մեռելոց թաղել զմեռեալս։

Այժմ թէպէտ մեզ հարցնող էլ չըկայ և իրաւունք-էլ չունինք օրէնսդրական տառատոկը վերէներս առած խելօք ձևանալ և այլոց խրատներ առատաձեռնել (որովհետև քան զայն-էլ աւելի հեշտ ոչինչ չըկայ) սակայն վերը արծարծած իմաստից հիման վերայ կարծիքներս (այժմ) այս է. եթէ նոր-նախիջևանցիք բարեհաճին իրանց ունեցած վարժատան պրոգրամման ընդարձակել այնպէս, որ դոնէ կարողանայ նոցա արդի վաճառական կեանքին նպաստամատոյց լինել տասնուհինգ տարի, անշուշտ հարկաւոր են միայն այս առարկաները, որոնք եթէ բարի խղճմտանքով աւանդվին, շատ պիտի օգնեն միւս տասնուհինգ տարուն։

1) Կրօնագիտութիւն որ Հայաստի մանուկը իւր մատաղ հասակից սկսած առնու իւր հոգւոյ մէջ այն բարի սերմը, որ հասակի հետ աճելով, կարողանայ նրան շինել բարի մարդ, բարի քրիստոնեայ, Հայոց

ազգի հարազատ որդի, և ժամանակաւ հընար ունենայ բերել ազգասիրութեան և հայրենասիրութեան բարի պտուղ։

2) Հայոց գրաքննչաց այնքան միայն, որ Հայազգի մանուկը կարողանայ առաջ հասկանալ ժամասացութիւնը, Աւետարանը և Եկեղեցոյ ընթերցուածները, և յետոյ գիտակցութեամբ հմտանայ աշխարհաբար լեզուի կանոններին։

3) Աշխարհաբարի գլխաւոր ճիւղերը, որ կարող լինի ամեն գաւառների Հայերու հետ գրաւոր կամ բանաւոր հաղորդակցութիւն անել առանց դժուարութեան. որովհետև առուտուրի մէջ ամեն գաւառների համաձգեաց հետ կարող է պատահիլ յարաբերութեանց հարկաւորութիւն՝ վաճառականութեան ամեն կողմը տարածուելու պատճառաւ։ Սակայն որովհետև ազգը ըսկսել է ցոյց տալ իւր մէջ ընթերցասիրութեան սիրուարար առհաւատչեայք, յուսալի է որ, զլինի սակաւ ժամանակի, ազգի մէջ տիրապետէ միայն մէկ պարզ և դիւրահասկանալի լեզու. և այս ճանփով շուտ պիտի հեշտանայ այս յոդուածը. մանաւանդ Հրապարակական Իրաւատեսութեան անհրաժեշտ կարիքէն բռնադատուած։

4) Հայոց Պատմութիւնը. Աշխարհականը

որ իմանայ թէ, ինքը որ Հայ է՝ ի՞նչ է Հայ կամ ի՞նչ է Հայութիւն ասելը. և Եկեղեցականը՝ որ հասկանայ թէ՝ որովհետև Քրիստոնեայ անունը իւր վրէն ունի և Եկեղեցոյ որդի է ասվում, ի՞նչով է նա ուրիշ ազգերէն զանազանուած. և այդ զանազանութիւնը նորանից ի՞նչեր է գլխաւորապէս պահանջում իւր բոլոր կեանքի մէջ։

5) Հայոցումն ոչխի աշխարհագրութիւնը և վիճակագրութիւնը (statistica) որ հասկանայ ինչպէս վաճառական թէ՝ Հայաստանը աշխարքի ո՞ր կողմն է, ո՞ր մասը, ո՞ր տէրութեան ներքոյ է. իւրաքանչիւր մասի մէջ ի՞նչ գլխաւոր քաղաքներ, գեղեր, սարեր կան. ի՞նչ բերքեր ունին. ի՞նչ առուտուր կայ. ի՞նչքան հարկատութեան տէր են, ի՞նչն է նոցա հարստանալու աղբիւրը. դէպի ո՞ր վաճառականները են աւելի յաճախում. ո՞ր ճամփաներով են իրանց գլխաւոր առուտուրները առաջացնում. ո՞րքան տեղ ծովով և ո՞րքան տեղ ցամաքով. կամ Նոր-Նախիջևանցիք նոցա հետ ի՞նչ առուտուրներ կարող են բաց անել և ո՞ր ճամփաներով, ի՞նչ վատահանալի պայմաններով, կամ ո՞ր բարիով (ապրանք)։

6) Իւր Հայոց աշխարհ կամ Երկիր (զորութեակ Ռուսաստանի) աշխարհագրութիւնը, վիճակագրութիւնը և պատմութիւնը, որովհետև

իւր այժմ կեցած տեղն է իւր Հայրենիքը, ուստի պարտաւոր է այնպէս տեղեակ լինել նորան, ինչպէս իւր տան բոլանդակ եղ ումտին և ինչպէս իւր քաղաքի բոլոր խոշոր ու մանր հանգամանքներին։

7) Իւր ներկայ աշխարհի երաւագիտութիւնը. մանաւանդ այսուհետև որ արդէն հասել է հրապարակին պատմութիւն ժամանակը. որ իմանայ, հասկանայ՝ թէ ի՞նչ վարչութեան եղանակ ունի այս նոր կարգադրութիւնը. կամ թէ այսուհետև ի՞նչպէս պիտի կատարվի դատաստանը. և ինքն էլ ի՞նչ օրէնքների պաշտպանութեան տակն է. կամ ի՞նչպէս պիտի իւր կենցաղավարութիւնը ուղղէ, որ կարողանայ նորա պաշտպանութիւնը վայելել միշտ՝ ինչպէս վայելուչ և պարտ ու պատշաճ է իւրաքանչիւր խաղաղասէր բնակչի։

8) Իւր ներկայ աշխարհի գրչագրութիւն լեզուն և գիրը, որ ընկերական կեանքի անշուշտ հարկաւոր բանալին է. որովհետև իւրաքանչիւր ոտնտոխ, իւրաքանչիւր քայլ կարող է առաջներումն բանալ նորա կարիքը և իմաց անել նորա անհրաժեշտ պիտանաւորութիւնը։

9) Բոնիկուլիերին, վաճառական նաւագնացութեան և հաշտարարութեան, առանց որոյ վա-

ճառականը ոչ թէ միայն չէ կարող իւրգործերը բարուոքել, այլ և չի ունենար հնար ու միջոց ունեցածը շարունակել. վաճառականութիւն և հաշիւ՝ միասին են ծնել, միասին պիտի աղրին:

10) Թուաբանութեան:

11) Բաղդատական պատմութեան:

12) Ընդհանուրք պատմութեան և Վաճառականի Աշխարհագրութեան, որ միւս առարկաներին մէջն-էլ փառաւոր է: Իսկ լեզուագիտութիւնը իւրաքանչիւր աշակերտ ազատ լինի ընտրել. և թէ հնար է՝ աւելի գործնական, քան թէ տեսական. աւելի կենդանի լեզուք, քան մեռած. և ո՞վ կուտար, որ Պօղոսի աստծի պէս՝ իւրաքանչիւր Հայ «ոչ թէ միայն ի լեզուս խօսէր, այլ և մարգարէանայր»:

Այս առարկաները Հայաստանի մանկանց համար, առաջին անգամը, շատ են ու սա-

---

* Ծանօթ. Ներկայ 1864 թուականիս 21 նոյեմբերի ԲԱՐԶՐԱԳՈՅՆ հրամանաւ հրատարակուեցաւ նոր կարգադրութիւնը, որոյ ձեռամբաձուութեամբայսուհետև պիտի գործ դրուին ամեն դատաստանական իրաւագործութիւնք: Մենք հաւատի գիտենք, որ այդ գիրքն արդէն մեծագոյն մասամբ թարգմանուած է և շուտով պիտի տպուի:

կաւ չեն. սորա համար-էլ հարկաւոր կը-տեսնուի դոնէ եօթը տարի. և հարիւրից քանի՞ն են կարող այս եօթը տարին անընդհատ ուսումն առնուլ, որ կատարելապէս սովորին։ Դիցո՛ւք թէ՝ այս պրոգրամմայի մէջ մէկ երկու առարկայք չեն յարմարիր աշակերտներից մէկ երկուսին, միւս մէկ քանի առարկաները՝ ուրիշ մէկ երկուսին. այսու ամենայնիւ շատ և հզօր բազմութեան կը լինի համ յարմար, համ օգտաւէտ. և հատուն կարգադրութիւնը կարող է այնպէս խոհեմութեամբ տնօրինել, որ ոչ ընդհանուր կարգը խանգարուի և ոչ առաջնալու աշակերտաց ապառնին զոհ երթայ կարգաւորութեանց անշունչ տառից։ Կարելի է որ մէկ քանիսին, որոնք պիտի համալսարան մտնեն, տասնեարս չըպատշաճին. բայց ինչպէս որ այն է քաջայայտ՝ թէ իւրաքանչիւր աշակերտի համար ուրոյն ուրոյն վարժատուն և կարգ չէ հնար շինել, նոյնպէս և այս մէկ գաղտնիք չէ որ՝ Նոր Նախիջևանի մանկանց մէջէն հազիւ թէ հարիւրից մէկն է մտնում համալսարան. և այսպիսեաց նախակրթական պատրաստութեան համար կան գիմնազիայք, պրոգիմնազիայք, կայ ճեմարան, և նոցա դըռները փակ չեն. և այս մէկ երկուսի պատ-

Հառաւ իրաւացի չի լինիր համախումբ բազմութեան շալակին վրայ այն անտանելի բեռը դնել և հեռուից նայել միայն նրանց հետ զհետէ գլորվելուն, դահավէժ կործանվելուն և թաւալելուն:

Եթէ Նոր-Նախիջևանայ Հայազգի մանկունք այսուհետև գոնէ տասնուհինգ տարի շարունակեն իրանց ուսումնառութիւնը այս պրոգրամմայով, թէ և երկուհարիւր աշակերտաց մէջէն միայն քսան ու հինգը աւարտեն այսպէս իրանց ուսման ընթացքը, տասն ու հինգ տարուան միջոցումը Նոր-Նախիջևանայ Հասարակութիւնը կ՚ունենայ գոնէ երեքհարիւր չափաւոր ուսեալ ընկերակից, փոքր ի շատ, աչքը բացած ազգասէր Հայ և ժողովրդոց բազմութեան կարեկից եղբայր, որ ճանաչելով թէ իւր կըրթութեան պատճառը ո՞յք էին և նպատակը ի՞նչ, կ՚իմանան իրանց երախտապարտութիւնը և կըդառնան Հասարակութեան հաւատարիմ գործակ: Ա.հա տոյա հետ միասին Հասարակութիւնը երբ տեսնէ՝ թէ, տասն ու-հինգ տարուան մէջ ազգը այնքան յառաջադիմութիւն արաւ, որ այս չափաւոր պրոգրամման սկսել է արդէն նուաղ երևիլ, և չէ կարողանում՝ նոցա մանկանց ուսումնասիրութեան ծարաւը զովացուցանել, կա-

ղող են այն ունեցած վարժատան պրոգրամ-մայի վրայ աւելացնել ոլքան ութիւն, բանութիւն և չափութիւն հարկաւոր համարին. որովհետև չենք ասում թէ՝ այժմեան ունեցած վարժարանը քանդեցէք և նորը շինեցէ՛ք. այլ ասում ենք թէ, «այժմեան ունեցած վարժատան պրոգրամմայի վրայ մի քանի հարկաւոր առարկայք և այս առարկաներու մէկ քանի վարժապետ, ուրեմն եւ այն վարժապետաց չափաւոր ռոճիկ աւելացրէք» և այնպէս գոնէ տան ու հինգ տարի շարունակեն իրանց քաղաքի մանկանց դաստիարակութիւնը այս ճանապարհաւ։ Հայերու մէջ, որ արդէն դրուած է փոքր ի շատ, ուսումնասիրութեան և ուսումնարանութեան հիմը, այս օժանդակ յաւելուածով՝ ուսմանց արմատը կարող է մանկանց մտքերի մէջը ամրանալ և Հայերը այն ժամանակ կըլլենին բարեբաղդ, երբ որ իրաւունք ունենան յաւելու և ասելու՝ «խաբուեցանք, նուազ աղբիւրից քիչ ջուր խմեցինք» քան թէ ընկած լինին յուսահատութեան մէջ՝ որ շատ աղբիւրների հոսմունքներուն մը ծարաւ են մնացել. շատ առարկաներից ոչ ինչ չեն սովրել. «բաղում՝ աշխատեցան և կալան ոչ ինչ։»

ԳԼՈՒԽ 8

Ուսումնառութիւնը երկու նպատակ ունի. մէկն է՝ իւրաքանչիւր ուսումնառու անձին համար առանձին առօրեայ ապրուստի ճանապարհ. միւսը՝ բոլոր ազգի լրութեան համախումբ բազմութեան կրթութեան և լուսաւորութեան համար։ Երկու նպատակն-էլ ո՛րքան լաւ են երևում, որքան գեղեցիկ, որքան վայելուչ։ Մէկը ազգի մէջ ազգի զաւակներին հացի տէր է անում. միւսը՝ ազգին հանում է անասնական ստորաքարշ կեանքէն և մարդավայել շնորհներ է ընձեռում։

Այլ այս նպատակները մօտակայ նպատակներ են. իսկ նոցա յետևումը կան այնպիսի հեռաւոր նպատակներ, որ նման չեն բնաւ առաջին նպատակներուն։ Մենք տեսանք որ Հայոց ազգի մէջ բարձրագոյն ուսումները կարող են միայն գլխաւորապէս երեք հացի ճանապարհ տալ. վարժապետներու, բժիշկներու և փաստաբաններու։ Այլ այն-էլ տեսանք միասին, որ մի միայն ուսուցիչների, բժիշկների և օրէնսուսոյցների և սոցին նման հասարակութեան օգնութիւնով ապրողների չափաւոր թիւը է կարող նոցա հացի տէր շինել. իսկ անչա-

վատորը՝ մի միայն մէկ զմէկի և բոլոր ազգին վնասակար մարդիկ-էլ կարող է առաջացնել. (Բուն «Հիսէին» է ասա։) Այն ուսումը քանի պիտանացու անգամ պիտի հանէ իւր հայրենեաց ծոցէն և շինէ . . .

Նմիթ նպատակդ այն ես դրել, որ մէկ քանի մարդ առաջանան և շատ-էլ առաջ երթան, իսկ մնացածները դլուխները քարը, ինչ կ'ուզեն թող լինին. իրաւ է, քո առածը լաւ է։ Առաջ տար քո պրոդրամմանը, որ ազգի մէջ առաջանան զրօրինակ՝ շատ վարժապետներ, շատ բժիշկներ, շատ փաստաբաններ, այն դիտաւորութենով, որ թէ լաւ վարժապետներ չունենանք, լաւ աշակերտներ ունենք պիտի պահանջենք։ Բայց չըլնի՞ թէ վատաբաղդութենով, կամ բնական անհերքելի պատճառներու անյաջողակ դիպուածներով և շրջապատութեամբ, փոխանակ ոչխարները շատացնելու՝ գայլերը աւելացնենք, և մեր ակնկալութիւնէն արտաքոյ, փոխանակ լաւ վարժապետների, լաւ բժիշկների և ճարտար փաստաբանների՝ ստանանք միայն լատին ու հելլէն հնացած մաշուած դպրոցներով զառածուած սոփեստներ և ղըժուար ժայռերի մէջ մնան բերող անխղճմտանք իմաստակներ և պղտոր ջրի մէջ ձուկ

պտրտող անամօթ բաղդայոյզ որսորդներ, որ մոլախոտի նման ամեն տեղ, ամեն ժամանակ առանց վարելու, առանց ցանելու համ բանում են, համ աճում։

Այս՝ մի միայն վատ հետևանքներից ըզգուշանալով՝ այսպէս ձախողակի դուշակում ենք։ Այժմ ձգենք ուռկանը դէպի աջակողմը և մտածենք լաւն-էլ, աջողակն-էլ. կարելի է որ Հայոց ազգի բաղդը յետ եկած լինի. կարելի է որ Թարգմանչաց օրերը պիտի տեսնենք նորոգուած. կարելի է որ եկել հասել ենք այնպիսի գերերջանիկ ժամանակի, որ երթէ մեր ազգի մանկունքը և մանաւանդ հոգևորականք, մլտնեն այն դպրոցները, ուր Օգոստինոսի և Ոսկեբերանի խօսած լեզուներն աւանդվում, և դաղմատական և հելլէնական մեռուղիական լեզուագիտութեան անգիւտ գանձերով ճոխացած և բեռնաւորուած դուրս գան այն իմաստութեան տաճարի դռներէն, այնուհետև էլ ինչ կասկած պիտի մնայ. մեր եկեղեցականաց իրաքանչիւրը կըփայլի նըման Յովսեայ Հոգոյիմացոյ, Յովհաննու Մանդակունւոյ և Ղէոնդ Երիցու Վանանդեցոյ. մեր կրօնաւորները կը դառնան մէկ մէկ հատ Եղիշէ և անմահութեան կ՚աւանդեն արդի կամ իրանց ժամանակակից ըն-

դասուն Վարդաններին յիշատակը. էլ ոչ Մովսէս Խորենացոյ սրբազան ոսկերքը անհանգիստ կըլլին, ոչ Հայրապետական աթոռը կըմատնուի ի ծաղը և ի ծանակ ոմանց սանձակոտոր ամեհութեամբ. ոչ Ղազար Փարպեցին-էլ այսուհետև բոկոտն և գլխերաց վանքէ վանք չի փախչիր. և կրօնաւորական դասքը էլ կոխ, տարաձայնութիւն և խայտառակութիւն չեն բարձրացնիլ հաւի և հաւարուն, ձուի և կաթնի, պանիրի և մածունի, ինչպէս մէկ ազգային կենսական խնդրոց վերայ։

Եթէ իրաւի յաջողի-էլ լաւ աշակերտներ առաջացնել, որոնցմէն դուրս երևին լաւ լաւ վարժապետներ, ճարտար բժիշկներ, կամ քաջաբարոյ առևնարաններ. մէկ լաւ միտք անենք՝ թէ մեխած դրամագլխի քանի՞երորդ տոկոսին պիտի լինէր. կամ ժամանակաւ պիտի ուժեանն այն ծախսին, այն մուսխին, և ազգը մէկ օր կարո՞ղ է մխիթարուիլ, սփոփուիլ և ասել «Թէպէտ այսքան մեխեցի, բայց փոխարէնը այսքան էլ ստացայ» : Քաջ դիտեմ, որ տրա դէմ ևս այս պիտի ասեն «Գայլէն վախեցողը անտառէն հեռու պիտի կենայ», կամ «Եթէ ծուլի վրայի պակսութիւնը միտք բերեն՝ պիտի վաճառականութիւնը դադարի». սա-

կայն այստեղ ամենայնիւ կենցաղագիտական, կամ քաղաքական տնտեսութիւնը բարձրաբարբառ է քարոզում, որ ոչ միայն դրամագլուխն է ապահով պահելու, այլ և փողի շահը պիտի վտանգէն անկասկած պահուի. և այն դրամագլուխը, որ շահ չէ բերում, արդէն մեռածի համարումն է:

Օրինակի աղագաւ. եթէ մտել ես 250,000 արծաթ և շինել ես վարժատուն, և այն վարժատունը ունի ծախք տարեկան 25,000 արծաթ. և այն վարժատանը ուսումն են առնում 100 աշակերտք. ուրեմն իւրաքանչիւր աշակերտի վրայ ծախք է լինում 250 արծաթ. բայց 250,000 արծաթի տոկոսին-էլ, որ ամեն մէկ աշակերտի վրայ բաժանես՝ իւրաքանչիւր աշակերտի ծախքը կը լինի 500 արծաթ: Եթէ այն աշակերտի ուսման ընթացքը տեւէ 6 տարի՝ իւրաքանչիւր աշակերտ պիտի վարժատան ժամանակ 3,000 արծ. որ շատ թանկ դին է:

Արդ այդ վեց տարուան մէջ քանի՞ աշակերտք են կարող առաջանալ. յայտնի է, որ 100 աշակերտքն-էլ միանգամայն չեն կարող առաջանալ. մէջերից հիւանդոտներ կը լինին, խօթամիտներ կը պատահին, շատ մեռնողներ-էլ կը գտնուին. եթէ 100 աշակերտից 50 առաջանան, ամեն մէկ աշա-

կերտը պիտի վարժատունին նստած լինի 6000 արծ՝։ Այս եթէ 25 հատ միայն առաջանան և դուրս գան պիտանացու, պիտի իւրաքանչիւրը ծանրութիւն տուած լինի 12,000 արծ՝։ Իսկ եթէ դժբաղդութիւնով ոչ 50, ոչ 25 և ոչ 12 առաջանան, այլ կաղ, կոյր, միակողմանի, կունտ, քոտոտ, բորոտ՝ միայն 3 հոգի երևին, կամ ուհասարակ լինին այնպէս, որ ուրիշ գործի պէտք չըգան, բայց եթէ անուն ստանալ «Ցիմարների մէջ իմաստուն և էշերի նախրումը էֆէնդի». այն ժամանակը՝ որն է աւելի ցաւելի և արտասուելի, այնքան փողերի ապարդիւն կորուստը, թէ այնքան անիմաստ ժամանակի ունայն անցանելը և այնքան անմեղ մանկանց, իրանց բնիկ և սովորական ճանապարհէն մոլորվելով և յետ մնալով յաւիտենական աղքատութեան աւար դառնալը։

Այստեղ կարող են ասել թէ «ինչպէս է կարելի, որ 100 աշակերտից մէկ քանիսն էլ է չը յառաջանան։ Ա. այդ համարձակ պատասխանել հնար է. «Ի հարկէ, երբ որ աւանդելի առարկաները աշակերտաց ընդունակութեան հետ չափած, կշռած, համեմատած չը լինին՝ անշուշտ այն աշակերտները իրանց նպատակին պիտի չը հաս-

ներլով՝ վարանեալ և տատանեալ մնան, որովհետև ոչ մէկ կենդանի իւր ուժէն վեր բեռը բառնալ չէ կարող. և այն աշակերտը ևս, որ վարժարանէն խաբուելով իրա դասակարգէն, իրա ընկերակցաց մէջէն և իրա բնիկ հայրենի պապենական սովորական կենցաղալ արուեստեան ծոցէն դուրս եկաւ, ու ոչ հողագործ մնաց, ոչ խաշնարած, ոչ ձկնորս, ոչ արհեստաւոր, ոչ վաճառական. իւր անգին և անգնելի ժամանակը կորցրեց և մնաց կոյր, մէկ իրկու լատին կամ հելլէն բորբոնած բառեր սովորելու համար. չըհասաւ ոչ կատարեալ ուսելոց դասը, և ոչ իւր թերուս մնալը հասկացաւ, որով մինչև գերեզմանի դուռը պիտի մնայ այլոց դլխին ծանրութիւն, հանդերձ դիտուն և ուսեալ մականունաց անուանելի պահանջողութեամբ. և միշտ պիտի տրտունջ անէ աղգի տառնութեան վրայ և միայն այն ժամանակը փոխէ իւր լեզուն, երբ որ դտնէ մէկ երկու յիմարք և խաբելու հնարքը կարողանայ ձեռք բերել. և երբ այն եռանդն-էլ անցնի, վերատին դառնայ իւր նախկին զգայմանց. իմ կարծեօք կորածներու մէջ է և այն կարդէն է, որ պանալոտ չեն դառնար:

Այց չեմ կարծում թէ դեռ ևս մնացած

լինի աշխարքի երեսին այնպիսի թմրած հոգւով մարդ, որ մէկ քանի հատի կեղակարծ օգուտի համար՝ հասարակաց անկասկած և անվրէպ օգուտը կամենայ զոհել, և այն սակաւ ծախքով դլուխ բերելու համազգային լուսաւորութեան ապահովութիւնը կամենայ բաղմապատիկ ծախսեր և անպտուղ մուսներ ազգի վրայ բարդելով, և ազգին ընդոստ ցաթիկեցնելով՝ խեղճ համազգեաց ձեռքէն յափշտակել նորա անխոտոր և անկասկած յառաջադիմութեան հնարները, և ազգի մանկանց կեանքէն խլել նոցա թանկագին ժամանակը, նոցա բարոյական արդիւնարարութեան ճանփաները դպրոցական կենամաշ շրջմոլիկներով ծռմռկելով, որով մեր ողորմելի ազգը մինչև այսօր մնացել է յետադիմութեան ճարակ։ Ասածներուս-էլ շօշափելի, անժխտելի և անհերքելի ապացոյցը այս է։

Հատ աւելի արդէն քաջայայտ է ամենեցուն, որ մեր ազգը ո՛րչափ-էլ այժմ յետ է մնացած, երբէք յառաջադիմութեան ճանփաներով զարդանալու բարի բաղձանքէն զուրկ ազգ չէ եղած։ Հայոց ազգը՝ ո՛չ վայրենի Հնդիկ է, ոչ Սկիւթացի է, ոչ Ասորալիացի է, ոչ Նէգր է, ոչ Հօթէնթօթ է, ոչ Բրազիլիայի անտառներէն,

ոչ-էլ Պոլինէզիայի կամ Մալայեան և ուրիշ հեռաւոր կղզիներու մարդակերներն էն։ Սա քան զայս չորս հազար տարի առաջ կենցաղակրթութեամբ աշխարքի երեսին հոչակուած ազգերից մէկն է, որ իւր ժամանակակից ազգերու շատի ընտանջինջ սպառած լինելը տեսել է. բայց ինքը տակաւին կայ իւր հնութեան վկայ, և չէ նման Փունիկեցոց (այժմեան Տիւրզիւցոց) կամ Եգիպտացոց (Խփտեաց) և կամ Բաբելացոց և Ասորեստանցոց, (որ Արաբացոց մէջ լեզուի մերձաւորութեամբ և կրօնական միութեան ազդեցութեամբ խառնուելով անհետ կորան) այլ կայ ինչպէս մէկ ազգ, որ իւր հնացած ոսկեանը զուելով մաքրելով՝ ոչ թէ միայն արծիւի նման կամենում է փետուրը փոխել, այլև Փունիկ հաւի նման իւր ներքին մարդուն արդի հրահանգութիւնը ընձեռելով՝ իւր փառացի նախնեաց հանրահռչակ համբաւոյն արժանաւոր մանկութիւնը նորոգել։

Ինչ է սորա ծայրագոյն պակասութիւնը, որ այսպէս միշտ յետ է մնացել և յետ է մնում։ Ա.հա՛ միայն այս մէկ պարագայն, որ ինչ էլ մէկ անգամ նոր տեսնէ կամ լսէ՝ կը ցանկանայ հասնել շտապելով կամ վազելով։ Լաւ բանին, բարի նպատակին

շուտով հասնելու իրքը՝ յայտնի ապացոյց է, որ նա ունի բարի բաղձանք յառաջադիմութեան։ Փոր, աշխատութիւն չընելոյելը դրաւական է, որ նա միայն բերանով կամ բանիւ չէ յառաջադիմութեան ցանկացող, այլ և սրտի մտօք։ Բայց նպատակին հասնելու համար բռնած ճանապարհները բնաւ այս խեղճ ազգին թոյլ տուած չեն, որ նորա ցանկութիւնը, յոյսը, ակնկալութիւնը, բաղձանքը մարմնանան կամ պատկաւորուին։

Սորա ես պատճառը ի՞նչ է։ Որովհետև ազգը հաւատում է ամեն խաբեբաներու խօսքին, և միայն խաբեբաներու խօսքին, և որովհետև միայն խաբեբաներուն է հաւատում, այս պատճառաւ ճշմարիտ ասողներուն չէ լսում և իւր ազգասէրներուն չէ ճանաչում և երևում է ապերախտ, մինչ որ բնաւ երախտամոռ չէ, այլ լոկ խաբուած է։

Սկսայն թող ասէ խաբեբան, «Ես մէկ ոսկի շղթայ կարող եմ շինել, որ ամենեքեանդ ծայրէն բռնէք ու երկինք երթաք». բարեսիրտ Հայերը իսկոյն կը հաւատան և այն շղթայի շինելու ոսկին քառապատիկ և հնգապատիկ առաւելութեամբ կուտան, և չեն-էլ հարցնիր՝ թէ ո՞ւր գնաց ոսկին, կամ հրաշափառ շղթան ո՞ւր մնաց. կար-

ծելով թէ՝ ոլովհետև ոսկին առատ առատ տուել են և խղճմտանքի ձայնը լռեցրել են, ալդէն ամեն պարտէն ազատուել են։ Եւ եթէ մէկը ասէ թէ «Մի՛ խաբուիք, դեռ և ս երկնքի կոթը բուսած չէ, որ այն շղթայի ծայրը նրամէն կապուի». Հայերը կըսկսին նրա վրայ ծուռ մուրկ անելու և ասելու թէ՝ ախտակրեալ հոգւով է խօսում։

Սէկ լաւ թէ մտածենք՝ յայտնապէս պիտի տեսնենք, որ այս վատաբաղդ դըրութիւնն-էլ այն բնական անժխտելի աղբիւրէն է առաջացած, որ գոլով պատճառ պատճառի՝ դառնում է համանդամայն և պատճառ պատճառելոյն։ Այնուհետև էլ ինչի՞ պիտի զարմանանք, եթէ տեսնենք որ խաբեբաները ազգի թոյլ երակը ճանաչելով՝ խաղացնում են իւրեանց կամեցողութեան համեմատ։ Մի թէ քի՞չ են խաբեբել մեզ Պարսիկք, Յոյնք, Հռոմայեցիք, Տաճիկք և Թաթարք։ Մի թէ քի՞չ են խաբել մեզ միաբանութիւն քարոզող խառնակիչները, մի՞ թէ դեռ այժմ ևս քի՞չ են խաբում ազգի աչքերը հանելով կուրացնող լուսաւորիչները։ Ինչի՞ցն է որ եթէ մէկ խաբեբայ կամենայ՝ կարող է ազգին այնպէս մոլորեցնել, որ սևին պիտակ ճանչնան և պիտակը սև, լաւը վատ տեսանեն

և վատը՝ լաւ։ Ահա՛ իսկապէս այս է պատ-
ճառը, որ ով առաւօտը կանուխ է վեր կե-
նում՝ ուզում է ազգին դաստիարակ դառ-
նալ. մէկ-էլ տեսնես որ՝ սկսել է նախնեաց
աշխատութիւնը ոտնակոխ անել, որ ինքը
արդէն ոչ Հանդիսանայ. աչքերը փակ, բե-
րանը բաց՝ դատողութիւն է անում Սար-
գիս Շնորհալուց և Ներսէս Լամբրոնացուց
ճառերու վրայ, չէ հաւնում Զաքարիա Կա-
թողիկոսին և հազար տեղ ունչ է անում
Նարեկին ու Սաղմոսին։ Այս ամենը ան-
ձին չափը չըճանաչելէն չէ՞. և այն ևս խե-
լապատակի անձկութենէն դուրս չէ գա՞ր։
Ափսոս չէ՞ ազգին, որ ճշմարիտ, քաջ և
անձնադիր հովիւներուն թողած՝ երթայ
պոչը տնկած վազող և պրոգրէս քարոզող
այծերու յետևէն, որ ոչ դեռ գիտեն՝ թէ
ի՞նչ է ազգը, կամ ի՞նչ է ազգին սիրելը
շալկել են իրանց տանը ձևած, կարած ու
կարկլատնած դրօշակը, որոյ վերայ խայտա-
խաղիւ խճփած երեք ու կէս կանգնեան բա-
ռերը՝ Ազգասիրութիւն, Ուսումնասիրու-
թիւն և Դաստիարակութիւն Հայոց, ոչ թէ
միայն Հաւերուն, այլև նոցա ձագերուն են
ծիծաղու թուլացնում։

Դա չըկարծէ՛ք թէ սոքա ամենեքեան խո-
րամանկութեամբ են անում։ Ո՛չ։ Շատերը

կան, որ չը.բուն ճանճ գոլով՝ համարում են իրանց արծիւ, և Մահմեդի նման կարողանալով առաջ իրանց կնանէքին, կամ կանայի դատողութեամբ ճոխացած մարդկերանց հաւատալով իրանց առաքելութիւնը, աջ ու ձախ չեն հարցնում. այլ միայն յառաջընթացութեան են թեւակոխում և զէպի երկինք անթեւ վազելու ճանփաներ ասլրեցնում՝ հեռու տեղումը կանգնած։

Լաo այս երկնքի կոթէն կապելու շըղթան է ահա այն գալրոյական կարգերով առաջադրած վարժաւունը, ուր պիտի աւանդուին այնքան թիւն, ութիւն ու բանութիւն, որոց մանկանց անհնար է միայն դասադրքերու թերթերը շրջել այնքան տարումը, որքան կարգադրած է ուսմանց ընթաց.քը աւարտելու համար, և ոչ թէ այն ուսմանց տեղեկանալ, հմտանալ և ժամանակին պիտանացու անօթ դառնալ, մինչ ամենեցուն .քաջայայտ է, որ լաւ է բնաւին ուսումն չունենալը, .քան թէ թերուս լինելը. որովհետև ուսումն չունեցողը գիտէ՝ որ չունի, վասնզոյ պահանջ-էլ չունի և իւր վիճակին հպատակ է. իսկ թերուսը շատ անգամ իրան-էլ է խաբում և ուրիշներուն խօ միշտ, և ոչ թէ միայնակն է, այլ խապտաւ կոյր գոլով՝ կոյրերի ա-

ռաջնորդ է հանդիսանում, որ երկուսն-էլ միասին անպիտանութեան խորխորատ ընկնին։

Եւ արդ՝ քանի որ կայ մեր ազգի մէջ այս անձնախաչութիւնը, այս դիւրահաւանութիւնը, այս տգայամտութիւնը, որով ուզում են ամեն բանի հաւանել և շուտ-էլ հաւանիլ, և խոչընդակները առաջուանէ չը նկատելով, միտք չը բերելով ճանապարհ են դուրս գալիս, և երբ ճակատները քարի է դիպչում՝ լաւէն ու վատէն միօրինակ են խառնում, խրատում ու փախչում և էլի ու էլի խաբեբաներուն են դրկում, էլի մեծ, լայն, պայծառ, փայլուն, շողշողուն, պրպղուն գաղափարներուն են զմայլում, և անգիտակցաբար կամենալով բոլոր ասածներըս արդեամբ իրանց վերայ ստուգելով՝ իրանց ուղեղի կշիռը և խելապատակի քանակը իմացուցանել, այսպէս ասողներուն՝ անօրինակ ամարդութեամբ ազգի դատաճան են առադրում և իրանց քաջալայել մականունները նրանց են ընծայում, և նոր ազգի ոխերիմ և անքուն՝ մաքիաւելեական սկզբամբ ստոդրուած թշնամեաց քաջալաուշաճ, բարեդէպ հանդամանք են ընձեռում ազգի գլխին միաբանութեան և լուսաւորութեան «գայլի շարականներ» կար-

դալով՝ համ ծաղը ու ծանակ անել, համ երախտապարտ ճանաչեցնել ազգին, և չեն կամենում փոքր ինչ իրանց սովորականէն յետս նահանջել . . . մեր ազգային յառաջադիմութիւնը պիտի երկու ոտքի վրայ՝ կաղայ. խնդճ ազգն-էլ Գիտցինէսի նըման, որ ուզում էր բազմութեան թէատրոնէն դուրս գեղանելու միջոցը մըտանել ներս և միայն յետ յետ էր տարվում, պիտի մնայ նոյն յետադիմութեան մէջ. որովհետև ով որ առաջ չէ գնում՝ նա միշտ դէպի յետ է վազում։

Այնայն այս-էլ պիտի լաւ հասկացուի, որ մենք բնաւ չունինք այն կամքը և այն սովորութիւնը, որ իշխան կամակորութեամբ ասենք Գիտցուոյի հետ «զոր ինչ գրեցի՝ գրեցիս» և չընկամենանք մեր գաղափարներէն ձեռք վերցնել։ Ամեն մարդ իւր համոզմանց տէրն է և ոչ ծառայ, և մտերմութեամբ պիտի հպատակի այն համոզման, որ անհերքելի փաստերով արդէն դառել է հասարակաց նուիրական ստացուած և բաժին։ Ուրեմն եթէ այնպիսի պրոգամմա ևս տեսանենք, որ Նոր-Նախիջևանին քան զայս աւելի վայելուչ և օգտաբեր երևի և կարողանայ մեզ համոզել նորա պիտանաւորութիւնը, յարմարութիւնը և հնարաւորու-

թիւնը, թէ և հազար փորձերով ու փաստերով համոզուած լինինք, այսու ամենայնիւ պատրաստ ենք խակոյն յօժարիլ և հնազանդիլ. որովհետև մեր ձկտումն մեր առաջարկութեան պաշտել տալը չէ, այլ մեր խղճալի համազգեաց ողորմելի մանկանց օգուտն է, և մենք շատ մեծ ցանկութիւն էլ չունինք, որ մեզ էլ յարմարի այն առած թէ «Խրատանչիւր ոք սիրէ զիւր կարծիս, որպէս զիւր ծնունդս». մանաւանդ որ այսպիսի առարկաների համար գլուխը հարուածներու տակ դնելը և այլոց ուշադրութիւնը միջահատ կտրելը համարում ենք մէկ նորատեսիլ «իշամարտիրոսութիւն»:

Այն-էլ մոռանալ չէ արժան, որ մէկ անգամ ինչ պայման ունի Նոր-Նախիջևանայ դրութիւնը, վիճակը, այն պայմանը չունի ոչ Երևան, ոչ Շուշի և ոչ Թիֆլիզ: Այս երեք քաղաքի տեղական հանգամանքները բոլորովին ուրիշ թէութիւններ են պահանջում: Երևանը Արարատեան դաշտի և նորա լուսաւորութեան կենտրոնն է. նորա լեզուն, նորա արտաբերութիւնը և էջմիածնին մօտիկ լինելը դնում է նրան խստագոյն մէկ ուրիշ ճանապարհի վրայ: Շուշին այն դաշտերու կենտրոնն է, ուր Հայութեան ոգին դեռ չէ հպատակել ազգատեցութեան

եկամուտ վնասաբեր ազդեցութեան։ Ընդ հակառակն, Թիֆլիզ մինչև այսօր պահած ունի իւր մայրաքաղաք լինելու ապացոյցները և Հայկական բարբառով եւրոպավայել դաղափարներ արտայայտելոյ չէ ուրանում կենցաղակրթութեան վարթառնութիւնդամեայ երախտապարդև ազդեցութիւնը։ Այս երեք քաղաքի վրայ պիտի որիշ որիշ տեսութիւն ունենալ. որովհետև այս երեք քաղաքներն են այժմ, որոյ վերայ կարող է Հայաստանի արևելքը դնել այսուհետև իւր լուսաւորութեան և յառաջադիմութեան յոյսն ու ակնկալութիւնը։ Նոցա ուղղությունը այնքան նեղ չէ, ինչպէս Նոր-Նախիջևանինը. նոցա հնարները, միջոցները և պարագաները այնքան կոպարարիակ չեն, ինչպէս այն փոքրիկ քաղաքինը, ուր հաղիւ թէ կան քսան հաղար հոգի մերաղնեայք։ Բայց այսու ամենայնիւ դպրոցական կրթութեան պրոգրամման, Լատին և Յոյն հընութիւնը նոցա ոչ աշխարհականներուն է կարող լինել օգտաբեր և պիտանացու գործնական կենաց և ոչ հոգևորականներին. նոցա-էլ պրոգրամման պիտի յօրինուած լինի համեմատ տեղեաց և հանգամանաց և ժամանակի յարմարած նոցա ապագայ աւելացները կամ պակասեցները։

ԶԵՐՔ։